ԱՂՈԹԱԳՐՔԵՐ - Ա

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳ
ՎԱՐԴԱՊԵՏ

ՀՐԱՄԱՆԱՒ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՂՈԹԱԳՐՔԵՐ - Ա

ԱՂՈԹԱՄԱՏՈՒՅՑ

ՀՈՎԱՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2007

ՀՏԴ
ԳՄԴ
Հ –

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳ
Հ – Աղոթամատույց: Աշխ. թրգմ.՝ Ա. Մադոյանի: - Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2007.- 220 էջ:

ԳՄԴ 7

ISBN
© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2007 թ.

ԽՈՍՔ ԱՍՏԾՈ ԵՐԱՆԵԼԻ ԱՅՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳԻ ՄԱՍԻՆ

Երկնաքաղաքացու վարքով ապրելուց հետո ճշմարտության պատկերը և օրինավոր կարգերի տիպարը՝ երիցս երանելի Հովհաննես Վարդապետը (Սարկավագ մականունով), բարվոք կյանքի ճանապարհի վերջնակետին և ավարտին հասավ ՇՀԸ (1129) թվականին և պատվով հանգստյան գերեզման դրվեց բոլոր սրբերի հետ:

Բայց պարտուպատշաճ է կարճառոտ գրել նրա վարքը և ծանուցել մեր աղքատ մտքով և սուղ խոսքերով, որպեսզի բարու նախանձավորներդ օրինակ առնեք նրանից և նորոգվեք նրա հոգու արեգակնափայլ, գործնական և արդյունարար ճառագայթներից:

Նա Փառիսոս գավառից էր: Ինչպես սուրբ Սամուելը, մանկության օրերից ու խանձարուրից նվիրված էր Աստծուն և կուսությանը, քահանաների արյունից և արգանդից էր՝ սնված և դաստիարակված իր սրբասնունդ քեռու մոտ՝ Հաղբատ վանքում:

Սկզբում կրթվելու տրվեց հոգևոր երաժշտական ուսման մեջ, ապա երբ երևաց նրա մեջ ծածկված մեծ գանձը, քեռուց ավանդվեց և հանձնվեց Ուռճացի վարդապետին: Նա մանկուց անհավասարություն ցույց տվեց իր հասակակիցների նկատմամբ և տարիքի բո-

լոր փոփոխությունների ժամանակ գերազանցեց նրանց ընտիր առաջադիմությամբ՝ հեռու լինելով զվարճալի զբաղումներից և տղայական վայրահած խաղերից, մարդու արտաքին կարիքները օգտակար դարձնելով և տնտեսաբար հարդարելով ի պիտանություն ներքին մաքրության:

Վայրաքարշ և երկրային ամեն բանի մնաս բարյավ ասելով՝ վառվեց ողջախոհության սիրով: Նրա քիմքում քաղցրացան և համեղացան իմաստության խոկումն ու սրբության սերը: Եվ ոտնահարելով որովայնի նախկին բռնությունը՝ սակավ հացով բավականացավ:

Մանուկ հասակում բազում օրեր առանձնանալով լեռների ծերպերում՝ կարդում և կրթվում էր: Եվ քիչ-քիչ առաջ գալով՝ նստում էր վարդապետների ոտքերի մոտ և նրանցից ստանում մեկնություններ և խորիմաստ առակներ:

Եվ շատ սիրուց և ըղձանքից ութ օր գաղտնի փակվեց այն քարայրում, որտեղ կային գրքերի արկղեր, և պարարտացրեց իր անձը հոգևոր կերակուրների խորտիկներով, բազմատեսակ և համադամ կերակուրներով, որ գանձված էին այնտեղ:

Մանկության այն օրերից միչև վախճանը նա երբեք չսայթաքեցրեց հոգու ուշադրությունը ընթերցման նպատակից՝ ուսանելու և ուսուցանելու, գրելու և ընթերցելու, հսկելու և աղոթելու, օր ու գիշեր՝ հեռու բոլոր զբաղումներից և վայրաքարշ իրերից: Բարեբարո էր, քաղցրահայաց և զվարթադեմ, պարկեշտագնաց և համեղախոս, գթած՝ մեղանչողների հանդեպ և իմաստուն բժիշկ՝ ծանրաբեռնվածների համար: Այնչափ հռչակվեց բարի գործերով, որ մինչև իսկ հեռուներից փութալով գալիս էին՝ սպեղանի առնելու յուրաքանչյուր ախտալի վերքի համար:

Իսկ իմաստության գանձի վաճառականներն ու տենչացողները գալիս, դադար էին առնում համեղախոս երանելի իմաստունի ոտքերի մոտ և լցնում իրենց մտքերի քսակն՝ ըստ չափի մեծության: Եվ վերադառնում էին ցնծալով, բարի վաստակով և լուսատու ակնեղեններով ու գանձերով: Եվ նախնիների բոլոր գիտությունները, որ տգետների, ծուլացողների և մտքով խավարածների կողմից ծածկվելով՝ աղավաղվեցին, նսեմացան ու խամրեցին, նրա բազմաշխատ երկերով ու մտքի արագահասությամբ զարդարվեցին, և ցնծացին կրթասերների և ուսումնասերների հոգիները:

Խոսքի և գործի, տեսության և արտաբերության, գրելու և ընթերցելու, պատմագրության և վարդապետական վերլուծության, մարգարեականի և առաքելականի բոլոր մասերի մեջ ավելի կատարյալ գտնվեց, քան նրանք, ովքեր միայն մի գործի կամ արդյունքի մեջ համբավ ունեին:

Եվ նրա որովայնից բխող գետերը ջրեցին Տերունական Տունը և Աստծու Հարկի նորատունկ մանուկներին: Եվ ի՞նչ պետք է երկարացնել խոսքիս տողերը, երբ այս ամենի հայտնի վկայություններն են նրա ճառերը, որ լցրին Հայաստան աշխարհն՝ ըստ յուրաքանչյուր պետքի և ախորժակի: Նրա արմատից ու շա-

ռավղից ելան բազմապտուղ ոստեր՝ ուսուցիչներ և լուսավոր հոգիներ, անմոլար աստղեր և լուսաճաճանչ ջահեր, և աշխարհը լցրին կենաց խոսքով և իմաստալից, տրամախոհ, ներհունական գիտելիքներով, ինչպես աշակերտներից առաջինը՝ այն Երեմիան, անդրանիկ հոգևոր երկունքն ու սրբության ծնունդը, որը, ինչպես իմաստուն մեղու հավաքելով իմացության բազմերանգ, բազմահամ և հոտավետ ծաղիկներ, բերեց իր քաղաքը՝ քաղաքամայր Անի, ուր սնվել էր, և լիացրեց տունը փարթամությամբ՝ առատապես և անանխանձ բաշխելով հավատքի տաղանդը՝ տասնապատիկ շահ բերող մասը:

Վարդապետների վարդապետը (Հովհաննեսը) Սուրբ Հոգուց մարգարեության և սքանչելագործության պարգևներ ուներ, որոնց մասին շատերն են վկայում և որոնցից մի քանիսն այստեղ կծանուցենք:

Նախ այս՝ միայնավոր աղոթքի ժամանակ Սուրբ Հոգու լույսը բորբոքված կրակի պես փայլում էր նրա շուրջը, ինչը բազում անգամ տեսել էին նրա մոտ եղողները:

Եվ երկրորդ՝ անառակ վարք ունեցող մեկը լրբաբար եկեղեցի էր մտնում և փառամոլ կամքով, աներկյուղ ու լրբենի դեմքով անարյուն պատարագ մատուցում:Երկյուղած այրերը բազում անգամ խնդրեցին նրան (Հովհաննեսին) սանձել անօրենի հանդգնագույն արարքը և եկեղեցին ազատել նրանից: Իսկ Աստծու սուրբն, ըստ իր իմաստության, սարսափեցնող խոսք ասաց այն Խորհրդի վերաբերյալ, սակայն նա

չլսեց, մինչև որ սուրբն առանձին ասաց՝ հայտնելով ծածուկը: Դրան էլ ունկնդիր չեղավ: Եվ որովհետև հանդգնաբար ոտնակոխ էր անում հրամանի խոսքը, սուրբը Եկեղեցու առաջ հայտնապես խրատեց նրան, մինչև որ լռելով դադարեց: Ապա մի օր նկատեց, որ վարդապետը, դուրս գալով քարայրից, նստում է վանքի տաղավարում: Եվ խոր գիշերին, երբ Աստծու այրը դուրս ելավ քարայրից, ուր ննջում էր, մերկացրած սուսերով հարձակվեց նրա վրա և, սուրը նրա կոկորդին դնելով, կամեցավ գլխատել նրան: Սուրբը հեզաբար հարցրեց.

- Ո՞վ ես դու և ինչու՞ ես ուզում սպանել ինձ:

Նա պատասխանեց.

- Ես Բարսեղն եմ, որ բազմության առաջ ամբաստանվեցի քո կողմից: Հիմա ուզում եմ սպանել քեզ, քանզի արգելեցիր ինձ պատարագել:

Սուրբը հանդարտաբար պատասխանեց.

- Որդյա՛կ, մի՛ արա այդ: Եթե հրապարակավ հանդիմանեցի, հրապարակավ կբժշկեմ, - և արձակեց նրան՝ ուխտելով անել ասածը:

Այսպես սուրբը, ազատվելով անսուրբ պիղծից, փրկվեց ապանվելուց: Եվ ոչ ոքի չհայտնեց գաղտնիքը: Իսկ քարոզի ժամանակ, ատյանում կանգնած, քավություն տվեց նրան՝ ասելով.

- Եղբայրնե՛ր, ոմանք Բարսեղին ուժով ամբաստանեցին, և ես արգելեցի նրան եկեղեցի մտնել: Արդ, երբ քննեցի, տեսա, որ սուտ էր ամբաստանությունը: Թո՛ւյլ տվեք նրան և Քրիստոսին մերձենալ միմյանց:

Երբ երկյուղածներն ու ընտիր այրերը լսեցին այս, իրենց մտքում պարսավեցին սրբին, քանզի տեղյակ չէին ծածուկ խորհրդին: Եվ երբ արձակվեցին առավոտյան ժամերգությունից, շրջապատելով արդար այրին՝ հանդիմանեցին քավելու համար: Իսկ նա զայրանալով բանալ տվեց եկեղեցու դուռը և, գոչելով դեպի Քրիտոսի Նշանը, ասաց.

- Ո՛վ քրիստոսակիր սուրբ Նշան, ես չկամեցա խոզամարտիրոս լինել: Դո՛ւ դատիր քո դատաստանը:

Եվ գնացին իրենց տները: Իսկ այն հանդուգնը այլ արժանավորների հետ պատրաստվեց պատարագ մատուցելու և նշխար առավ: Երբ կոչնակ զարկեցին և ժողովվեցին, ատյան մտավ, որպեսզի պատարագի: Երբ Աստծու Հարկի դուռը բացվեց, սուրբ վարդապետը հայում էր այն Նշանին և անմռունչ պաղատում, ինչպես հնում՝ Աննան: Իսկ երբ այն մոլեգնած այրը նվիրական հացը ձեռքին կամեցավ մտնել խորան, մոլուքյան ոգին վեր բարձրացրեց նրան ինչպես օդով լի պարկ, զարկեց բեմի առջև և խայտառակաբար լլկեց: Այդ հրաշքից ամենքը ցնցվեցին և փառք տվեցին Աստծուն, որ կատարում է Իրենից երկյուղածների կամքը և լսում նրանց աղոթքները:

Իսկ Աստծո սուրբը՝ երանելի վարդապետը, փառավորելով Քրիստոսին, հրամայեց դուրս հանել գարշելիին սուրբ տեղերից և գոհության պատարագ մատուցել: Իսկ անմիտ այրը, իր վրա չար հարվածը կրելով, 21 տարի ապրեց դողալով և ողորմելի կյանքով: Եվ Ձեթ անունով մի կրոնավոր այդքան տարի սպասավորում էր անսուրբին. հաց էր դնում բերանը և շալակած եկեղեցուց տանում: Իսկ նրա վախճանը առավել չար եղավ:

Բազում են Աստծու այրի գործած սքանչելիքները, որոնք հապաղեցի գրել և լսողներին խռովեցնել, մանավանդ որ չարացող է այս ազգը և պարսավող:

Մի օր նա տեսավ կրոնավորներից մեկին, որ գալիս էր իր մոտ՝ անապատ՝ զղջումի և խոստովանության: Նա հայտնապես տեսավ, որ, ինչպես գրաստի վրա, նրա ուսին հեծել է սատանան: Երբ կրոնավորը մոտենում էր խցի դռանը, սատանան հետ դարձրեց նրան, մերկ սուսերով, որ ձեռքին ուներ, բռնադատեց և, ինչպես էշի վազեցնելով, սաստկապես քշեց՝ հետ դարձնելով այնտեղից: Այս տեսնելով՝ սուրբն աշակերտին արձակեց և բռնաբար նրան բերել տվեց իր մոտ: Եվ հարցրեց.

Ինչո՞ւ երբ մոտ եկար, իսկույն հետ դարձար:

Նա պատասխանեց.

- Չգիտեմ: Զղջալով գալիս էի քո սուրբ ոտքը, երբ հանկարծ միտքս ընկավ մոլեկան տարփուհու սերը և որոշեցի նրա մոտ գնալ:

Իսկ Աստծու այրը պատմեց նրան, ինչ որ տեսել էր, և աղոթելով՝ ազատեց:

Այս հավաստի պատմությունը պատմեց այն կրոնավորի՝ երիցս երանելի, սքանչելանշան վարդապետ Հովհաննես Սարկավագի աշակերտը, և ես գրի առա:

Երիցս երանելի երջանկահիշատակ վարդապետ Հովհաննես Սարկավագի մասին տեսնողներից ոմանք

պատմեցին, թե մինչ գիշերով իր խցում սկսում էր աղոթել, լույսի և հրի ճառագայթը խցի լուսանցույցից առատորեն դուրս էր հեղվում:

Եվ այսպես, բարվոք ապրելով ժիր մշակությամբ, հեռացավ մեզնից՝ ստանալու հավերժական ժառանգության վարձը: Եվ դրվեց Հաղբատի սուրբ հանգստարանում, որտեղ սնվել ու կրթվել էր ի փառս Աստծու:

ԱՂԱԻԹԱՄԱՏՈՅՑ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ԱՂՈԹԱՄԱՏՈՒՅՑ

ՀՈՎԱՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Ա.
ԱՌ ԱՍՏՈՒԱԾ ՀԱՅՐ

ԱՐԱՐԻՉ իմանալեաց և զգալեաց բնութեանց, Հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով և ի ձեռն որոյ զամենայն գոյացուցեալ յոչէից հաստատեցեր գեղեցկապէս. վասն զի կամաց և հրամանի ստեղծողիդ ինչ ոչ ընդդիմանայ. և նմանապէս հնարաւոր է քեզ անհասանելի մտաց մերոց գործ բարւոք և մեծ. որպէս վկայ են ի ձեռն աչաց արարածք ամենայն նիւթականք և երեւելիք. որոց վախճան և կատարած զմարդն հաճեցար ստեղծանել տուեալ նմա պատիւ բազմագունակ և զարմանալի. որոց առաջին և մեծ՝ լինել և անուանել պատկեր անճառելոյ բնութեանդ: Եւ ապա զնախաստեղծս քան զնա զգալի բնութիւնս ի հարկի ծառայութեան կացուցանելով նմա, հաւատալով ի փրկութեան նմա գրգանս զդրախտին գեղեցկութիւն. յորում զազատութիւն և զինքնիշխանութիւն անձին նորա յայտնապէս ցուցանել կամելով, աւանդեցեր փոքր ինչ նմա պատուիրան իբր առհաւատաչեալ մեծամեծաց ի բարերար կամս քո հանդերձելոց այնմ նմա յաղթանակաց՝ յետ հանդիսին առաքինութեան:

Ա.
ՀԱՅՐ ԱՍՏԾՈՒՆ

Ի մանալի և զգալի գոյերի Արարիչ, Հայր մեր Տեր Հիսուսի Քրիստոսի, որով և որի միջոցով ամեն ինչ գոյացրիր ոչնչից, հաստատեցիր գեղեցկապես, որովհետև Ստեղծողիդ կամքին ու հրամանին չի ընդդիմանում ոչինչ, ու նաև քեզ է հնարավոր մեր մտքին անհասանելի բարի ու մեծ գործ, ինչպես վկայում են նյութական ու երևելի բոլոր արարածները՝ տեսնելով, որոնց իբրև ավարտ ու կատարելություն հաճեցիր ստեղծել մարդուն՝ տալով նրան բազմատեսակ ու զարմանալի պատիվ, որով՝ առաջին և մեծ լինել, անվանվել անճառելի բնությանդ պատկեր: Ապա իրենից առաջ ստեղծված զգայող բնությունը տալով նրան ծառայության՝ փափկության համար նրան թողնելով գեղեցկությունը դրախտի, որտեղ ուզում էիր նրան հայտնապես ցույց տալ ազատությունն ու ինքնիշխանությունը, նրան ավանդեցիր մի փոքրիկ պատվիրան, իբրև առհավատչյա քո բարի կամքով նրան սպասվող մեծամեծ հաղթանակների՝ առաքինության հանդեսից հետո: Իսկ նա նա-

Իսկ նորա նախապատուեալ զառ կինն կամակցութիւն օձին հաւանեցելոյ, և որ ի նմայն և նովաւ խօսեցաւ, զաստուածային հրամանս քո կենդանարարս և սուրբս որպէս զանօգտաբերս և անշահս կամ ոչ ճշմարիտ՝ սպուժեալ քամահէր. և փոխանակ կենաց տարաժամ ճաշակմամբն իբրեւ զդեղ մահու զպտուղն ընտրեալ ընդունէր: Ի վերայ այսր ամենայնի ոչ միայն խոստովան ոչ լինէր ի հարցանել անոխակալիդ, այլ և զքեզ բաղբաղէր գոլ պատճառ ստահակութեանն՝ զկնոջն տուր քո նմա յառաջ բերեալ, և զանիծիցն վճիռ բռնադատեալ զքաղցր և զհաշտ բնութեան քո կամսդ՝ ի գլուխ և յարարածս վասն ինքեան՝ ի քէն եղեալս ընդունէր: Որոյ ոչ երկրորդ ինչ և ես, մանաւանդ թէ յոյժ առաջին ի չարութեան. վասն զի ոչ զմիով եւեթ և դուզնաքեաւ անցի պատուիրանաւ ի մոռացմանէ կամ ի հրապուրանաց, այլ զբովանդակն անտես արարեալ կամակար մտօք զհրամանս քո մեծամեծս և բազմաշահս, մատնեցի ի կորուստ յաւիտենական զանձն: Եւ ոչ ունիմ համարձակութիւն բանալ զբերան և ժտել առաջի քո, և խնդրել զքեզ յամենայն անձնէ և ի զօրութեան իւրեանց: Վստահանամ անկանել առաջի քո. դու և առանց զղջման ուրուք զանճառելի մարդասիրութեան քո հոսանս զեղեալ ծաւալեցուցեր

խընտրեց կամակցել օձին հավանած կնոջը: Իսկ օձը նրան համոզեց, թե քո աստվածային կենդանարար և սուրբ հրամանները անօգուտ են ու անշահ կամ ոչ ճշմարիտ, անհոգ քամահրելով և կյանքի փոխարեն՝ տարաժամ ճաշակմամբ իբրև թույն ընտրելով՝ ընդունեց պտուղը:

Այս ամենից հետո ոչ միայն չէր խոստովանում, Անոխակալիդ հարցին ի պատասխան, այլև քեզ էր պատճառ բռնում [իր] ստահակությանը, իր համար կնոջն ստեղծելը առաջ բերելով, և քաղցր ու հաշտ քո բնության կամքով ու իր պատճառով իր և արարածներիս պարտադրված անեծքի վճիռը քեզնով էր պայմանավորում: Ես նույնպես պակաս չէի, ավելին, առաջիններից եմ չարությամբ, որովհետև մոռացումից թե հրապուրված՝ ոչ թե մեկ ու չնչին պատվիրանից չեղվեցի, այլ կամովին անտեսեցի քո բոլոր մեծամեծ ու բազմօգուտ հրամանները, ինձ մատնեցի հավիտենական կորստի: Եվ համարձակություն չունեմ բերանս բանալու քո առջև, թախանձելու, խնդրելու քեզ բոլորի համար՝ զորացնելու նրանց: Համարձակվում եմ ընկնել քո առջև, դու առանց մեկի զղջմանը, քո անճառելի մարդասիրության հեղեղը ծավալեցիր մարդ-

յորդիս մարդկան: Քանզի այնպէս սիրեցեր զաշխարհս մինչեւ զՈրդիդ քո միածին ետուր. որոյ եկեալ քաղցրութեամբ և ինքնիշխանաբար ի լրումն բարերար կամաց քոց աղաղակէր ասելով. Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ:

Եւ արդ բարձրացան քան զգլուխ իմ, մանաւանդ եթէ քան զերկինս եւս անօրէնութիւնք իմ, և քան զամենայն ծանրութիւն բեռանց ի վերայ իմ ծանրացաւ. թեթեւացո տէր ողորմութեամբ քով, և շնորհեա հանգիստ ի տաժանական խղճէհարեալ և աշխատեալ մտաց իմոց. զխաւար մեղաց և անօրէնութեան ի չարէն սերմանեալ յիս՝ աստուածային ճառագայթիւք շնորհաց և մարդասիրութեան քո՝ վատնեալ մաշեա յոգւոյ իմմէ. զխստութիւն սրտի իմոյ ջերմութեամբ սիրոյ քո դնելով յիս կակղացո, և զայլանդակ խորհրդոցն չարաչար բուսեալ փշոցն անտառս խլեա արմատաքի յանձնէ իմմէ. զսուրբ և զերկնային սերմանս զոր ի ձեռն մարմնացելոյ քո Բանիդ յաշխարհիս այսորիկ անդաստանի սերմանեցեր, արդիւնացուցեալ աճեցո յոգւոջ և ի մարմնի իմում: Զչարին և որք ընդ նովաւ ապստամբ զօրութեանցն և ի վերայ իմ թռիչս կորստաբերս ի բաց հալածեա յինէն, և արժանի արա զիս յայսմ հետէ տալ պտուղ քեզ բազ-

կանց որդիների վրա: Որովհետև աշխարհս այնքան սիրեցիր, որ քո Միածին Որդուն տվեցիր: Նա եկավ քաղցրությամբ ու իշխանաբար, ի լրումն քո բարերար կամքի և աղաղակում էր՝ ասելով. «Եկեք ինձ մոտ, բոլոր հոգնածներդ ու ծանրաբեռնվածներդ, և ես կհանգստացնեմ ձեզ»:

Եվ արդ, իմ անօրինությունները բարձրացան իմ գլխից, և նույնիսկ երկնքից վեր, և բեռների ամբողջ ծանրությունը բարդվեց ինձ վրա: Տե՛ր, թեթևացրու քո ողորմությամբ և հանգիստ շնորհիր տաժանական և խիղճս տանջող հոգնած մտքիցս. իմ մեջ չարի սերմանած մեղքի և անօրինության խավարը քո շնորհների աստվածային ճառագայթներով ու մարդասիրությամբ վատնելով, մաշիր իմ հոգուց, իմ սրտի խստությունը քո սիրո ջերմությամբ կակղացրու և այլանդակ մտքերի չարաչար բուսած փշերի անտառները արմատախիլ արա իմ միջից. սուրբ ու երկնային սերմերը, որ քո մարմնացյալ Բանի միջոցով այս աշխարհիս անդաստանում սերմանեցիր, արդյունավորելով աճեցրու իմ հոգու և մարմնի մեջ:

Չարի ու նրա հետ եղած ապստամբ ուժերի՝ ինձ վրա կատարվող կորստաբեր թռիչքները

մապատիկ զոր սիրեսն և խնդրես ի փրկութիւն անձին իմոյ: Մի՛ դարձուցաներ յերեսս քո ի խնդրուածոց իմոց Աստուած իմ. յիշեա զյաւիտենից ողորմութիւն քո և զգթութիւն, և լուր պաղատանաց անկեալ և կործանեալ ծառայի քո: Տուր զամենակարող ձեռն քո և կանգնեա զիս, վասն զի գործ ձեռաց քոց եմ. մի յիշեսցին անօրէնութիւնք իմ առաջի քո մարդասէր և անոխակալ. որ ոչդ կամիս զմահ մեղաւորի որպէս զդառնալ և կեալ. մի թողցես զիս մնալ յայսմիկ մեռելութեամբ. և որ ընկալար ողջութեամբ և համբուրիր զստահակեալ որդին բնաւորական ի քեզ անճառելեաւ քաղցրութեամբդ և սիրով՝ ընթացեալ ընդ առաջ, մի՛ և զիս մերժեր յայդպիսոյ կենդանարար և փափագելի գթութենէդ. զի և ես չքաւորեալ կողոպտեցայ ի հայրենի և յաստուածատուր ճոխութենէն, չարապէս յաշխարհի և անհանճարաբար շրջելով ընդ կամակիցս այնպիսեաց խառնակ և անմաքուր վարուց, և յոյժ պատկառելով զնոյն արձակեմ բարբառ, մեծապէս զանձն դատապարտելով և ստգտանելով, ի քոյդ ապաւինեալ ամենառատ մարդասիրութիւն և անպատմելի հեզութիւն. Հայր, մեղայ յերկինս և առաջի քոյ, և ոչ եւս եմ արժանի կոչիլ որդի քո. զի թէպէտ և մեծամեծ են բազմութիւնք մեղացն որովք մեկնեալ հեռա-

հեռացրու ինձնից և արժանացրու ինձ այսուհետև քեզ տալու բազմապատիկ պտուղ, որ սիրում և փնտրում ես՝ ի փրկություն անձիս: Աստված իմ, մի՛ շրջիր քո դեմքը իմ խնդրանքներից, հիշի՛ր քո հավիտենական ողորմությունն ու գթությունը, լսիր քո անկյալ ու կործանված ծառայի պաղատանքը: Մեկնիր քո ամենակարող ձեռքն ու կանգնեցրո՛ւ ինձ, չէ՛ որ քո ձեռքի գործն եմ, թող չհիշվեն քո հանդեպ կատարած անօրինություններս, մարդասե՛ր և անոխակալ, որ մահ չես կամենում մեղավորին, ինչպես դառնալն ու լինելը, թույլ մի՛ տուր ինձ մնալ այս մեռելությամբ, որ ողջույնով ու համբույրով ընդունեցիր անառակ որդուն՝ քեզ հատուկ անճառելի քաղցրությամբ ու սիրով գնալով ընդառաջ, ինձ ևս մի՛ մերժիր այդպիսի կենդանարար ու փափագելի քո գթությունից, քանի որ ես նույնպես կողոպտվելով սնանկացա հայրենի և աստվածատուր ճոխությունից՝ չարությամբ ու անհանճար շրջելով աշխարհում այնպիսի խառնակ ու անմաքուր վարքի կամակիցների հետ, և խիստ պատկառելով նույնն եմ բարբառում՝ մեծապես ինձ դատապարտելով ու պարսավելով, ապավինած քո ամենառատ մարդասիրությանն ու անպատմելի հեզությանը:

ցայ ի քէն, այլ առ անչափելի մարդասիրութիւնդ լայնատարած խորովք իբրեւ զոչինչ երեւին. յոր յուսացեալ ստուգապէս իշխեցի անուանել և կարդալ զքեզ: Տուր ինձ ի լիախորտիկ սեղանոյ քումմէ փշրանս սովամահ տանջանօք ի կորուստ մերձեցելումս և բնաւ կորուսելումս. զմերկութիւն նշաւակութեան ծանականաց իմոց ծածկեա ողորմութեան քո պատմուճանաւ. զխածատուածս գազանին բժշկեա և ամրացո, զի մի գտանելով մերկ՝ որ սպասէն հանապազ՝ արկանիցէ զժանիսն և գտանիցիմ միւսանգամ լքեալ, երթալ ի ճանապարհս քո ուղիղս: Նորոգեա յիս զպատկերին քաջաշնորհութիւն՝ զոր ժանդացուցի վատթարագործութեանն տղմով. մերձեցիր ի հեռացեալս, ծարաւի եմ աստուածային ողջունի բերանոյ քոյ: Մի դառնալով ի բաց ըստ իրաւանց անբժշկելի զիս թողուցուս. ի գիւտ կորուսելոյս փութա մարդասէր, որպէս զի ուրախ լիցիս և խնդացուսցես առ հասարակ զքոյսն. կենաց և ամենայն բարւոյ իսկականի բնութիւնդ՝ զմեռելութիւն անձին իմոյ փոփոխեա ի կենդանութիւն: Եթէ յանգոյութենէ ածեր դիւրաւ ի գոյութիւն, նորոգել զնոյնս դժուարի՞ն իցէ քեզ. և եթէ մեծամեծաց և անբաւից բաւական եղեր տալ բարութեանց, զիա՞րդ ոչ զփոքրագոյնս, որ է և մեծ՝ շնորհես-

Հա՛յր, մեղա երկնքի և քո առջև, արժանի չեմ քո որդին կոչվելու, քանի որ թեև մեծամեծ են բաղում մեղքերս, որոնցով հեռացա քեզնից, բայց լայն մտքով [դրանք] ոչինչ են թվում անչափելի մարդասիրությանդ մոտ, որին հուսալով ստուգապես համարձակվեցի կոչել և դիմել քեզ: Քո լիախորտիկ սեղանից փշրանքներ տուր ինձ՝ սովամահ տանջանքով կորստյան հասածիս և ամբողջապես կորսվածիս, իմ նշավակության ծաղրելի մերկությունը ծածկիր քո ողորմության պատմուճանով, գազանի խածոտածները բուժիր և ամրացրու, որպեսզի մերկ գտնելով՝ հանապազ սպասողը ժանիքները չխրի և նորից լքվեմ քո ուղիղ ճանապարհը գնալուց: Նորոգիր իմ մեջ քաջաշնորհ պատկերը, որ վատթարագործության տիղմով ապականեցի, մոտեցիր հեռացածիս, ծարավի եմ քո բերանի աստվածային ողջույնին: [Թեպետ] իրավամբ, բայց մի՛ հեռացիր, ինձ թողնելով անբույժ, և փութա գտնելու կորուսյալիս, մարդասեր, որ ուրախ լինես և ուրախացնես բոլոր յուրայիններիդ:

Բնությունդ՝ կյանքի և իսկական բարիքների, իմ անձի մեռելությունը փոխի՛ր կենդանության: Եթե հեշտությամբ անգոյությունից գոյության փոխեցիր, նույնը կրկնելը դժվա՞ր

ցեւ. զառաւել գերազանցագոյնն ամենայն մեծամեծաց բարութեանց և զանյուսալին բաւականացար արարածոց, միանգամայն և ամենեցուն իսկ շնորհեցեր մարդկան զքոյդ համագոյ բան և միածին Որդի, մի ի նուազագունէն զրկեր զիս: Լոյծ զտոռուն մեղաց իմոց. խզեա զանօրէնութեան իմոյ կապանս. զծանրութիւն խոցոյ այսր շղթայիցս խորտակեա, ամենազօր. ի խաւարային բանտէ աստի ընդարձակութիւն և լոյս ծառայի քում շնորհեա. արա ընդ իս վասն անուան քում, թէպէտ և ես ընդ անօրէնս եդի զբաժին իմ: Հալածեա և զնիւթիչ կորստեանն իմոյ և զամենայն մեքենայս որոգայթից նորա հրամանաւ քով տապալեա. քան զի չիք բռնութիւնք դժնդակք որ կարիցէ կալ հակառակ ակնարկելոյ կամաց քոց. ի սաստէ քումմէ կորիցեն թշնամիք ծառայից քոց, և յահէ քումմէ հալածեսցին ոյք ատեանն զխոստովանողս աստուածութեան քոյ. սէր ճշմարտութեան քոյ տնկեալ արմատասցի յիս, և յոյս անիմանալի բարերարութեանց քոց զարթուսցէ զթմբրութիւն մտաց իմոց ի սուրբ հրամանաց քոց կատարումն. որպէս զի ծառայ քո լինել և անուանել ըստ ճշմարտութեանն արժանի եղէց, զպտուղ մեղացն՝ վասն որոյ այժմս զամօթի հարեալ եմ՝ կորուսանելով ի բաց. և զարդարութեանն քաջապտ-

է քեզ համար: Եվ եթե մեծամեծներին ու անկարոտներին բարություն տալու բավական եղար, ինչո՞ւ չչնորհես ավելի փոքրը, որ նաև մեծ է: Բոլոր մեծամեծ բարություններից առավել գերազանցը և անհուսալին արժանի տեսար արարածներին, և բոլոր մարդկանց շնորհեցիր քո համագոյ Բանին և Միածին Որդուն, մի՛ զրկիր ինձ նվազագույնից: Քանդի՛ր իմ մեղքերի ուռկանը, կտրի՛ր իմ անօրինության կապանքները, խորտակի՛ր այս խոցող շղթաների ծանրությունը, ամենազո՛ր, այս խավար բանտից ազատություն և լույս շնորհիր քո ծառային, վարվիր ինձ հետ հանուն քո անվան, թեպետ ես ևս իմ բաժինը դրի անօրենների հետ: Հալածի՛ր իմ կորուստը նյութողին և նրա որոգայթների բոլոր միջոցները տապալիր քո հրամանով, քանի որ չկան դժնդակ բռնություններ, որ կարենան հակառակվել քո կամքի ակնարկմանը. քո զայրույթից թող կորչեն քո ծառաների թշնամիները, և քո ահից հալածվեն աստվածությունդ խոստովանողներին ատողները. քո ճշմարտության սերը թող արմատակալի իմ մեջ, և քո անիմանալի բարությունների հույսը արթնացնի մտքիս թմրությունը՝ կատարելու քո սուրբ հրամանները, որպեսզի քո ծառան լինելու և

ղութիւն բնաւորապէս յոգւոջ և ի մարմնի իմում հաստատելով առոգմամբ արտասուաց քեւ ամենահիմաստդ մշակեալ, քեւ ամրացեալ յապականաչաց բարերարութեանն բերոյ, արժանի եղէց ընծայել այնպէս օրհնութիւն և պատիւ քեզ և միածնիդ քո Որդւոյ և Հոգւոյդ ելողի ի քէն. այժմ և միշտ և յաւիտեանս:

անվանվելու արժանի լինեմ ճշմարտապես. մեղքի պտուղը, որի համար այժմ ամոթահար եմ, կորցնելով հեռու վանեմ և, իմ հոգում և մարմնում հաստատելով քաջապտուղ արդարութիւնը՝ արցունք հեղելով, ամենիմաստ, քո ձեռքով մշակված, քեզնով ամրացած ապականիչների բարության բերմամբ՝ արժանի լինեմ՝ օրհնություն և պատիվ քեզ ընծայելու, նույնպես և Միածին Որդուդ և քեզնից բխած Հոգուդ այժմ և միշտ և հավիտյանս:

Բ.
ԱՂՕԹՔ ԶՂՋՄԱՆ ԱՌ ՀԱՅՐ

ՀԱՅՐ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որ զամենայն գոյացուցեր յանէից, զանմարմին և զանիմանալի բնութիւնս և զնիւթաւոր արարածս՝ ի ձեռն միածնի Որդւոյ քո համագոյակցի քեզ, և Հոգւովդ սրբով՝ որ ելանէ ի քէն անճառաբար և առանց հասանելոյ եղականի բնութեանս, զքո բերելով յինքեան ընդ Որդւոյ ճշմարտապէս նմանութիւն ըստ բնութեան: Աղաչեմ զքեզ, նայեա քաղցրութեամբ քով յանարժան ծառայս քո, և մի դարձուցաներ զերեսս քո ի պաղատանաց իմոց, թէպէտ և ես անառակեալ խոտորեցայ ի սուրբ ճանապարհաց քոց, և գործեցի զհակառակս պատուիրանաց քոց, զայրացուցանելով զանճառելի քաղցրութիւն երկայնմտութեան քո: Այլ դու ամենագութ և մարդասէր, ներեա և մի մտաներ ի դատաստան ընդ ծառայի քում. մի առներ համար անօրէնութեանց իմոց, և մի յիշեր զբազմութիւն զազրալի և զանազան չարեաց իմոց. այլ դարձ առ իս մեծաւ ողորմութեամբ քով, և շնորհեա ինձ հեռացելումս դառնալ առ քեզ. վասն զի քո է և առ ի քէն է ամենայնի փրկութիւն: Զեմ

Բ.
ԶՂՋՄԱՆ ԱՂՈԹՔ՝ ՀՈՐԸ

Ո՜ Տեր Հիսուս Քրիստոսի Հա՛յր, որ ոչնչից գոյացրիր ամեն ինչ, անմարմին և անիմանալի էութիւններ և նյութավոր արարածներ՝ քեզ համագոյակից քո Միածին Որդու միջոցով և Սուրբ Հոգովդ, որ ելնում է քեզնից անճառաբար և իմ եղական բնությունը անհասանելի է, իրենով և Որդիով բերելով քո նմանությունը՝ ըստ բնության: Աղաչում եմ քեզ, քո քաղցրությամբ նայիր ինձ՝ անարժան ծառայիդ, և մի՛ շրջիր քո դեմքը իմ պաղատանքից, թեպետ ես անառակությամբ շեղվեցի քո սուրբ ճամփաներից, գործեցի քո պատվիրաններին հակառակ՝ զայրացնելով քո ներողամտության անճառ քաղցրությունը: Բայց դո՛ւ, ամենագութ և մարդասեր, ներիր և դատաստանի մի՛ մտիր քո ծառայի հետ, մի՛ հաշվիր իմ անօրինությունները և մի՛ հիշիր իմ զազրելի և զանազան չարիքների բազմությունը, այլ մեծ ողորմությամբդ դարձիր ինձ և շնորհիր ինձ՝ հեռացածիս, դառնալ դեպի քեզ, քանի որ քոնն է և քեզանից է բոլորի փրկությունը: Անկարող եմ դառնալու իմ

բաւական դառնալ ի չարաչար սովորութեանց մեղաց իմոց, եթէ ոչ ողորմութիւն քո շարժեսցէ զիս. և ոչ զօրեմ յառնել ի գլորմանէ աստի ծանրութեան մեղաց իմոց, եթէ ոչ ամենազօր ձեռն քո կարկառեսցի օժանդակել ինձ: Ամաչեմ աղաչել զոր բարկացուցիդ, և երկնչիմ կալ առաջի քո՝ գիտելով զդատաստան անձին իմոյ և զչափ անչափութեան մեղաց իմոց. այլ վստահացուցանեն զիս յիշատակք խորոց անբաւելի մարդասիրութեան քո, և ժտել համարձակութիւն տայ ինձ անհասանելի խոնարհութիւն բարձրութեան քո: Վասն զի թէպէտ և մեծ են մեղք իմ, այլ յոյժ նուազ են քան զմարդասիրութիւնս քո. և թէպէտ և անհնարինք են անառակութիւնք իմ, այլ ոչ զօրեն անգութ զքեզ ցուցանել: Գիտեմ զի չեմ արժանի ողորմութեան քո, բայց դու և անարժանից սովոր ես ողորմել: Չեմ անտեղեակ անվճարական պարտեաց աղտելի վարուց իմոց, սակայն յոյս ամենառատ կամաց քոց յորդորէ զիս բողոքել զանձնէ առաջի քո:

Եւ արդ յո՞ դիմեցից բարերար, եթէ ոչ դու ողորմեսցիս. զո՞յր կոչեցից զանուն ի փրկութիւն , եթէ ոչ միայն կարողդ և մարդասէրդ ժամանեսցես: Մի պահեր ոխս անոխակալդ, մի բարկանար բնութիւնդ քաղցրութեան, մի արգելուր զշնորհս

մեղքերի չարաչար սովորութիւններից, եթե քո ողորմությունը չհասնի ինձ, և անկարող եմ բարձրանալու իմ ծանր մեղքերի գլորումից, եթե քո ամենազոր ձեռքը չերկարի՝ օգնելու ինձ:

Ամաչում եմ աղաչել քեզ, որ բարկացրել եմ, երկնչում եմ քո առջև լինելուց՝ գիտակցելով իմ դատաստանը և իմ մեղքերի անչափությունը, բայց ինձ վստահություն են ներշնչում քո անբավ ու խոր մարդասիրության հիշատակները, և քո բարձրության խոնարհությունը համարձակություն է տալիս ինձ՝ հանդգնելու: Որովհետև, թեկուզև մեծ է իմ մեղքը, բայց խիստ պակաս է քո մարդասիրությունից, թեկուզ անհնարին են անառակությունները իմ, բայց անկարող են քեզ անգութ ցույց տալու: Գիտեմ, որ արժանի չեմ քո ողորմությանը, բայց դու սովոր ես նաև անարժաններին ողորմել: Անտեղյակ չեմ իմ աղտեղի վարքի անվճարելի պարտքից, սակայն քո ամենառատ կամքի հույսը ինձ հորդորում է քո առջև ինձանից բողոքել:

Եվ արդ, ո՞ւմ դիմեմ, բարերա՛ր, եթե դու չողորմես, ո՞ւմ անունը կանչեմ փրկության համար, եթե միակ կարողդ և մարդասերդ չհասնես: Ոխ մի՛ պահիր, անոխակալ, մի՛

քո յինէն առատապարգեւդ առ ամենեսեան. տուր առաւել քան զոր հայցեմս, և պարգեւեա բազմապատիկ՝ քան յաղագս որոյ պաղատիմս: Ցիշեա զի օտար է քեզ չողորմելն, և կամեաց զոր յաւէտակից բնաւորապէս ունիս. անսա զոր ախորժեսն, և ընկալ վասն որոյ կամիս՝ և ուսուցեր հայցել ի քէն. յորդութիւն բարերարութեան ընդակից քո է, և առատապէս զեղու կարօտելոց. և չիք կարօտ և ցանկացեալ իբրեւ զիս. թողուլ զմեղս և անտես առնել զանօրէնութիւնս՝ անճառելոյ գոյացութեան քո իսկակից է. և չիք ոք մեղանչական և անօրինագոյն քան զիս:

Սիրես Հայր զբաշխմունս պարգեւեաց. մի՛ զրկեցայց ես աղքատացեալս քան զամենեսին. ոչ կամիս զմահ մեղաւորաց, այլ և կանգնես եւս. տուր ինձ յարութիւն ի մեռելութենէ մեղաց իմոց: Ահաւասիկ առաջի քո խոստովան լինիմ զխղխայթեալ վիրաց հոգւոյ իմոյ զանհնարին ցաւս. բժշկեա յամենայնի կարողդ, և մի՛ տար հիւանդանալ միւսանգամ. բաւական են ինձ առ ի կորուստ՝ ի մանկութենէ ցայժմ գործեցեալքն յինէն չարեաց բազմութիւնքն, յայսմ հետէ կորզեալ յափշտակեսցես տէր զթշուառական անձն իմ: Հեռացայ, մերձեցո առ քեզ. մոլորեցայ, խնդրեա. կորեայ, գտանել խորհեսցիս. տես ամենագութ զտառա-

բարկացիր, քաղցր բնութիւն, մի՛ թաքցրու քո շնորհները ինձնից, առատապարգևդ բոլորի նկատմամբ, ավելին տուր, քան հայցում եմ և բազմապատիկ պարգևիր, քան դրա համար պաղատում եմ: Հիշի՛ր, որ քեզ խորթ է չողորմելը և կամեցիր, որին բնականորեն հավերժակից ունես, լսի՛ր՝ ինչ ախորժում ես, ընդունիր՝ ինչի համար ուզում ես և սովորեցրիր հայցել քեզնից. բարերարության առատությունը քո զուգակիցն է և առատորեն տալիս է կարոտյալներին: Իսկ ինձ նման կարոտ և ցանկացող չկա. թո՛ղ մեղքերս և անտեսիր անօրինությունս՝ իսկակից անճառ քո գոյացության, և չկա մեկը մեղանչական ու ավելի անօրեն, քան ես:

Հա՛յր, սիրում ես պարգևներ բաշխել. զուրկ չլինեմ ես, որ աղքատացածն եմ բոլորից. չես կամենում մեղավորների մահը, այլև ոտքի ես հանում. ինձ հարություն տուր իմ մեղքերի մեռելությունից: Ահավասիկ քո առջև խոստովանում եմ իմ հոգու թարախակալ վերքի անհնարին ցավերը. բուժի՛ր, ամեն ինչով կարողդ, և մի՛ թողնիր վերստին հիվանդանալ. ինձ կորցնելու համար բավական է մանկությունից մինչև այժմ իմ գործած չարիքների բազմությունը, այսուհետև, Տեր,

պանս իմ, և մի՛ գարշիր յաղտեղեալ անձին իմոյ տգեղութենէ. լուսացես աճառովք ողորմութեան քո յինէն զժանտացուցիչս ամենայն գեղոյ անձին: Դու որ ի կորստեան անօրինեալ ազգին ապրեցուցեր ի ջուրցն սաստկութենէ զսիրելին քո զՆոյ, կարող ես և զմեղաց ցամաքեցուցանել զհոսանս, և զընկղմեալս վերածել զանձինս. վասն որոյ և առաքեցեր զՈրդիդ քո միածին առ անհասանելոյ բանի նախախնամութեան քո, որպէս զի իւրով մարդեղութեամբն վասն ազգի մարդկան հասարակաց կորուսելոց ի յորձանաց անօրէնութեանց ընձեռեսցէ փրկութիւն յաւիտենական և ճշմարիտ. որոյ չարչարանօքն արարեր մոռացումն մեղաց լինել առաջի քո համօրէն՝ որոց հաւատացին որդի քո զնա, որ էրն իսկ ճշմարտութեամբ՝ գոլ: Եւ ես թէպէտ և շաղախեցայ գործովք անօրէնութեան, այլ ի հաւատս անդ՝ զոր ընկալաւ եկեղեցի քո յաշակերտութենէ ուսման հրամանաց նորա՝ կացի առանց երկմտութեան, և կացից մինչեւ ցվախճան, միոյ խոստովանելով բնութեան զերեքանձնեայ աստուածութեանդ էութիւն. զոր մատուցանեմ առաջի քո որպէս ընծայ ընդունելի, յայլմէ ամենայնէ կապտեալ գոլով և աղքատ, զոր ունին ծառայք քո՝ զամենաբարւոք փարթամութիւնն վարուց, զոր և ինձ այժմ տացես ողորմելով:

կորզելով հափշտակիր իմ թշվառ անձը: Հեռացա, մոտեցրու քեզ. մոլորվեցի, փնտրիր. կորա, մտածիր գտնել: Ամենագութ, տե՛ս իմ տառապանքը և մի՛ գարշիր իմ աղտեղված անձի տգեղությունից, քո ողորմության օճառով լվա ինձանից իմ անձի ամբողջ գեղեցկությունն այլանդակողներին: Դու, որ անօրինացած ազգի կորստյան ժամանակ ջրերի սաստկությունից փրկեցիր քո սիրելի Նոյին, կարող ես և ցամաքեցնել մեղքի հորձանքը և վեր հանել ընկղմվածներին, և քո նախախնամության խոսքն անհասանելի էր, ուստի ուղարկեցիր քո Միածին Որդուն, որ իր մարդեղությամբ անօրինությունների հորձանքից կորած մարդկային ցեղին հավիտենական ու ճշմարիտ փրկություն ընձեռի: Նրա չարչարանքով քո առջև [կատարված] բոլոր մեղքերի մոռացումն արեցիր, և մարդիկ հավատացին, որ նա քո Որդին է, որ և ճշմարիտ էր:

Եվ ես, թեպետ շաղախվեցի անօրեն գործերով, բայց՝ հավատքի մեջ, որ ընդունեց քո եկեղեցին, աշակերտելով նրա ուսմունքին՝ մնացի առանց երկմտության և կմնամ մինչև վերջ՝ խոստովանելով մի բնություն՝ երեքանձնյա աստվածությանդ էությունը, որ մատուցում եմ քեզ որպես ընդունելի ընծա, այլ

Ես ինձնէն իմովք կամօք վարատեալ ի կամաց քոց՝ մատնեցայ աւազակաց, և կորուսի զճոխութիւնն. այլ դու միայն աննենգդ . որդեսէր տուր ինձ վերստին զառաջինն: Վիրաւորեցայ յորոց եղէ ուղեկից անմտութեամբ, բժշկեա դարձեալ ստեղծիչդ բարի. և արա զիս կատարեալ ամենայնիւ, զոր սահմանեցեր ի բնէ ստեղծուածին մերոյ. և որովք կրկին անգամ վարդապետեցեր ի ձեռն առաքելոց քոց և մարգարէից. որպէս զի արժանի եղէց բանալ զբերան իմ ի պապանձմանէ աստի ամօթոյ մեղաց իմոց՝ ի փառաբանութիւն ամենասուրբ Երրորդութեանդ, Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ամեն ինչից կողոպտված լինելով և աղքատ. քո ծառաներն ունեն վարքի ամենաբարվոք փարթամությունը, որ և արդ կտաս ինձ ողորմելով: Ես՝ ինքս, իմ կամքով օտարված քո կամքից, ավազակների ձեռքը մատնվեցի և կորցրի ճոխությունը, լոկ դու ես աննենգ և որդեսեր, վերստին ինձ տուր նախկինը: Վիրավորվեցի նրանցից, ում անմտաբար ուղեկից եղա, բժշկի՛ր դարձյալ, ստեղծիչդ բարի, և ինձ ամեն ինչով կատարյալ դարձրու, որ ի բնե սահմանեցիր մեր կերտվածքին, և կրկին սովորեցրիր քո առաքյալ մարգարեներով, որպեսզի արժանի լինեմ՝ բերանս բանալու իմ մեղքի ամոթի պապանձումից՝ ի փառաբանություն ամենասուրբ Երրորդությանդ, Հոր և Որդու և Սուրբ Հոգու, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Գ.
ԱՂՕԹՔ Ի ԴԷՄՍ ՄԱՆԿԱՆՑ ԱՌ ՀԱՅՐ ԱՍՏՈՒԱԾ

ԱՌԱՏ յամենայն տուրս բարեաց, փարթամացուցիչ աղքատաց, էապէս և միշտ բարի, Հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով արարեր փրկութիւն կորուսեալ ծննդոցն Ադամայ, և կանգնեցեր վերստին զորս ի ձեռն նորա ստեղծեր ի պատկեր կերպարանի քո՝ զանկեալս ի կենաց. և զենգիչն կենաց ծառայից քոց զխորամանկն ի բանսարկութիւն և յամենայն որ ինչ ոչ է հաճոյ քեզ՝ արկեալ ի խոնարհ, ընկեցեր յիշխանութենէ չարչարանօք Քրիստոսի քո. և զյաղթահարեալսն ի նմանէ հաներ ի վերայ գլխոյ նորա: Հայեա քաղցրութեամբ ի ծառայ քո անպիտան, և մի՛ տար թոյլ յառնել ինձ հակառակ գազանին չարի. մանուկ եմ ես և արհամարհեալ. ամենակատար զօրութիւնդ և անսկիզբն էութիւնդ լեր ինձ ամրութիւն և յարկ ծածկութեան ի պատերազմաց նորա. հայր սրբոց, խնայեա յանկատարութիւն տիոց մարմնոյ և մտաց իմոց. երկնչիմ ի կամակոր և ի թունալից օձէ անտի, գուցէ անկայց վասն դիւրագայթ բնութեանս և անլիութեան տիոցս և խա-

Գ.
ԱՂՈԹՔ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՑ՝ ՀԱՅՐ ԱՍՏԾՈՒՆ

Առատաձեռն՝ ամեն բարիք բաշխելիս, աղքատներին փարթամացնող, էապես և միշտ բարի, Հայրդ մեր Տեր Հիսուս Քրիստոսի, որի ձեռքով իրագործեցիր Ադամի կորած զավակների փրկությունը և վերստին կանգնեցրիր նրանց, որ Նրա միջոցով ստեղծեցիր քո պատկերով՝ կյանքից զրկվածներիս և քո ծառաների կյանքը նենգողին, որ խորամանկ է բանսարկության և ամեն ինչի մեջ, որ քեզ հաճո չէ, խոնարհեցնելով՝ զրկեցիր իշխանությունից քո Քրիստոսի չարչարանքով և նրանից պարտվածներին բարձրացրիր նրա գլխի վրա: Քաղցրությամբ նայիր քո անպիտան ծառային և ինձ թույլ մի տուր ընդդիմանալ չար գազանին. մանուկ եմ ես և արհամարհված, ամենակատար զորություն և անսկիզբ էություն, ինձ ամրությո՛ւն եղիր և նրանց պատերազմներից պահպանող հարկ, սրբերի Հայր, խնայի՛ր իմ մարմնի ու մտքի անկատարությունը. երկնչում եմ կամակոր ու թունալից այդ օձից, որ չընկնեմ դյուրագայթ

կութեան մտաց իմոց ընդ խածմամբք ժանեաց նորա: Ապրեցո զիս տէր, զահ անյաղթելի զօրութեան քո արկանելով ի վերայ նորա. և տուր ինձ կատարումն մարմնոյ, հոգւոյ արութիւն, բարուց հաստատութիւն, կեանս հաճոյականս բարեսէր կամաց քո: Զինեա զիս ամենայն զգուշական սպառազինութեամբ ընդդէմ չար պատերազմողին, որպէս զԴաւիթ ծառայ քո հակառակ Գողիաթու. հա՛ն զիս ի գբոյ տառապանաց անգիտութեան, ուր ոչ գոյ ջուր քաղցր և ամենախորժ կեցուցիչ սիրոյ քո. որ հաներ զՅովսէփ ի գբոյ մահու և ի տանէ կապանաց յաթոռ թագաւորութեան: Պարգեւեա ինձ զսիրելին քո զիմաստութիւն և զհանճար, գնալ առաջի քո անմոլար ճանապարհաւ և անսայթաք ոտիւք մտաց. որ ետուր զհոգի քո ի վերայ մանկանն Դանիելի՝ ի պատիւ նմա, և ի կշտամբանս վաւաշոտութեան զակատեալ և մոլեգին ծերոցն: Առաքեա ինձ, Հայր, քաջալերութիւն ի բարձանց քոց, և զօրութիւն աներկեւղութեան յամենեցունց՝ որք կան հակառակ հրամանաց քոց. որպէս զի մի՛ խաբեցայց ի սնոտի կենցաղոյս այսորիկ, որ սովոր է գողանալ զմիտս անհաստատս և դիւրաշարժս, և հեռացուցանել ի քէն, կարծիս տալով զեղծանելեացս՝ որպէս թէ իցեն կայունք և անշարժելիք: Որ զօրա-

բնութեանս և տարիքիս անկատարության ու մտքիս խակության պատճառով, [վախենում եմ] նրա ժանիքների խածոտելուց:

Փրկի՛ր ինձ, Տե՛ր, քո անհաղթելի ուժի ահը գցելով նրա վրա, և ինձ տուր մարմնի հասունացում, հոգու արիություն, բարքի հաստատունություն, քո բարեսեր կամքին հաճելի կյանք: Ինձ զինիր չար պատերազմողի դեմ ամբողջ նախազգուշական սպառազինությամբ, ինչպես քո ծառա Դավթին՝ Գողիաթի դեմ, ինձ հանիր անգիտության տառապանքի վիհից, ուր չկա քո քաղցր ու ամենախորժ սիրո ապրեցնող ջուրը, որ Հովսեփին հանեցիր մահվան գուբից ու կապանքների տնից՝ թագավորական գահի: Պարգևիր ինձ քո սիրելի իմաստությունն ու հանճարը՝ ընթանալու քո առջև անմոլար ճանապարհով և մտքի անսայթաք ոտքերով, որ քո հոգին տվիր մանուկ Դանիելի համար՝ ի պատիվ նրա և ի կշտամբանք կատաղած և մոլեգին ծերերի վավաշոտության:

Հա՛յր, առաքի՛ր ինձ քո բարձունքներից քաջալերություն և զորություն՝ չերկնչելու ամենքից, որ հակառակ են քո հրամաններին, որպեսզի չխաբվեմ այս սնոտի կյանքից, որ սովոր է գողանալ անհաստատ և դյուրաշարժ

ցուցեր զմանկունս զԱնանիանսն ընդդէմ կալ բռնաւորական հրամանացն, և ընտրել զմահու ծանրութիւն, և խիստ կապանօք ի հուր բորբոքեալ սաստկապէս, զի մի՛ ինչ յոչ հաճոյիցն քեզ երեւեսցի ի նոսա. և զի մի՛ հեռասցին ի սիրոյ քումմէ, որ է գանձ անճառելի և ճոխութիւն յաւիտենական: Բարձրացո ի ստորայնոցս զմիտս իմ, և մերժեա ի հոգւոյ իմմէ զբաղձումն սորա. խաւարեսցին աչք մտաց իմոց ի տեսիլ սիրոյ սորա, զի քեզ միայն տեսից կորովութեամբ աչաց ի պարգեւէ քումմէ լոյսդ անիմանալի, ի քեզ ցնծացայց անտխուր և անլուծանելի ուրախութեամբ:

Մանկութիւն իմ քեւ և ի սէր քո զբաղեսցի, կատարելութիւն իմ քեւ փառաւորեսցի, ծերութիւն իմ քեւ պարարտասցի, մահ իմ քեւ կենդանասցի, և ամենայն կենաց իմոց դու եղիցիս մատակարար և կարգաւորիչ վայելչապէս: Տես մարդասէր զպաղատանս անձին իմոյ, լուր աղօթից շրթանց իմոց, պարգեւեա ինձ զխնդրուածս իմ. մի ունայն արձակեսցես զիս յերեսաց քոց թագաւոր առատապարգեւ. զարդարեա զանզարդութիւն իմ կատարմամբ աղօթիցս այսոցիկ. զի եղէց ոչ բնաւ հեռանալով ի քէն՝ թոշակեալ ամենայն պարգեւօք բարեաց. զոր տեսեալ թշնամեաց իմոց որք ատենն զքեզ, ամաչեսցեն նկուն եղեալ. և որք սիրենն

մտքերը և հեռացնել քեզնից՝ կարծել տալով եղծվածներին՝ իբր կայուն են ու անշարժելի: Դու զորացրիր Անանյան մանուկներին՝ ընդդիմանալու բռնավորի հրամաններին և ընտրելու մահու ծանրությունը, և խիստ կապանքով սաստկապես բորբոքվեցին հրով, որ նրանց մեջ չերևա քեզ ոչ հաճելի բան, և որ չհեռանան քո սիրուց, որ անճառելի գանձ է և հավիտենական ճոխություն: Բարձրացրու իմ միտքը ստորայիններից և իմ հոգուց ջնջիր դրա բաղձանքը. իմ մտքի աչքերը կխավարեն՝ նրա սերը տեսնելով, որ միայն քեզ տեսնեմ աչքիս քո պարգևած կորովությամբ, լո՛ւյս անիմանալի, քեզանով ցնծամ անտխուր և անեղծ ուրախությամբ:

Իմ մանկությունը քեզնով և քո սիրով կզբաղվի, իմ հասունությունը քեզնով կփառավորվի, իմ ծերությունը քեզնով կպարարտանա, իմ մահը քեզնով կկենդանանա, և իմ ամբողջ կյանքին դու վայելչապես մատակարար ու կարգադրիչ կլինես: Մարդասեր, տե՛ս իմ պաղատանքը, լսի՛ր շրթունքիս աղոթքը, ինձ պարգևիր իմ խնդրածը, դատարկաձեռն մի՛ արձակիր ինձ քո մոտից, առատապարգև թագավոր, իմ անզարդությունը զարդարիր այս աղոթքների կատարմամբ, որ չհեռանալով

զքեզ՝ փառաւորեսցին առ ի քէն, և լիցի մեծարանս անարգութեան իմոյ. և ես արժանի եղէց փառաւորել զքեզ ընդ Որդւոյ քում միածնի, և ընդ Հոգւոյդ սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

քեզնից՝ պարենավորվեմ բոլոր բարիքների պարգևներով, որ և քեզ ատող իմ թշնամիները տեսնեն, ամաչեն՝ նկուն լինելով, իսկ ովքեր սիրում են քեզ, կփառավորվեն քեզնից: Եվ իմ անարգությունը կմեծարվի, և ես արժանի կլինեմ՝ քեզ փառավորելու քո Միածին Որդու և Սուրբ Հոգուդ հետ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Դ.
ԱՂՕԹՔ ԱՌ ՔՐԻՍՏՈՍ ՅԻՍՈՒՍ

ՈՐԴԻ Աստուծոյ՝ միածին Յիսուս Քրիստոս, ամենայնի արարիչ որ երեւին և որոց ոչ տեսանին, անբաժանելի ընդ Հօր, ծնունդ անճառելի էութեան նորա, կատարեալ ամենայնիւ՝ որպէս յորմէ եսդ. ճշմարտութիւն՝ որդի ճշմարտութեան, յԱստուծոյ՝ Աստուած ճշմարիտ. բարի ի բարւոյ. ի կենաց կեանք. ի լուսոյ լոյս անիմանալի. ժամանակաց՝ և որոց ի ժամանակի և ընդ ժամանակաւ գոյացուցիչ յոչնչէ. անժամանակ և նախայաւիտեան որդի Հօր: Նոյնակերպ և նոյնագոյ ծնողին զքեզ, անհասանելի բնութիւն, անբովանդակելի ընդ Հօր քում և ընդ Հոգւոյ ելողի ի նմանէ՝ Աստուած: Յատկապէս ծնեալ՝ և միայն՝ և ի միոյ միածին. որ զամենայն բերես բանիւ զօրութեան քո, զորս ածեր ի գոյութիւն. զամենայն լնուս, և ինչ մերձենալ ի քեզ ոչ կարէ. զբովանդակ պարունակես զարարածս, և յիմեքէ ոչ պարագրիս, փառաւորեալդ յերկնաւորաց անմարմին գոյացութեանց:

Յորոյ ակնարկութենէդ դողայ երկիր, սասանին լծակիցք նորա տարերք, ծխանին լերինք մեր-

Դ.
ԱՂՈԹՔ ԱՌ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Աստծու Որդի՝ Միածին Հիսուս Քրիստոս, արարող այն ամենի, որ երևում են և որ տեսանելի չեն. անբաժանելիդ Հորից, նրա անճառելի էության ծնունդ, ամեն ինչով կատարյալ, ինչպես որ ճշմարտություն ես, որդի ճշմարտության, Աստծուց Աստված ճշմարիտ, բարի՝ բարուց, կյանք՝ կյանքից, լույսից՝ անիմանալի լույս ժամանակների և որ ժամանակների մեջ են, ժամանակի հետ ոչնչից գոյացնող. Հոր անժամանակ և նախահավիտյան Որդի: Քեզ ծնողին նույնակերպ ու նույնագոյ, անհասանելի բնություն, անբովանդակելի քո Հոր և նրանից բխած Հոգու հետ՝ Աստված: Հատուկ ծնունդ և միակ և մեկից Միածին, որ ամեն ինչ բերում ես քո զորության խոսքով, որ գոյացրիր, բոլորին լիացնում ես, և ոչինչ քեզ մոտենալ չի կարող և պարունակում ես բոլոր արարածներին, և ոչ մեկից չես սահմանվում, երկնային անմարմին գոյացություններից փառավորվածդ:

Քո ակնարկումից դողում է երկիրը, սասանում են նրա լծակից տարրերը, ծխում են լեռ-

ձենալով, վատնին անտառք, բլուրք հալին, սիւնք երկրի թոանին, երկիր դողայ, ալիք ծովու հնազանդին, զօրութիւն նորա իշխի. քանզի փակեցեր որպէս դրամբք չնչին աւազով: Որ ասես արեգական և ոչ ծագէ. և կնքես ընդդէմ աստեղաց. որ առնես զմեծամեծս և զանքնին և զհրաշակերտս, որոց ոչ գոյ թիւ. որոյ կամաց տեղի տան բնութիւնք սերտեալք և անշարժք յինքեանս. ընկրկի գետ, բաժանի ծով. վէմ անծին և ապառաժ ստեամբք վտակաց ջուրց արբուցանէ զծարաւիս. անգայտ և փափուկ բնութիւն օդոյ՝ կերակուր մշակեալ իջուցանէ քաղցր. արեգական և լուսնոյ մշտաշարժութիւնք դադարեն երբեմն, և ընթանան հակառակաբար. սոսկան ահիւ տագնապեալ ամենայն գերաշխարհիկ զօրութիւնք. վասն զի արարչի և կառավարի ոչ կարասցեն անհլու և ստուգնկանող լինել նախախնամեալքն և արարածք:

Դու ի լրման ժամանակաց առաքեալ ի Հօրէ՝ եղեր ի կնոջէ, անեղանելիդ ըստ բնութեան, անժամանակդ՝ ընդ ժամանակաւ, և էդ ընդ լինելութեամբ. արարիչդ՝ արարեալ, մարդ՝ Աստուած և տէրդ, թագաւորդ՝ ծառայ, սկսեալ անսկզբնական էութիւն. որպէս զի անդրէն դարձուցանելով զհնարաւորն քեզ՝ շնորհեսցես մեզ զաստուածա-

ները մերձենալով, սպառվում են անտառները, հալչում են բլուրները, թռչում են երկրի սյուները, դողում է երկիրը, հանդարտվում են ծովի ալիքները, կաչկանդվում է նրա զորությունը, քանի որ չնչին ավազով փակեցիր՝ ինչպես դռներով: Որ ասում ես արեգակին՝ և չի ծագում, և կնքում ես ընդդեմ աստղերի, որ ստեղծում ես մեծամեծ, անքնին և հրաշակերտ բաներ, որոնց թիվ չկա: Քո կամքի առջև տեղի են տալիս ինքնօրեն հաստատված և անշարժ բնությունները, ընկրկում է գետը, կիսվում է ծովը. անծին և ապառաժ վեմը ջրի վտակների ստինքներով հագեցնում է ծարավներին. օդի նոսր ու փափուկ բնությունը իջեցնում է՝ քաղցր կերակուր դարձրած. արեգակի և լուսնի մշտական շարժումները երբեմն դադարում են և հակառակ են ընթանում. բոլոր գերաշխարհիկ ուժերը ահով տագնապած սոսկում են, որովհետև նախախնամածներն ու արարածները չեն կարողանա անհլու և անլսող լինել արարողին ու կառավարչին:

Ժամանակների լրումին դու առաքվեցիր Հորից, կնոջից եղար՝ բնությամբ անլինելիդ, անժամանակդ՝ ժամանակի հետ, և էդ՝ լինելության հետ. արարված արարիչդ, մարդ՝ Աստված և Տերդ, թագավորդ՝ ծառա, սկսված անսկիզբ էություն, որպեսզի հետո հնարավո-

յին բարեփառութիւնն. մարդանալովդ՝ զաստուածուծիւն, զբարձրութիւն՝ խոնարհութեամբ, կարօտութեամբ՝ զլիութիւնն, զճոխութիւն՝ աղքատութեամբ և տնանկութեամբ. ծառայութեամբ՝ զազատութիւն. և միանգամայն քեզ անվայելչականօքն՝ զվայելուչն մեծութեան քո և մարդասիրութեան: Եւ կատարած կնքոյ ըստ մարմնոյ տնօրէնութեանն զխաչիւ մահուն չարչարանս. քանզի ընդ անվճար պարտուք դատաստանի մահու անկեալք մեք՝ ատելիք մանաւանդ, քան թէ ողորմելիք՝ յաղագս կամաւոր անբանութեանն էաք: Իսկ դու առատ ողորմութեամբ և անպատում սիրով, գութ բարերարութեան զմէնջ ունելով՝ հատուցանել անձամբ զմերն կամեցար պարտիս, ընծայ պատարագի զքեզ ինքն մատուցեալ Հօր քում՝ փոխանակ պարտաւորաց մահու յաւիտենականի, ազատեցեր ի կորստենէ զորդիս մարդկան. անմահդ մեռանելով ըստ մարմնոյ՝ կեցուցեր զմեռեալս ամբարտաւանութեամբ և գործովք չարեաց. անմեղդ և անպարտ որպէս զՈրդի Աստուծոյ և Աստուած՝ զմեղապարտութեան յաղագս մեր ընկալար դատաստան. միանգամ՝ մեռար մարմնով՝ անմահ ըստ ինքեան քեզ, և յաւիտենական մեզ ետուր փրկութիւն. զհակառակ մեր դատապարտութեանն վճիռ բարձեալ ի միջոյ՝ բեւե-

ը քեզ դարձնելով՝ մեզ չնորհես աստվածային բարեփառությունը, մարմնանալովդ՝ աստվածությունը, խոնարհությամբ՝ բարձրությունը, կարոտությամբ՝ լիությունը, աղքատությամբ ու տնանկությամբ՝ ճոխությունը, ծառայությամբ՝ ազատությունը. և միանգամայն քեզ անվայելչականով՝ քո մեծությանն ու մարդասիրությանը վայելը: Եվ ամեն ինչի վերջում՝ մարմնի տնօրինությամբ խաչով մահվան չարչարանքը, քանի որ չվճարած պարտքի պատճառով մենք մահու դատաստանի արժանացանք, ավելի շատ ատելի, քան ողորմելի էինք կամավոր անբանության պատճառով:

Իսկ դու առատ ողորմությամբ ու անպատում սիրով, մեր նկատմամբ բարերարության գութ ունենալով, կամեցար անձամբ հատուցել մեր պարտքերը, ինքդ քեզ պատարագի ընծա մատուցելով Հորդ՝ հավիտենական մահվան դատապարտվածների փոխարեն, կորստից փրկեցիր մարդկանց որդիներին, անմահդ՝ մեռնելով մարմնով՝ ապրեցրիր ամբարտավանությամբ և չար գործերով մեռածներիս, անմեղդ և անպարտդ իբրև Աստծու Որդի և Աստված՝ մեր փոխարեն մեղապարտության դատաստան ընդունեցիր. մեռար մի անգամ մարմնով՝ լինելով անմահ, և մեզ հավիտենական փրկություն տվիր. մեր դեմ դատապար-

ոեցեր ընդ խաչափայտին. յանիծից օրինացն և յոր-
ոց ի սկզբանէն փրկեցեր զմեզ գնեալ, յաղագս
մեր լինելով անէծք. համանգամայն բարձեր
զմեղս աշխարհի արեամբ պատարագի քո անբծի
և անարատի գառինդ Աստուծոյ, մատուցեալ զե-
նումն Աստուծոյ Աստուած: Ո՛վ անճառելեացս.
փոխանակ մարդկան թշնամեաց և հեռացելոց՝
սիրելիս և մերձաւորս արարեր. ժառանգակիցս
քեզ, ժառանգս Հօր քո. զբնութիւն հողեղէն և ան-
պատուեալ մեղօք՝ եղբարքս քեզ: Ո՞ լուաւ, ո՞ ե-
տես յամենայն յաւիտեանս այսպիսի ինչ. ո՞ խո-
սեսցի զզօրութիւնս քո, կամ կարասցէ լսելի առ-
նել զամենայն օրհնութիւնս քո. զի՞նչ կարասցուք
հատուցանել ընդ պարգեւաց քոց. ո՞ խորհեսցի
արժանապէս ընդ միտս իւր գէթ՝ զայսպիսի ան-
պատում շնորհաց. զի՞նչ է ի մեզ անբաւ մեծու-
թիւն խորհրդոյս. զմարդիկ աստուածացուցեր Աս-
տուածդ ամենայնի և տէր. զորդիս չարին ի բաց
կորզեալ հզօրդ՝ արարեր որդիս Աստուծոյ Հօր
քո. զարժանաւորս մահուն անմահի՝ յանմահու-
թիւն փոխեցեր. զծառայեցուցիչ բռնաւորն՝ կո-
խան ետուր ոտից ծառայից քոց: Պաշտելիդ և
երկրպագելի Աստուածդ ճշմարիտ պաշտեցեր
զմարդիկ ծառայաբար սպասաւորելով. զմարմին
և զարիւն քո ջամբեցեր և արբուցեր մեզ յերկնից

*տութեան վճիռը վերացնելով՝ բևեռվեցիր խա-
չափայտին. օրենքի և սկզբից եղած անեծքնե-
րից փրկագնեցիր մեզ. մեզ վրա անեծք կար,
Գառդ Աստծու, քո անբիծ և անարատ արյու-
նը պատարագելով՝ ամբողջապես վերացրիր
աշխարհի մեղքերը, զոհ մատուցելով Աստ-
ծուն, Աստված: Ո՛վ անճառելի, թշնամիների
ու հեռացած մարդկանց դարձրիր սիրելի ու
հարազատ, քեզ ժառանգակից, քո Հոր ժա-
ռանգներ. հողեղեն բնությունը և մեղքով ան-
պատվածներին՝ քեզ եղբայրներ:

Ո՞վ լսեց, ո՞վ տեսավ երբևէ այսպիսի բան,
ո՞վ կխոսի քո զորությունից կամ կկարողանա
լսելի դարձնել քո բոլոր օրհնությունները.
ի՛նչ կարող ենք հատուցել քո պարգևների
դիմաց, ո՞վ իր մտքում կխորհի արժանապես
գեթ այսպիսի անպատմելի շնորհներից, ո՞րն է
մեր մեջ այս խորհրդի անբավ մեծությունը.
ամեն ինչի Աստված և Տեր, աստվածացրիր
մարդկանց, խլելով չարի որդիներին, հզորդ,
քո Հայր Աստծու որդիներ դարձրիր. հավիտե-
նական մահվան արժանացածներին անմա-
հության փոխադրեցիր. ստրկացնող բռնավո-
րին քո ծառաների ոտքի կոխան դարձրիր:
Պաշտելի և երկրպագելի Աստվածդ ճշմարիտ,
մարդկանց պաշտեցիր՝ սպասարկելով ծառա-
յապես. քո մարմինն ու արյունը կերցրիր ու

իջեալ հացդ ի փրկութիւն հոգւոց և մարմնոց մերոց: Ո՛չ ամօթ համարեցար կրակից մեզ լինել անախտդ Աստուած. ոչ զզուեցեր զբնութիւն աղտեղեալ և գարշելի մեղօք եղեալ. ոչ անարգանս վարկար և գործ անպատշաճ փոխանակ մեր մեռանել: Փառք տէր անչափ սիրոյ քո, օրհնութիւն քեզ մեծդ ողորմութեամբ և յամենայնի գթած. օրհնութիւն անճառելի խոնարհութեան քո. պատիւ անսահմանելի բարձրութեան քո. փառք չարչարանաց քոց՝ Աստուած իմ Յիսուս Քրիստոս. օրհնութիւն մահու քո՝ կեանք մեր. երկրպագութիւն և շնորհ յարութեան քում՝ անմահացուցիչ մեր:

Մի՛ անտես առներ զփրկեալս չարչարանօք քո, և զբարձրացեալս խոնարհութեամբ քո. մի թողուր միւսանգամ անկանել յերեսս իւրեանց՝ զորս ժողովեցեր աշխատութեամբ քով՝ հանգիստդ ամենեցուն, և անվաստակ որպէս Աստուած յաւիտենական: Մի՛ քայքայեալ ցրուեսցէ, որ օձտեաց և ապականեաց երբեմն. մի՛ դարձեալ խրոխտասցի գոռոզն չար մերովս կորստեամբ և վարուց խառնակութեամբ: Գլորեցաք, կանգնեա վերստին. թշուառացաք ի մեղս մեր յոյժ, և կամք ըմբերանեալ յանհամարձակութենէ. զերանութեան քո շնորհ արկանելով դարձեալ ի վերայ մեր՝ ընդարձակեա զբերանս մեր լնուլ գովութեամբ, յօրհնել

խմեցրիր մեզ՝ ի փրկություն մեր հոգիների ու մարմինների, հացդ՝ իջած երկնքից: Ամոթ չհամարեցիր մեզ տառապակից լինելը, անախտ Աստվածդ, չզզվեցիր մեղքով ատելի ու գարշելի եղած աղտեղի բաներից. մեր փոխարեն մեռնելը անարգանք կամ անպատշաճ գործ չհամարեցիր: Տեր, փառք քո անսահման սիրույն, օրհնություն քեզ, մեծդ ողորմությամբ և ամեն ինչում գթած, օրհնություն քո անճառելի խոնարհությանը, պատիվ անսահմանելի քո բարձրությանը, փառք քո չարչարանքին, Աստվա՛ծ իմ Հիսուս Քրիստոս, օրհնություն քո մահին, կյանք մեր, երկրպագություն և շնորհ քո հարությանը, մեր անմահացուցիչ:

Մի՛ անտեսիր քո չարչարանքով փրկվածներիս և քո խոնարհումով բարձրացածներիս, մի՛ թող վերստին երեսնիվայր ընկնել նրանց, որ քո չարչարանքով հավաքեցիր, հանգիստդ բոլորի և անխոնջդ որպես հավիտենական Աստված: Քայքայելով չցրի նա, որ երբեմն ցրեց ու ապականեց. չար գոռոզը դարձյալ չխրոխտանա մեր կորստյամբ և խառնակ վարքով: Գլորվեցինք, կանգնեցրու վերստին. մեր մեղքի մեջ խիստ թշվառացանք և անհամարձակությունից պապանձվել ենք. քո երանության շնորհը նորից մեզ վրա գցելով՝ ա-

զփառս քո հանապազօր և զմեծ վայելչութիւնս քո: Կրկնեցաք զճանապարհս մեր անօրէնս, յետս կացաք յօրինաց քոց փրկաւետաց, անտես արա վասն հեղման արեան քո պատուականի: Մի՛ ըստ մեղս մեր դատեսցիս զմեզ, և մի՛ ըստ անօրէնութեան մերոյ հատուցես մեզ, յիշեա զժողովուրդ քո զոր ստացար ի սկզբանէ ի ձեռն խոնարհութեան և մահու քո, և մի՛ մոռանար զվիճակ ժառանգութեան քո զոր փրկեցեր: Դրացիք մեր ամբարիշտք նախատեն զմեզ՝ կորագլուխ զմեզ առնելով և կոխան ոտից. զերծուցես զմեզ վասն անուան քո հզօրի: Տանջեսցի Փարաւոն, Եգիպտոս սատակեցի. դարձեալ փառաւորեսցի ժողովուրդ քո բարետոհմիկ և սիրեցեալ. պարիսպ այգւոյ քո նորոգեսցի վերստին. բարձրասցի ցանկն, աշտարակքն կանգնեսցին, մի՛ կոխեսցեն զսա անցաւորք ճանապարհաց. գազանք փախիցեն. ընդմիջնաշաւիղն խցցի, կարկատեսցի խրամատութիւնն, փուշքն խլեսցին յարմատոց, վայելչասցի քաջապտղութեամբ այգին, սրբեսցի յառաւել եւս պտղաբերութիւն, ուրախասցի մշակողն բարի, և տնկագործն յատցէ, կակղացուսցէ, արբուսցէ առատութեամբ հոսանացն քաղցունց. մի ինչ պակասեցուսցէ ի դարմանոցն պտղաբերութենէ: Եւ դու այգիդ առաջին և ճշմարիտ, մի՛ սնացուսցէ

զատիր մեր բերանները՝ լցնելու գովասանքով, օրհնելու քո հանապազօրյա փառքն ու մեծ վայելչությունդ: Կրկնեցինք մեր անօրեն ճանապարհները, ետ կանգնեցինք քո փրկավետ օրենքներից. անտեսիր հանուն քո պատվական արյան հեղման: Մեզ մեր մեղքերի համեմատ մի՛ դատիր և մեր անօրինության համաձայն մի՛ հատուցիր մեզ, հիշիր քո ժողովրդին, որ սկզբից ևեթ ստացար քո խոնարհությամբ ու մահով, և մի՛ մոռացիր քո ժառանգական վիճակը, որ փրկեցիր: Մեր ամբարիշտ հարևանները նախատում են մեզ՝ կորագլուխ և ոտքի կոխան դարձնելով. կփրկես մեզ հանուն քո հզոր անվան:

Կտանջվի Փարավոնը, կսատկի Եգիպտոսը, դարձյալ կփառավորվի բարետոհմիկ ու սիրելի քո ժողովուրդը. քո այգու պարիսպը կնորոգվի վերստին, կբարձրանա ցանկապատը, կկանգնեն աշտարակները. թող սա չկոխոտեն ճանապարհների անցորդները: Կփախչեն գազանները, միջնաշավիղը կխցանվի, ճեղքվածքը կկարկատվի, փշերը կխլվեն արմատից, այգին կվայելչանա բարեբերությամբ, կսրբվի առավել պտղաբերությամբ, կուրախանա բարի մշակը, իսկ տնկագործը կկտրի, կկակղացնի, քաղցունները առատ հորձանքով կարբենան, թող ոչինչ չպակասի պտղաբերության դար-

զուռ քո ապականիչ և ժանդագործ մարախ, մի՛ ի-
մանալի և մի՛ զգալի. ամենեքեան նոքա թառա-
մեսցին տկարացեալք զօրութեամբ քո մեծաւ: Մի՛
և նշխարն դառնութեան երեւեսցի ի շաւիղս քո.
քաղցրութիւն քո սաստիկ՝ մաշեսցէ զդառնու-
թիւնն, և անոյշ ճաշակ քո ամոքեսցէ զտաղտկա-
լին մեր: Տէր, տեսանես զվարատումն երամոց ա-
ղաւնեաց քոց յորսորդաց չարաց, տեսանես զգա-
հավիժութիւն հօտի քո ի գազանաց շաղղակե-
րաց, մի անփոյթ առներ աղաչեմք, այլ հալածեա
զերկաքանչիւրոցն յանդգնութեամբ ի վերայ մեր
յարձակմունս: Ի գրկաց քոց հզօր ոստիցեն ի
սպանումն նոցա նետք սլաքեալք յաղեղանէ
սրտմտութեան քո. որպէս զի գառինք քո ման-
կունք առագաստին սրբոյ ապրեալք և ազա-
տեալք՝ բարձրացուսցեն քեզ օրհնութիւն ընդ Հօր
քում և ընդ Հոգւոյդ սրբոյ. այժմ և միշտ և յաւի-
տեանս յաւիտենից. ամէն:

*մաններից: Եվ դու՝ առաջին ու ճշմարիտ այ-
գի, քո ուռը փուչ չդարձնի ապականիչ ու
ժանտագործ մարախը, ո՛չ իմանալի և ո՛չ
զգալի. դրանք բոլորը կթառամեն՝ տկարացած
քո մեծ զորությամբ: Եվ դառնության նշխարը
չերևա քո շավիղներին, քո սաստիկ քաղց-
րությունը կհալեցնի դառնությունը, և քո ա-
նուշ համը կամոքի մեր տաղտկությունը:*

*Տե՛ր, տեսնում ես քո աղավնիների երամնե-
րի ցրվելը չար որսորդներից, տեսնում ես քո
հոտի գահավիժելը գիշակեր գազաններից, ա-
ղաչում ենք, անուշադրության մի՛ մատնիր,
այլ հալածիր թե՛ մեկի, թե՛ մյուսի հանդուգն
հարձակումը մեզ վրա: Քո հզոր գրկից թո՛ղ
թռչեն զայրույթիդ նետերը՝ սլանալով աղե-
ղից, սպանելու նրանց, որպեսզի քո գառները՝
սուրբ առագաստի մանուկները, փրկվելով ու
ազատվելով, օրհնություն վերառաքեն քեզ,
քո Հոր և Սուրբ Հոգու հետ այժմ և միշտ և
հավիտյանս հավիտենից. ամեն:*

Ե.
ՆՈՐԻՆ ԱՂՕԹՔ

ՀԱՅԵԱՅ տէր ի տառապանս սրտի իմոյ. տես զվէրս անձին իմոյ. բժշկեա զմահաբեր ախտ հոգւոյ իմոյ. քեզ մեղայ, փրկութիւնդ հաւատացելոց քոց. զանձն իմ մատնեցի ախորժելով գազանին յափշտակողի. եկեր զիս եկուլ զիս վիշապն ապստամբ և կամակոր. այց արա ինձ, որ եկիր դարձուցանել ի խորոց անդնդոց, և կորզեցեր ի միջոյ ժանեաց նորա զորդիս հաւատոց: Մարդասիրութիւն քո յաղթեսցէ, շնորհք քո յաւելցին պայծառանալ. աւազակն ամաչեսցէ, բռնութիւն նորա խափանեսցի յիս զօրութեամբ աջոյ քո: Զմեղաւորս եկիր կոչել, զհիւանդս բժշկել. մի՛ զինէն մոռացումն եղիցի քեզ տէր, վասն առաւելութեան ցաւոց և մեղաց իմոց. քեզ անկարելի չիք ինչ, բարերար և հզօր, յորս կամեսցիս: Ես դարձայ ի բարեաց, պատսպարեա ինձ՝ տալ ի բարութենէ քումմէ զպատուիրանաց քոց այսուհետեւ պահեստ անսխալապէս. բեկումն սրտի, որով ողջանան խորտակմունք անձին. արտօսր ցաւագնական, որով ողողանի աղտեղութիւն տղմոյն մեղաց. աղօթք ընդունելիս քեզ, որովք

Ե.
ՆՈՒՅՆԻ ԱՂՈԹՔԸ

Տե՛ր, նայիր իմ սրտի տառապանքին, տե՛ս իմ վերքերը, բուժիր իմ հոգու մահաբեր ախտը. մեղա քեզ, քո հավատացյալների փրկություն, ախորժելով անձս մատնեցի հափշտակող գազանին. կերավ, կուլ տվեց ինձ ապստամբ և կամակոր վիշապը. այցելիր ինձ, դու, որ եկար վերադարձնելու խոր անդունդներից և նրա ժանիքներից կորզեցիր հավատի որդիներին: Թո՛ղ հաղթե քո մարդասիրությունը, քո շնորհները ավելանան պայծառացած. ամաչի ավազակը, նրա սաստկությունը խափանվի իմ մեջ քո աջի զորությամբ: Եկար մեղավորներին կանչելու, հիվանդներին բժշկելու. ես չմոռանամ քեզ, Տե՛ր, իմ ցավերի ու մեղքերի ավելանալուց. քեզ համար անկարելի բան չկա՝ ինչ որ կամենաս, բարերար և հզոր: Ես բարիքից շրջվեցի. պատսպարիր ինձ՝ տալով քո բարությունից, քո պատվիրանները պահելու այսուհետև անսխալ. սրտի բեկումն, որով ամբողջանում է անձի խորտակումը. արցունք ցավագին, որով ողողվում է մեղքի տիղմի աղտեղությունը. քեզ ընդունելի աղոթք, ո-

հաշտի մարդասիրութիւն քո, զոր ցասուցի խոտորնակ վարուք իմովք. միանգամայն և զոր սիրես, և որքան ինչ հաճոյ իցէ ամենակեցոյց և մաքրագորով կամաց քոց:

Խավար խիտ և թանձրաւոծ արկ ի վերայ աչաց իմոց. լո՜յս գերապայծառ անարգել՝ տուր ինձ նշոյլ տեսանելոյ զճանապարհս սիրոյ քո, և զհանգստեան՝ աշխատելոյս մեղօք: Խուլ եղէ, և խոնարհեցայ, ոչ կամելով անսալ փրկական բանից քոց խրատու. մի՛ արգելուր զմատունս քաղցրութեան շնորհաց քոց արկանել ընդ ականջս իմ, և բարձրացուցանել հանել զիս՝ յոր սողեցայ իջի ի խորխորատէ թշուառութեան: Ոչ պահեսցի զսերմանս բանի քո. ոչ ետու արդիւնս արմտեաց քոց որպէս երկիր պարարտ. թէպէտ և ոռոգեցայ բազում անգամ անձրեւով շահեկանաւ. փուշք և տատասկք մոլեցան յիս իբրեւ ի խոպանի. մի՛ իբրեւ զանպիտան երկիր անիծաներ զիս՝ մատնելով հրոյ անշիջանելւոյ և նախանձոտի՝ յուտել որպէս զհակառակորդ:

Գողացան օտարք ոչ զվաստակս իմ, քանզի ոչ ունէի ի բարեաց ինչ, այլ զանձն իմ գլխովին. յափշտակեսցէ զիս ողորմութիւն քո տէր՝ ոչ տալ գազանաց զանձն որ խոստովան առնիցի առ քեզ: Զենումն քո ի խաչին, և աղբերքն արեան և ջրոյ

րով հաշտվում է քո մարդասիրությունը, որ զայրացրի իմ խոտոր վարքով. միանգամայն՝ ում որ սիրում ես, և ինչքան որ հաճո է քո ամենակեցույց ու մաքրագորով կամքին:

Խիտ ու թանձր խավար է իմ աչքերում, գերապայծառ լույս անարգել, նշողում տուր ինձ, տեսնելու քո սիրո ճանապարհը, և հանգիստ՝ մեղքով տառապածիս: Խուլ եղա և խոնարհվեցի՝ չուզենալով քո խրատի փրկարար խոսքը լսել. մի՛ արգելիր քո քաղցր շնորհների մատները խցել իմ ականջները և բարձրացնել, հանել ինձ թշվառության խորխորատից, ուր սողալով իջա: Չպահեցի քո խոսքի սերմերը, արդյունք չտվի քո արմատներին որպես պարարտ երկիր, թեպետ բազմիցս ոռոգվեցի շահեկան անձրևով. փուշ ու տատասկներ մոլեցին իմ մեջ՝ ինչպես խոպանում. ինձ մի՛ անիծիր իբրև անպիտան երկրի՝ մատնելով անշիջանելի և նախանձոտի հրի՝ ուտելու որպես հակառակություն:

Օտարները գողացան ո՛չ իմ վաստակը, որովհետև ոչ մի բարիք չունեի, այլ՝ ամբողջ անձս. թող հափշտակի ինձ քո ողորմությունը, Տե՛ր, գազաններին չտալու նրան, որ խոստովանում է քեզ: Քո զոհվելը խաչի վրա, և արյան ու ջրի աղբյուրները մաքրեցին տիեզերքի աղտեղությունը և ողջացրին մեռելութ-

զտիեզերաց մաքրեցին զաղտեղութիւն և ողջացուցին զմեռելութիւն. մի՛ ես որոշեցայց յառատութենէ շնորհին անճառելւոյ: Կորեայ և տնանկացայ՝ վատ գոլով ծառայ և ապիկար ի գործ արքունի, ճոխացուցանող և բախտապարգեւ՝ որպէս ողորմօղ և անյիշաչար տէր, գտցես և արժանացուսցես յարկի փառաց քոց ընդ վերջինս ծառայից քոց. թէպէտ և ոչ կրեցի, այլ գործեցի զանտեղիս. սակայն և զկամակորն ի նախայօժարութենէ գործողին սովոր ես թողուլ՝ ի վեր քան զբան գոլով մարդասէր: Մի՛ յիշատակեսցին առաջի քո անչափութիւնք գործոց իմոց չարեաց. ձրի են առ ամենեսեան պարգեւք քո, անբաւ են բաշխմունք ողորմութեան քո, անաչառ ես տէր ի բարերարութիւնս առատութեամբ: Մի՛ վասն իմ փոքրկասցին կարկառումն ձեռաց քոց. և շնորհաց քոց յորդաչափութիւնք մի՛ աղօտասցին իբրեւ առ անարժան: Զմահապարտ կեցուցանել ողորմութեամբ՝ բարեհոչակ զթագաւոր ընդարձակ մտօք առնէ. իսկ իրաւամբք միայն գնալ՝ հասարակական է ոոոց իշխեն: Եւ ո՞վ իցէ զուգական ի բարիս առնել անարժանից և ի մահուանէ դարձուցանել զարժանաւորս՝ քեզ, և կամ նման ստուերի ողորմութեան քո, նուազեալ բիւրօք բազմօք յանկանելն չափոյ համեմատութեան: Ըստ մեծութեան քում՝

յունը. ես չզրկվեմ անճառելի շնորհի առատությունից: Կորա և տնանկացա՝ լինելով վատ ծառա և ապիկար արքունի գործի մեջ, ճոխացնող և բախտապարգև, ինչպես ողորմող ու անհիշաչար Տեր, գտնես և արժանացնես քո փառքի հարկին քո վերջին ծառաների հետ. թեպետ չտառապեցի, սակայն անտեղի բաներ գործեցի. բայց [դու] լինելով ավելի, քան Բանը մարդասեր, սովոր ես ներել նախահոժարաբար գործած կամակորին: Քո առջև թող չհիշատակվի իմ չար գործերի անչափությունը. բոլորին ձրի են քո պարգևները, անբավ են քո ողորմության բաշխումները, անաչառ ես, Տե՛ր, առատաձեռն՝ բարերարելիս: Ինձ համար թող չկարճանա քո ձեռքի կարկառումը, և քո շնորհների առատությունը թող չաղոտանա իբրև անարժանի:

Մահապարտին ողորմությամբ ազրեցնելը թագավորին բարեհռչակ է դարձնում լայն իմաստով. իսկ միայն իրավամբ ընթանալ վայել է իշխողներին: Եվ ո՞վ է զուգահավասար անարժաններին բարիք գործել և մահից փրկել արժանավորներին՝ քեզ և կամ քո ողորմության ստվերի նման, նվազած բազում բյուրերով համեմատության չափի անկումով: Քո մեծության համեմատ թող ծավալվեն քո պարգևների տուրքերը. քո առատ փարթամության

ծաւալեսցին տուրք պարգեւաց քոց. ըստ փարթամութեան քում՝ կարօտութիւնս իմ լցցի. ըստ այցելութեան քում՝ կորստականութիւնս իմ գտցի. մի՛ ինեւ՝ այլ քեւ սահմանեսցի ընդարձակութիւն ձեռին քո. մի՛ ես՝ այլ դու եղիցիս կանոն մարդասիրութեան քեզ ինքեան. մի՛ որպէս եսս աղաչեմ՝ այլ որպէս դու կամիս պարգեւեա ինձ. ոչ ըստ փոքրկութեան յուսոյ իմոյ, այլ ըստ անբաւ մեծութեան կամաց քոց ի պարգեւասիրութիւն՝ զեղուսցես յիս. չափ փոքր և կիսալիր, կամ անշարժ և թաթաղման անփորձ ի շտեմարանս քո ոչ գտանի. քանզի ամենափարթամ և առատապարգեւ թագաւորի՝ անթերի ի յորդառատութեանն զգանձակալ մթերայնոցն ունողի՝ ոչ վայելուչ է ճշդաչափութեանն և կշռութեան հրաման, և ոչ ըստ ժամանակի փոփոխման այլազանութիւն. ոչ և ակնառութիւն երեսաց և պատուոյ՝ որք ժտին առնուլ՝ յորմէ ստեղծ զամենեսեան, և սիրէ նովին չափով կամաց: Եւ զիա՞րդ ես տէր՝ միայն գտանիցիմ աղքատեալ առ դուրս արքունեաց քոց յայնքանեաց և յայնպիսեաց մեծաշահութեանց:

Զի թէպէտ և մեղայ յոյժ, սակայն քո եմ. և ոչ դարձուցանել զերեսս ի խնդրողաց կարողութիւն է քեզ. և սիրել, որ ետուր զքեզ ինքն փրկանս գերելոց, և ազատեցեր համօրէն զորս հաւանեցան

համեմատ լցվի իմ կարոտությունը. քո այցելությամբ գտնվի իմ կորստականությունը. ո՛չ ինձնով, այլ քեզնով սահմանվի քո ձեռքի ընդարձակությունը. ո՛չ ես, այլ դու լինես կանոն մարդասիրության ինքդ քեզ. ո՛չ ինչպես ես եմ աղաչում, այլ ինչպես դու ես կամենում՝ պարգևիր ինձ. ո՛չ իմ հույսի փոքրիկությամբ, այլ քո կամքի պարգևասիրության անբավ մեծությամբ զեղես ինձ վրա. փոքր կամ կիսով չափ, անշարժ և լրումին անփորձ բան քո շտեմարաններում չի գտնվում, քանի որ ամենափարթամ և առատապարգև թագավորին՝ անթերի հորդառատությամբ գանձակալ մթերանոց ունեցողին, վայել չէ ժլատության ու կշռության հրաման, և ոչ այլազանություն՝ ըստ ժամանակի փոփոխման և ոչ աչառություն երեսի ու պատվի, որոնք հանդգնում են առնել նրանից, որ ստեղծեց ամեն ինչը և սիրում է կամքի նույն չափով: Եվ, Տեր, ինչո՞ւ միայն ես լինեմ աղքատացած քո արքունիքի դռանը՝ այնքան և այնպիսի մեծաշնորհություններից:

Որովհետև թեպետ խիստ մեղավոր եմ, բայց քոնն եմ, իսկ դու չես կարող երես դարձնել խնդրողներից. այլ՝ սիրել, դու, որ ինքդ քեզ տվիր գերյալներին փրկելու և ազատեցիր բոլորին, որոնք հավատացին քո ավետիքին: Եթե

աւետեաց քոց: Եթէ յարիւն քո ոչ խնայեցեր հեղուլ վասն մեղաւորաց, զդոյզն մի հայցուածս շնորհի արգելո՞ւս մարդասէր: Եթէ զմարմին քո լի արարեր ի սեղան կերողաց զքեզ, զանկեալ փշրանսն ո՞չ պարգեւեսցես կարօտի և սովեցելոյ, թէպէտ և անուանեսցես շուն: Մի՛ տէր մի՛ Աստուած բարերար, մի՛ զոր ոչն երբէք արարեր առ ոք, քանզի ողորմած ես, արասցես առ իս. այլ գթա ընդունելով զբանս պաղատանացս այսոցիկ. որպէս զի և ես ընդ գտեալս ի քէն ողորմութիւն և պարգեւ բարի՝ արժանի եղէց գոհանալ զքէն և փառաւորել զքեզ ընդ Հօր քում և ընդ Հոգւոյդ սրբոյ՝ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

չխնայեցիր արյունդ հեղել մեղավորների համար, չնորհի աննշան խնդրանքս կմերժե՞ս, մարդասեր: Եթե քո մարմնով լիացրիր քեզ ճաշակողների սեղանը, ընկած փշրանքները չե՞ս պարգևի կարոտյալին ու սովածին, թեկուզև շուն անվանես: Մի՛, Տե՛ր, Աստված բարերա՛ր, մի՛ արա ինձ այն, որ ոչ մեկին չես արել երբեք, քանզի ողորմած ես, այլ գթա՝ ընդունելով պաղատանքի այս խոսքս, որպեսզի ես ևս քեզնից ողորմություն և բարի պարգև գտածների հետ արժանի լինեմ՝ գոհանալու քեզանից և փառավորելու քեզ քո Հոր և Սուրբ Հոգու հետ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Զ.
ԱՂՕԹՔ ԸՆԴԴԷՄ ՀՈԳԻՈՅՆ ՀԱՅՀՈՅՈՒԹԵԱՆ

ԿՈՐՈՒՍԵԱԼ անձին իմոյ այցելու մարդասէր, և լոյս անստուեր խաւարեալ մտաց իմոց, Որդի Աստուածոյ, միածին բան և նկարագիր էութեան Հօր քո. անեղանելի և ամենայն եղելութեան արարիչ և գործակից քոյոյ ծնողին. որ հաճեցար լինել մարդ ըստ ճշմարտութեան, անփոփոխելի և առանց այլայլութեան մնացեալ ըստ բնութեան մեծութեան քում. և հաւասար լինել ծառայից քոց և առ ի քէն գոյացելոյ կերպարանին՝ ոչ անարժան համարեցար: Յանպատմելի բարձրութիւն քո մնալով՝ առանց կարծեաց՝ իջեր յանչափ խոնարհութիւն. և զչարչարանս առեր յանձն անչարչարականդ՝ չարչարելի մարդկային բնութեամբ. զի զվտանգեալս չարչարանօք մեղաց ազատեսցես որպէս բարերար: Մեռար մարմնով անմահդ, և միշտ կենդանի և կեանք ըստ բնութեան. որպէս զի զմեռելութիւն մերոյ բնութեանս կանգնեսցես յամենայնի կարողդ: Հայեա և այժմ ի տարակուսեալ մեղօք անձն իմ. զերծո զըմբռնեալս ի վիշապէն՝ զթշուառական հոգի իմ. դարձո ի գլուխ նորա զսերմանեալն ի միտս իմ առ ի

Զ.
ԱՂՈԹՔ ԸՆԴԴԵՄ ՀՈԳՈՒ ՀԱՅՀՈՅՈՒԹՅԱՆ

Ի՛մ կորսված անձի այցելու մարդասեր և իմ խավարած մտքի անստվեր լուս, Աստծու Որդի, Միածին Բան և քո Հոր էութեան պատկեր, անեղ և բոլոր եղածների արարիչ և քո ծնողի գործակից, որ հաճեցիր մարդ լինել ճշմարտապես, անփոփոխելի և անայլայլ մնացած՝ ըստ քո մեծության բնության, և անարժան չհամարեցիր հավասար լինել քո ծառաներին և քեզնից գոյացածների կերպարանքին: Մնալով քո անպատմելի բարձրությանը՝ աներեր իջար անչափ խոնարհության և անչարչարականդ չարչարելի մարդկային բնությամբ չարչարանք հանձն առար, որ իբրև բարերար ազատես մեղքի չարչարանքով վտանգվածներիս: Մարմնով մեռար անմահդ՝ միշտ կենդանի և կյանք՝ ըստ բնությանդ, որպեսզի մեր բնության մեռելությունը դադարեցնես, կարողդ ամեն ինչում: Այժմ ևս նայիր մեղքով տարակուսածիս, փրկիր վիշապից բռնված թշվառական իմ հոգին, իրեն վերադարձրու իմ մտքին նրա սերմանած անօրեն խորհուրդները: Տե՛ր, որ քննում ես մարդկանց խոր-

նմանէ զխորհուրդս անօրէնութեան: Գիտես տէր, որ քանեն զխորհուրդս և զսիրտս մարդան, զի այսպիսւոյ դժնդակութեան չէ կամակից միտք և ախորժակք իմ. և համարիմ բարի ինձ յոյժ զմահ պատուհասի և տանջանաց՝ քան զայնպիսի մտածութիւն, յոր ոչ երբէք յօժարեցի ի կամս իմ, և ոչ բնաւ քաղցրացաւ ինձ:

Արգել յինէն փրկիչ զայնպիսի թոյնս գազանին. մի զիս՝ որ ոչ երբէք կամեցայ թէ խորհեցայց այնպիսի օճիրս, պարտաւորեսցես, այլ զնա որ ընդ քեզ յանդգնեցաւ ի կռիւ իջանել: Ոչ ակնածեաց, ոչ եկեաւ, ոչ զարհուրեցաւ յաստուածային քումմէ իշխանութենէ և ի զօրութենէ. լրբեցաւ ասել յհայհոյականն առաջի ամենայաղթ և անպարտելի զօրութեան քո, և դու ներեցեր տէր. թէպէտ և ետուր սաստիւ պատասխանի: Սաստեա և արդ գթածդ և բարեխնամ յայնպիսի չարեացն սերմանիչ և մշակ. մերժեալ հեռացո և յինէն ըստ որում կամեցարն յայնժամ. և ինձ ներեսցես՝ լինելով քաւիչ և ողջացուցիչ: Եթէ ոչ բարկութիւն քո կործանեսցէ զնա, զիա՞րդ ես տկար և անզօր գոլով՝ կարացից մարտնչել ընդ չարութեանն արուեստաւորի. որ երբեմն յայնքան իշխեաց գալ լկնութեան լրբութիւն, մինչ զի աթոռ ի բարձունս հակառակ քեզ կարծեաց զիւր, և ասաց դնել յամպս և ի մէջ աստեղաց: Վասն որոյ իջուցեր զնա ի դժոխս ո-

հուրդներն ու սրտերը, գիտես, որ իմ միտքն ու ախորժանքը այսպիսի դժնդակության կամակից չեն: Ինձ համար խիստ բարի եմ համարում պատուհասով մահն ու տանջանքը, քան այնպիսի մտածությունը, որին երբեք չհոժարեցի իմ կամքով, և բնավ ինձ չքաղցրացավ:

Փրկիչ, ինձնից հեռացրու գազանի այն թույները, ինձ, որ երբեք չկամեցա խորհել այնպիսի ոճիրներ, այլ՝ նրան, որ հանդգնեց քեզ հետ կռվի մեջ մտնել: Զակնածեց, չերկնչեց, չզարհուրեց քո աստվածային իշխանությունից ու զորությունից, լրբացավ քո ամենահաղթ ու անպարտելի ուժի առջև խոսել հայհոյական բաներ, և դու ներեցիր, Տեր, թեպետև սաստելով պատասխանեցիր: Այժմ նույնպես սաստիր, գթած և բարերար, այնպիսի չարիքի սերմանիչին ու մշակին, մերժելով հեռացրու և ինձնից, ինչպես կամեցար այն ժամանակ, և ներիր ինձ՝ լինելով քավիչ ու ողջացնող: Եթե քո բարկությունը չկործանի նրան, անզոր և տկար լինելով՝ ես ինչպե՞ս կկարենամ մարտնչել չարության արհեստավորի դեմ, որ երբեմն հանդգնեց գալ այնքան լկտի լրբության, մինչև իսկ իրենը կարծեց քո աթոռին հակառակ բարձրության և կարծեց դրված ամպերի և աստղերի միջև: Որի համար նրան իջեցրիր ներքին դժոխք և մատնեցիր

մանն, և մատնեցեր խաւարի մինչեւ ի ժամանակ մի, ցորժամ եկիր առ ծառայս քո գերեալս ի նմանէ. հզօրդ քան զհզօրս՝ կապեցեր զնա, պահելով յօրն հատուցման՝ բովանդակ իւրոյ անօրէնութեանն և չարութեան:

Արդ զի նեղեալ եմ ես վաղվաղակի լուր ինձ առնել զդատաստան յոսոխէն իմմէ. քանզի ձանձրացաւ յիս հոգի իմ, և սիրտ իմ խռովեցաւ յիս: Զխածմունս գազանին ողջացո փրկիչ. զմուխ նետից նորա յարձակմունս յանձն իմ՝ բժշկեա ողորմած և անոխակալ. զչարաչար յարձակմունս նորա ի վերայ՝ սանձիւք ցասման քո նահանջեա ընդ կրունկն. յափշտակեա զիս ի ժանեաց նորա կարօղդ յամենայնի. փշրեաց զոսկերս իմ, և ելից յինէն զկուշտ իւր անհագինն անուանեալ վիշապ. դու որ ողորմիսդ կորուսելոց յայսպիսի թշուառութեան՝ հնարեցիր անձին իմոյ փրկութիւն: Հեղձոյց ի խաւարի զկեանս իմ եղեալն կամօք խաւար, բնաւորապէս լոյսդ ճշմարիտ ծագեա ինձ յամենասփիւռ ընդարձակ ճառագայթից քոց: Զիշխեմ բանալ զբերան իմ առաջի քո. կարկեցան ի համարձակութենէ շրթունք իմ, ծածկեաց զիս ամօթ երեսաց իմոց. սակայն վստահանալով յանպատմելի անոխակալութեան քո անդունդս՝ մատուցանեմ քեզ պաղատանս. մի՛ դատարկ և ունայն գոգով արձակեր զիս. մի՛ փակեր յինէն յառատու-

խավարի մինչև մի ժամանակ, երբ եկար նրանից գերված քո ծառաների մոտ. հզորդ հզորներից, կապեցիր նրան, պահելով [մինչև] իր ամբողջ անօրինության ու չարության հատուցման օրը:

Արդ, քանի որ նեղված եմ ես, շտապ լսիր ինձ՝ դատաստան տեսնելու իմ ոսոխին, որովհետև իմ հոգին իմ մեջ ձանձրացավ, և խռովեց իմ սիրտը: Գազանի կծածները ողջացրու, Փրկիչ, նրա նետերի խոցածը ինձ վրա՝ բժշկիր, ողորմած և անոխակալ, նրա չարաչար հարձակումները քո ցասման սանձերով դարձրու կրունկի վրա, խլիր ինձ նրա ժանիքներից, կարողդ ամեն ինչում: Ահագին կարծած վիշապը փշրեց իմ ոսկորները և լցրեց իր որովայնը. դու, որ ողորմում ես այսպիսի թշվառության մեջ կորածներին՝ իմ անձին փրկություն գտիր: Իմ կյանքը խեղդեց խավարում կամովին խավար եղածը, բնականորեն ճշմարիտ լույսդ ծագեցրու ինձ քո ամենասփյուռ ընդարձակ ճառագայթներից: Չեմ համարձակվում քո առջև բանալ իմ բերանը. իմ շրթունքների համարձակությունը դադարեց, ինձ ծածկեց երեսիս ամոթը, բայց վստահելով քո անպատմելի խոր անոխակալությանը՝ քեզ պաղատանք եմ մատուցում. ինձ մի՛ արձակիր փուչ ու դատարկ գոգով, իմ դեմ մի՛ փակիր քո առատ պարգև-

թեան պարգեւաց քոց դրունս. տուր ինձ զխնդրուածս իմ զայսոսիկ. բաց զբերանոյ իմոյ զպապանձումնս յամօթոյ անօրէնութեան. հալածեա զդարանակալ առեւծն յորսորդութենէ կորստեան անձին իմոյ. թէպէտ և չեմ արժանի մասին ողորմութեան և ոչ փոքու անգամ, այլ դու և զանարժանս սովոր ես թոշակել ողորմութեամբ քաղցրութեան քո: Կարօտ եմ շնորհաց քոց, բաղձամ խնդրել ի քէն զարժանի մեծութեան քո. բայց անհամարձակութիւն անձին իմոյ ափ ի բերան առնէ զիս: Եթէ բացցես զբերան իմ, եթէ զխորհուրդս ամօթոյ ցրուեսցես յինէն, եթէ զանձայնութիւն լեզուի իմոյ բժշկեսցես, յանժամ կալայց համարձակութիւն առաջի քո. յայնժամ զշարժել շրթանց իմոց ի պաղատանս և յաղօթս թերեւս ոչ արգելից. կեցից ողորմութեամբ ընդ ծառայս քո և ընդ սիրելիս անուան քո, և օժանդակութեամբ նոցա և ձեռն կարկառելով՝ իշխեցից մատուցանել քեզ պատիւ և փառս հանդերձ երկրպագութեամբ ընդ Հօր քում և ընդ Հոգւոյդ սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ների դռները, տո՛ւր ինձ այս խնդրածներս, բա՛ց իմ բերանի պապանձումը անօրինության ամոթից, հալածի՛ր դարանակալ առյուծին, որ իմ կորստյանն է հետամուտ. թեպետև արժանի չեմ ողորմության բաժնի նույնիսկ փոքրինչ, բայց դու սովոր ես և անարժաններին քո քաղցրության ողորմությամբ նպաստավորել:

Կարոտ եմ քո շնորհներին, ըղձում եմ խնդրել քեզնից քո մեծությանն արժանին, բայց անհամարձակությունս ինձ ափիբերան է անում: Եթե բանաս իմ բերանը, եթե ամոթի գաղտնիքները ցրես ինձնից, եթե իմ լեզվի անձայնությունը բժշկես, այնժամ համարձակություն կստանամ քո առջև, այնժամ իմ շրթունքի շարժելը պաղատանքի և աղոթքի համար միգուցե չարգելվի. կմնամ ողորմությամբ քո ծառաների և քո անվան սիրելիների հետ, և նրանց օժանդակությամբ և, ձեռք կարկառելով, կհամարձակվեմ քեզ պատիվ և փառք մատուցել երկրպագությամբ քո Հոր և Սուրբ Հոգու հետ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Է.
ԱՂՕԹՔ ԱՌ ՀՈԳԻՆ ՍՈՒՐԲ

ԱՆԲԱՒԵԼԻ և բազմազան շնորհաց առատապէս մատակարար և բաշխիչ Հոգիդ սուրբ. հոգի ճշմարտութեան, հոգի ելող ի Հօրէ, հոգի մխիթարիչ, Աստուած ճշմարիտ, ամենայնի արարիչ ընդ Հօր և ընդ Որդւոյ, և աստուածային նախախնամութեամբ քով բերող զամենայն: Որ ըստ կամաց քոց տիրականաց բաժանես ըստ իւրաքանչիւր չափու հաւատոց, և եւս առաւել զառ ի քէն առատահոս շնորհաց պարգեւս, և անճառելի գթութեամբ սիրոյ քո ամենազան բարութեամբք հարստացուցեալ բարեզարդապէս ճոխացուցանես զեկեղեցի քո՝ առաքելովք, մարգարէիւք, վարդապետօք, և այլովք դասուք արժանաւորեցելովք աստուածային պարգեւաց քոց. յորում եդիր և զթողութեան մեղաց վստահութիւն, և տկարութեան մերոյ բնութեանս մարդասիրապէս ետուր զօրութիւն վերստին ուղղութեան և կենդանութեան ի մահուանէ մեղաց:

Հայեա քաղցրութեամբ քով ամենագութ և յիս անարժան ծառայս քո, և տուր ինձ սիրտ բեկեալ և

Է.
ԱՂՈԹՔ՝ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒՆ

Անբավելի և բազմազան շնորհների առատաձեռն մատակարար ու բաշխող Սուրբ Հոգիդ, ճշմարտության Հոգի, Հորից բխող Հոգի, մխիթարիչ Հոգի, ճշմարիտ Աստված, ամեն ինչի արարիչ՝ Հոր և Որդու հետ, և քո աստվածային նախախնամությամբ ամեն ինչ բերող: Որ քո տիրական կամքով բաժանում ես յուրաքանչյուրին հավատի չափով, և առավել ևս՝ քեզնից առատապես հոսող պարգևներ, և քո սիրո անճառելի գթությամբ ամեն տեսակ բարություններով հարստացնելով՝ բարեզարդ ճոխացնում ես քո եկեղեցին՝ առաքյալներով, մարգարեներով, վարդապետներով և այլ դասերով արժանավորված քո աստվածային պարգևներով: Այնտեղ դրիր և մեղքերի թողության վստահությունը, և մեր բնության տկարությանը մարդասիրաբար զորություն տվիր վերստին ուղղվելու և կենդանանալու մեղքի մահից:

Քո ամենագութ քաղցրությամբ նայիր և ինձ՝ անարժան քո ծառային և տուր բեկված սիրտ և զղջման հոգի. զորացրու մտքիս լքու-

հոգի զղջման. զօրացո՛ զլքումն մտաց իմոց. և հալածեա զանյուսութեան ստուեր յոգւոյ ծառայի քում. և մեծութեամբ ողորմութեան քո՝ զասատկութիւն անօրէնութեան իմոյ՝ որ հարկանէ ցանկ զիս տանջեալ անբժշկական խղճիւ, քաւեա որպէս բարերար Աստուած. զտիղմն անառակութեան գործոց իմոց լուա ամենասուրբդ և իշխան սրբութեան. ի գլորմանէ մեղաց կանգնեա, զխաւար նորա հալածեա, և զվէրս առ ի նմանէ զսատակողականս անձին իմոյ՝ բժշկեա. զպատճառս չարեացն իւրովք նենգութեամբքն և զամենայն պատրանս խաբէութեան նորա մերժեա յինէն. և զհաւանութիւն անմտութեան իմոյ անտես արա և մի յիշեր: Մեծապէս անօրինեալ ցասուցի զկամս քաղցրութեան քո. և ոչ իշխեմ համարձակապէս մատուցանել աղաչանս առաջի քո. քանզի երկնչիմ՝ յիշեալ զոր ինչ գործեցի, գուցէ անարժան գոլով և լի աղտեղութեամբք՝ դառնացուցից միւսանգամ զամենասուրբ կամս քո: Բայց նեղութիւն տարակուսանաց անձին իմոյ եղկելւոյ և անհրաժեշտ երկեւղ վրէժխնդրութեանն՝ իշխել կալ առաջի քո հարկեցուցանէ զիս, մանաւանդ անիմանալի քաղցրության քո անեզրական վստահությունը հարկադրում են ինձ համարձակվել կանգնելու քո առջև:

մը, հալածիր քո ծառայի հոգուց անհուսության ստվերը. և, որպես բարերար Աստված, քո ողորմության մեծությամբ քավիր իմ անօրինության սատակությունը, որ մշտապես խփում է ինձ՝ տանջելով անբուժելի խղճով. քավի՛ր որպես բարերար Աստված. իմ անառակության գործերի տիղմը լվա, ամենասուրբդ և իշխան սրբության. կանգնեցրո՛ւ մեղքի գլորմունքից, հալածիր նրա խավարը և նրանից ստացած մահացու վերքերս բժշկիր. չարիքի պատճառները իրենց նենգություններով և նրա խաբեության բոլոր պատրանքները հեռացրու ինձնից և անմտության հավանելս անտես արա ու մի՛ հիշիր: Մեծապես անօրինացած՝ ցասման դարձրի քաղցր քո կամքը. և չեմ հանդգնում համարձակապես աղաչանք մատուցել քեզ, որովհետև վախենում եմ՝ հիշելով արածներս, գուցե լինելով անարժան և աղտեղությամբ լի՝ նորից դառնացնեմ ամենասուրբ քո կամքը: Բայց իմ եղկելի անձի տարակուսանքի նեղությունը և անհրաժեշտ վրեժխնդրության երկյուղը, մանավանդ անիմանալի քաղցրության քո անեզրական վստահությունը հարկադրում են ինձ համարձակվել կանգնելու քո առջև:

Եվ արդ, ողորմած, տե՛ս որքան կարիքն ու-

Եւ արդ ողորմած, տես ո՛րքան պէտս ունիմ բարերարութեան քում. և հայեաց քանի՞ սաստիկ են վիշտք անձին իմոյ թշուառացելոյ. մատիր խոնարհեա կարօղդ ամենայնի բժշկել զանբժշկելի հարուածոցս ծանրութիւն մեծութեան, քանզի հնարաւոր են քեզ անհնարինք. և ոչ կարէ կալ առաջի լուսոյ քաղցրութեան քո խաւար ատելի վարուց իմոց. և տեղի տան վէրք նեխեալ հոգւոյ իմոյ բժշկական զօրութեան քո մեծի: Եւ զի՞նչ իցէ բռնութիւն հակառակ զօրացեալ յընդհանրականս, որ կարիցէ կալ և տեղի ունել ընդդէմ ամենազօր հրամանի քում: Վասն որոյ աղաչեմ, նայեա և մի լուր արտասուաց իմոց. ջնջեա զանօրէնութիւնս իմ, և դարձո յուրախութիւն զսուգ իմ. զմոլորեցուցիչն հալածեա յինէն, և զմոլորեալ ծառայս քո խնդրեա. ընկալ և ժողովեա ի փարախ հօտի քո, և ողորմութիւն ի քէն գտանելոյ արժանի արա: Որ ոչ դարձուցանես զերեսս քո յորոց խնդրենն, մի՛ և յինէն դարձուցաներ. որ ողորմիսդ թշուառացելոց յամենայն ժամ, տուր և ինձ մասն յողորմութենէ քումմէ. որ խնայեսդ քաղցրութեամբ յորս դառնան ի ճանապարհաց իւրեանց չարաց, խնայեա և յիս թէպէտ և անագան ուրեմն խնդրեմ դառնալ. որ ոչդ ումեք պահես ոխս յետ

նեմ քո բարերարության, և նայի՛ր, որքան սաստիկ են իմ թշվառացած անձի վշտերը. մոտեցիր, խոնարհվիր, կարողդ ամենայնի, բժշկելու անբուժելի հարվածների մեծ ծանրությունը, քանի որ քեզ համար հնարավոր են անհնարին բաները. և քո քաղցրության լույսի առջև չի կարող կանգնել իմ ատելի վարքի խավարը. և իմ հոգու նեխած վերքերը տեղի են տալիս քո բժշկական մեծ զորության դեմ: Եվ ի՞նչ է զորացյալ ընդհանրականին հակադրվող բռնությունը, որ կարողանա լինել և տեղի ունենալ քո ամենազոր հրամանի դեմ: Ուստի աղաչում եմ, նայիր իմ արցունքներին և մի՛ լռիր, ջնջիր իմ անօրինությունը և իմ սուգն ուրախության փոխարկիր, ինձնից հալածիր մոլորեցնողին, և փնտրիր ինձ՝ մոլորյալ ծառայիդ. ընդունիր և հավաքիր քո հոտի փարախում և արժանացրու քեզնից գտնելիք ողորմությանը:

[Դու], որ երես չես դարձնում խնդրողներից, ինձնից ևս մի՛ դարձնիր, որ ամեն ժամ ողորմում ես թշվառացածներին, ինձ ևս մաս տուր քո ողորմությունից. [դու], որ քաղցրությամբ խնայում ես նրանց, որ դառնում են չար ճանապարհներից, խնայիր և ինձ, թեպետ ուշացած եմ խնդրում դառնալ. [դու], որ ոչ

հրաժարելոյ յատելեացն քեզ գործոց, լեր և առ իս անոխակալ: Մեծապարգեւդ՝ տուր ինձ սակաւիկ. և յամենայնի առատդ մի՛ զրկեր զիս յողորմութենէ քումմէ. քաղցրահայեացդ առ որս ի քէն գոյացան, և զիս զձեռաց քոց գործ մի անտես առներ. զի ընդ ամենեսեան ոյք սիրեն զքեզ և ես արժանի եղէց սիրել և պահել զպատուիրանս զուգապէս նոցա ի փրկութիւն անձին իմոյ, և փառաւորել ընդ նոսին զքեզ՝ ուղիղ և ճշմարիտ խոստովանութեամբ ընդ Հօր և ընդ Որդւոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

մեկի դեմ ոխ չես պահում քեզ համար ատելի գործերից հրաժարվելուց հետո, անոխակալ եղիր և իմ նկատմամբ: Մեծապարգևդ, ինձ տուր սակավիկ, ամեն ինչով առատդ, մի՛ զրկիր ինձ քո ողորմությունից՝ քաղցրահայացդ, քեզնից գոյացածների հետ նաև ինձ՝ քո ձեռքի գործին, մի՛ անտեսիր, որպեսզի բոլորի հետ, որ քեզ սիրում են, և ես արժանի լինեմ՝ սիրելու և պահելու պատվիրանները նրանց հավասար՝ ի փրկություն անձիս, և նրանց հետ ուղիղ ու ճշմարիտ խոստովանությամբ փառավորելու քեզ Հոր և Որդու հետ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Ը.
ԱՂՕԹՔ ԱՌ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ

ՈՐՆՈՒԹԻՒՆ անճառելի և արարչակից համագոյ և միասնական սուրբ Երրորդութիւն. յորոյ դաւանութենէ ոչ երբէք երկմտեցի. զոր սիրեցի և պաշտեմ ի մանկութենէ, որոյ յոյս փրկութեան ցանկ ուրախ զիս առնէ. որոյ յիշատակաւ մխիթարիմ հանապազ ի հեղձուցիչ և ի խաւարական տրտմութենէս:

Այլ արա ծառայի քում առ ի չտալ ներգաւորին պարծել յաղթութեամբ ի վերայ իմ. լեր ինձ զօրութիւն, մանաւանդ եթէ պատերազմեաց վասն իմ ընդ դառն և խիստ ախոյանին. զի տկար է զօրութիւն մտաց և մարմնոց իմոյ կալ ընդդէմ չարախոհութեան նորա. սակայն քեւ մարտուցեալ իմ տկարանայ վիշապն, և կորանայ ամօթով. իսկ ես յաղագս քո եղէց բարձրագլուխ և լցեալ բերկրութեամբ. զի չիք հնար զքեզ կրողաց և յանուն քո խրախուսելոց ուղիղ մտօք՝ եթէ ոչ յաղթեսցեն նմա. որպէս զի զայս կատարեալ և կնքեալ՝ ծառայ քո ըստ ճշմարտութեան արժանի եղէց կոչիլ:

Ը.
ԱՂՈԹՔ՝ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆԸ

Ո՛վ բնություն անճառելի և արարչակից համագոյ և միասնական Սուրբ Երրորդություն, որի դավանությունից երբեք չերկմտեցի, որին սիրում եմ ու պաշտում մանկությունից, որի փրկության հույսն ինձ ուրախացնում է, որին հիշելով՝ մխիթարվում եմ հանապազ հեղձուցիչ ու խավարային տրտմությունից:

Ա՛յլ արա քո ծառային՝ նենգավորին չթողնելով պարծենալ հաղթանակով իմ դեմ, զորությո՛ւն եղիր ինձ, մանավանդ պատերազմիր ինձ համար դառն և խիստ ախոյանի դեմ, որովհետև իմ մտքի ու մարմնի ուժն անկարող է ընդդիմանալ նրա չարամտությանը: Բայց թե քեզնով մարտնչեմ, տկարանում է վիշապը և կորանում ամոթով, իսկ ես քո շնորհիվ բարձրագլուխ կլինեմ և բերկրությամբ լցված, որովհետև հնար չկա քեզ կրողներին և ուղիղ մտքով քո անվամբ խրախուսվածներին, որ չհաղթեն նրան, որպեսզի այս կատարելով ու կնքելով՝ քո ծառան կոչվելու արժանի լինեմ ճշմարտապես:

Եւ բերան իմ լցցի գոհութեամբ յօրհնել զփառս քո Հայր ճշմարիտ Որդւոյ քո միածնի, և Բան Հօր մամնացեալ փրկիչ և Աստուած ի վերայ ամենայն երկրի. և Հոգի սուրբ Աստուծոյ հաղորդ յամենայն մեծութիւնս և ի գործս Հօր և Որդւոյ, նոյն գոլով ըստ բնութեան որպէս յԱստուծոյ Աստուած ճշմարիտ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից:

Եվ իմ բերանը կլցվի գոհությամբ՝ օրհնելու քո փառքը, Հայր ճշմարիտ, քո Միածին Որդու և Բան Հոր՝ մարմնացած Փրկիչ և Աստված ամբողջ երկրի վրա. և Աստծու Սուրբ Հոգի՝ հաղորդ ամեն մեծություններին և Հոր ու Որդու գործերին, նույն լինելով՝ ըստ բնության որպես Աստծուց Աստված ճշմարիտ. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Թ.
ԱՂՕԹՔ ԱՌ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆՆ

Ա Ռ քեզ տէր՝ մի և միայն՝ ապաւինեալ աղաչեմ, որ անփոփոխելիդ ես յէութեան, Երրորդութիւն անքակ և կատարեալ, բնութիւն անհասական, անտես յեղականաց՝ բանաւորաց և իմաստնոց. յորմէ առին սկիզբն գոյացութեան ամենայն բնութիւնք աննիւթից և նիւթականաց, և կատարեալ հաստատեցան ի փառս և ի ծանօթութիւն անքննելի աստուածութեանդ, այլ ոչ ի լրումն ինչ պիտոյից բաւականիդ: Մի մերժեր յերեսաց քոց զծառայս քո. և մի անտես առներ՝ վասն որոյ հանդերձեալ եմ կարդալ առքեզ. որ նախ քան զխնդրելն շնորհես զպարգեւս քո. և յառաջ քան զհայցելն գտանիս՝ որոց մատչինն առ քեզ սիրով. զի ոչ յերեսս, այլ ի խորհուրդս հայիս ծածուկս: Արդ տես տէր զտառապանս սրտի իմոյ, և զխռովութիւն խորհրդոց իմոց վասն մեղաց՝ խաղաղացո սուրբ շնորհիւ քո: Ելին վերացան անօրէնութիւնք իմ մինչեւ յերկինս.ըստ բազում գթութեան քում տէր ջնջեա զնոսա. զհիւանդութիւնս իմ բժշկեա. ողջացո զսաստկութիւն վիրաց իմոց,

Թ.
ԱՂՈԹՔ՝ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆԸ

Քեզ ապավինած եմ աղաչում, մի և միակ Տեր, որ էությամբ անփոփոխելի ես, Երրորդություն անքակտելի և կատարյալ, անհաս բնություն, անտես եղականներին՝ բանավորներին ու իմաստուններին: Քեզնից ստացան գոյության սկիզբ աննյութների ու նյութականների բոլոր բնությունները և կատարելապես հաստատվեցին ի փառս և ի ծանոթություն անքննելի աստվածությանդ, և ոչ թե բավականիդ պետքերը լրացնելու: Մի՛ վտարիր քեզնից ինձ՝ քո ծառային, և մի՛ անտեսիր՝ ինչի համար եմ ուզում դիմել քեզ, որ խնդրելուց առաջ շնորհում ես քո պարգևները և հայցելուց առաջ գտնում ես՝ ովքեր մոտենում են քեզ սիրով, քանի որ ոչ թե երեսներին, այլ ծածուկ խորհուրդներին ես նայում:

Արդ, Տեր, տե՛ս իմ սրտի տառապանքը և իմ գաղտնիքների խռովությունը մեղքերից խաղաղեցրու քո սուրբ շնորհներով: Իմ անօրինությունները վերև բարձրացան մինչև եր-

զոր կրեցի ի մարդասպան աւազակէն. թէպէտ և ախորժելով կամաց մատնեցի նմա զիս ինքն, սակայն դու տէր յափշտակեա զիս ի նմանէ: Որ կորզեսդ ի միջոյ ժանեաց՝ և ի խորոց անդնդոց դարձուցանես, փշրելով զգլուխ վիշապին՝ կորզեա և զիս. վասն զի եկեր զիս և եկուլ զիս վիշապն ահագին, մանրամասն կոտորեաց զիս, և ելից յինէն զկուշտ իւր: Որ առնեսդ իրաւունս զրկելոց դատաւոր մարդասէր՝ և լնուս մեծամեծ բարութեամբ զկարօտս, հայեաց յաղքատութիւնս իմ, զի տնանկացայ և կորեայ. ոչ ունիմ իրաւունս և համարձակութիւն խնդրուածոց, այլ մատուցանեմ աղերս որպէս յանցաւոր. զի գիտեմ զկամաց քոց քաղցրութիւն. լուր տէր և անսա այժմ առաջի քո խոստովանութեանս, և մի պահանջեր զհամար պարտեաց իմոց:

Խոտորեցայ ի քէն, մի երթար և դու խոտորնակս. անօրինեցայ, մի հատուցաներ ինձ զկշիռն. մոռացայ զառ ի քէն տուեալ պատուիրանսն, մի ոսոխապէս մտաներ ի դատաստան ընդ ծառայի քո: Զոր աւանդեցեր ինձ՝ վատնեցի զգանձն, և այժմ եմ աղքատ և չքաւոր, քաղցեալ և ծարաւի, բոկ և մերկ, և աննշան ամենեւին. և ոչ ոք է որ լնու զայնքան պակասութիւն թշուառացելոյս. այլ և

կինք. քո բազում գթութեանց համաձայն ջնջիր դրանք, Տեր. բուժիր իմ հիվանդությունը. լավացրու սաստկությունը իմ վերքերի, որ կրեցի մարդասպան ավազակից. թեպետ ախորժելով կամովին ինքս ինձ մատնեցի նրա ձեռքը, բայց դու խլիր ինձ նրանից, Տեր: Որ կորզում ես ժանիքների միջից, ե՛ւ անդունդի խորքից վերադարձնում ես, վիշապի գլուխը ջնջելով՝ կորզիր և ինձ, որովհետև ինձ կերավ և ինձ կուլ տվեց ահագին վիշապը, ինձ բաժանեց մանր մասերի և ինձնով լցրեց իր որովայնը: Մարդասեր դատավոր, որ զրկվածների իրավունքն ես պաշտպանում և մեծագույն բարությամբ լրացնում պակասը, նայիր իմ աղքատությանը, որ տնանկացա ու կորա, չունեմ խնդրելու իրավունք և համարձակություն, այլ աղերսում եմ իբրև հանցավոր, որովհետև գիտեմ քո կամքի քաղցրությունը: Տեր, լսիր և անսա այժմ խոստովանությունս քո առջև և մի՛ պահանջիր իմ պարտքերի հաշիվը:

Շեղվեցի քեզնից, մի՛ գնա և դու շեղ. անօրինեցի, ինձ մի՛ հատուցիր հակակշիռը. մոռացա քո տված պատվիրանները, թշնամաբար դատաստանի մի՛ մտնիր քո ծառայի դեմ: Վատնեցի գանձը, որ ինձ ավանդեցիր, և այժմ աղքատ ու չքավոր եմ, քաղցած ու ծարավ,

կրկին նեղութեամբ տառապեցուցանեն զիս քաղաքացիք աշխարհիս այսորիկ՝ յանարժան վաստակս կեղելով զեղկելի կեանս, և ոչ տան ինձ գոնէ սակաւ մի հանգիստ. վասն որոյ յանսահման գթութիւն քո վստահանալով, հայր, փախուցեալ յայսքան կրից տառապանաց՝ դիմեցի առ քեզ: Արդ մի՛ եղէց վրիպեալ յակնկալութենէ քումմէ՝ միայն գթած և անչարայուշ. թէպէտ զորդիութեանն կորուսի զցանկալի անուն, այլ ի տէրութենէ քումմէ մի եղէց զրկեալ. զի որ ոք գայցէ առ քեզ՝ ոչ եղիցի արտաքսեալ, այլ վայելեսցէ ի խնամս քո:

Զաղքատութիւն իմ ճոխացո, թէպէտ և ոչ ըստ առաջնումն. կերակրեա զանձն իմ սովամահ, գէթ ի փշրանաց ամենառատ սեղանոյ քո. զովացո զպապակումն շրթանց իմոց՝ միայն ծայրիւ մատին. զխառնելեացն զառատ արբումն, և զսուրբ զենելեացն ամենաշնորհ կերակուր՝ լքի անզգամութեամբ. սակայն ի չափաւորէ անտի մի՛ եղէց զրկեալ: Տուր յոտս իմ կօշիկս, զի մի՛ դարձեալ յօձէ անտի խածեալ անկայց և իսպառ կորեայց. զմերկութիւնս իմ զգեցո, թէպէտ և ոչ առաջնով զգեստու. զի թէ իցէ իսկ մաշկեղէն, սակայն ի քէն կազմեալ. որպէս զի մի եղէց միւսանգամ ցրտա-

բոբիկ ու մերկ, և ամբողջապես աննշան, և ոչ ոք չկա, որ լրացնի թշվառացածիս այսքան պակասը, այլ կրկնակի նեղությամբ տառապեցնում են ինձ այս աշխարհի քաղաքացիները՝ անարժան վաստակներ շորթելով իմ եղկելի կյանքից, և գոնե մի քիչ հանգիստ չեն տալիս ինձ: Դրա համար վստահանալով քո անսահման գթությանը, Հայր, փախած այսքան կրած տառապանքներից, դիմեցի քեզ: Արդ, չվրիպեմ քո ակնկալիքից, միակ գթած և անչարահուշ: Թեպետ կորցրի որդիական ցանկալի անունը, սակայն չզրկվեմ քո տերությունից, որովհետև ով որ գա քեզ մոտ, չի արտաքսվի, այլ կվայելի խնամքդ:

Իմ աղքատությունը ճոխացրու, թեկուզև ոչ առաջվան պես, կերակրիր սովամահ անձս, գեթ քո անսպառ սեղանի փշրանքներից. զովացրու շրթունքներիս պապակությունը միայն մատիդ ծայրով: Խառնված [ըմպելիքի] առատ արբումը և սուրբ զոհերի ամեն ինչ շնորհող կերակուրը լքեցի անզգամությամբ, բայց այն չափավորից զրկված չլինեմ: Կոշիկ տուր ոտքիս, որ նորեն այն օձից կծված չընկնեմ ու կորչեմ իսպառ. զգեստավորի՛ր իմ մերկությունը, թեկուզև ոչ առաջին զգեստով, որ թեև մաշկեղեն է, սակայն՝ քո կազմածը, որպեսզի

կէզ և խորշակահար՝ ի կրկին և հակառակ զայս ունող բանսարկուէն: Դիր ի ձեռս իմ զնշան մատանւոյ. զի մի՛ թուեցայց ոչ գոլ քո, և վասն այնորիկ դարձեալ վիրաւորեցայց. այլ ի սուրբ կնքոյ քումմէ զարհուրեալ հրովքն ստամբակն չար՝ փախիցէ, և ապրեցայց ես: Արդ բաւականդ ամենայն բարութեանց առ ամենեսին՝ զունայնացեալս յայսքան բարութեանց լցո յանմուազ փարթամութենէ քումմէ, և զերծո զիս ի տառապեցուցչաց իմոց. և արա վաստակել ի սուրբ այգուջ քում առանց դանդաղանաց, թէպէտ և տարաժամ. զի թերեւս ի ձեռանէ քումմէ ընդունել զշնորհս ընդ վերջինս արժանի եղէց, և մատուցանել ընդ նոսին գոհութիւն և փառս սրբոյ և անզուգական համապատիւ Երրորդութեանդ. այժմ և միշտ. յաւիտեանս յաւիտենից. ամէն:

վերստին ցրտակեզ ու խորշակահար չլինեմ կրկին հակառակվող բանսարկուից: Իմ ձեռքին մատանու նշան դիր, որ չթվամ ոչ քոնը, և այդ պատճառով դարձյալ վիրավորվեմ, այլ քո սուրբ կնիքից զարհուրած չար ապստամբը փախչի յուրայիններով, և ես փրկվեմ:

Արդ, որ բոլոր բարություններն ունես բոլորի համար՝ այսքան բարություններից ունայնացածիս լցրու քո աննվազ փարթամությամբ և փրկիր ինձ տառապեցնողներից, և առանց դանդաղելու ինձ թույլ տուր աշխատել քո սուրբ այգու մեջ, թեկուզև տարաժամ, որ միգուցե քո ձեռքից շնորհներ ընդունելու արժանի լինեմ վերջինների հետ, և նրանց հետ գոհություն և փառք մատուցեմ սուրբ և անզուգական համապատիվ Երրորդությանդ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Ժ.
ԱՂՕԹՔ ԱՌ ՈՐԴԻՆ

ՈՐԴԻ և բան Հօր՝ Աստուած ճշմարիտ, որ եղեր մարդ կատարեալ, և հաճեցար չարչարանս յանձն առնուլ, զի զչարչարեալս ի մեղաց զազգս մարդկան զերծուցես ի չարչարանաց անտի. և մեռար մարմնով վասն խափանելոյ զմահ. չեմ արժանի կարդալ զանուն քո, բայց վասն անճառելի սիրոյ քո մեծութեան՝ որ խոնարհեցոյց զքեզ յայս ամենայն, վստահանամ աղաչել զհեզութիւն քո: Լուր ինձ վասն չարչարանաց քոց, և ընկալ զխոստովանութիւն սրտի և շրթանց իմոց, զոր մատուցանեմ առաջի քո այսօր. և շնորհեա ինձ ազատութիւն ի ծառայութենէ մեղաց, և քաւութիւն գործոցն անօրէնութեան:

Տոուունք մեղաց պատեցան զինեւ ի մանկութենէ իմմէ, և որսացան զիս անօրէնութիւնք, և կամ շաղեալ անարձակ կապովք. և հնար լուծման՝ բայց ի քէն՝ չիք ուրեք գտանել ինձ: Խոնարհեաց ի փրկութիւն անպիտան ծառայի քո. քակեա զչարաչար հիւսմունս մանուածոյ կապանաց իմոց, և լոյծ զվարակեալ ի դժնդակ տանջանաց զանձն իմ. հան ի ստուերաց մահու զկեանս իմ. որ

Ժ.
ԱՂՈԹՔ ԱՌ ՈՐԴԻՆ

Հոր Որդի և Բան՝ Աստված ճշմարիտ, որ կատարյալ մարդ եղար և հաճությամբ չարչարանք հանձն առար, որ մեղքերից չարչարված մարդկային ցեղը փրկես այն չարչարանքներից. և մարմնով մեռար՝ մահը խափանելու համար, արժանի չեմ դիմելու քո անվանը, բայց քո անճառելի, մեծ սիրո համար, որ խոնարհեցրեց քեզ այս ամենին, վստահություն եմ ստանում՝ աղաչելու քո հեզությունը: Լսիր ինձ հանուն քո չարչարանաց և ընդունիր իմ սրտի ու շրթունքների խոստովանությունը, որ այսօր մատուցում եմ քեզ, և ինձ մեղքերի ծառայությունից ազատություն շնորհիր և քավություն՝ անօրեն գործերին:

Մեղքի ուռկանը պատեց ինձ մանկությունից, և ինձ որսացին անօրինությունները, և կաշկանդված եմ անարձակելի կապերով, և բացի քեզնից, ուրիշ տեղից արձակման հնար չի լինի ինձ: Խոնարհվիր՝ քո անպիտան ծառային փրկելու, քանդիր իմ մանվածո կապանքների չարագույն հյուսքերը և արձակիր դժնդակ տանջանքներից վարակված անձս, մահու ստվերներից հանիր իմ կյանքը, [դու]

զՂազար ի բարբառ ձայնի աստուածութեան քո
ածեր արտաքս ի ստորին վայրաց երկրի և մահու:
Վասն զի կարես միշտ զանկարելիս, և հզօր ես ի
վերայ բնութեան. և չիք դիմադարձութիւն քեզ ի
հակառակութենէ ուստեք: Գթա ի կորստական
անձին իմոյ տառապանս. և տես զնեղութիւն սո-
վորութեան չարին բնակելոյ յիս, որ ձգէ օր ըստ օ-
րէ զտկարութիւն հոգւոյ իմոյ յալս խաւարի, և ի
մահ մշտնջենական. և տուր զկենդանի և զաներե-
ւոյթ բարբառ քո ի յարութիւն կենդանութեան. կա-
պեա զհզօրն, և արձակեա զտկար անձն իմ: Փա-
խիցէ չար սովորութիւնն ի ծագմանէ քումմէ, և
խաւարն քայքայեալ ցրուեսցի յիմանալի ճառա-
գայթից քոց. և եղիցի վերին՝ ստորինս,և որ մե-
ռայս կենդանացայց քեւ: Զնեխութիւն վիրաց ի-
մոց բժշկեա տէր. զլուծումն անդամոց հոգւոյ իմոյ
հաստատեա. զկուրութիւն մտաց իմոց լուսաւո-
րեա. զորս կոչեցի առ իս՝ յետ առաջնոյ հրաման-
նաւ քով մաքրութեան՝ յաղագս առ չարն յարդար-
ման և պատրաստութեան, զեօթանեսին, այլ և
զլեգէոնս այսոցն, միւսանգամ սաստիւ ձայնի քո
հալածեա. և դարձո ի զգայութիւն զափշութիւն
մտաց իմոց: Յիմարեցայ՝ հետեւելով անզգամին
ուսման. իմաստութեան անչափելիդ ծով՝ իմաստ-
նացո զիս: Անզգուշութեամբ իմով և մոլորապէս

*որ աստվածային ձայնիդ բարբառումով Ղա-
զարին դուրս բերիր երկրի և մահու ստորին
վայրերից: Որովհետև միշտ կարող ես անկա-
րելին անել, և բնության վրա հզոր ես, և չկա
որևէ հակառակությունից դիմադարձություն
քո դեմ: Խղճա կորստական անձիս տառա-
պանքներին և տե՛ս իմ մեջ բնակված չար սո-
վորության նեղությունը, որ իմ հոգու տկա-
րությունը օրըստօրե ձգում է խավարի ալիք-
ների մեջ և՝ մշտնջենական մահի. քո կենդա-
նի և աներևույթ բարբառը տուր հարության
ու կենդանության, կապիր զորեղին և արձա-
կիր իմ տկար անձը: Թող քո ծագումով փախ-
չի չար սովորությունը, և քայքայվելով ցրվի
խավարը քո իմանալի ճառագայթներով. և
ստորինս թող վերին լինի, և մեռյալս քեզնով
կենդանանամ:*

*Տե՛ր, բուժի՛ր իմ մեղքերի նեխածությունը,
հաստատի՛ր իմ հոգու անդամների արձակու-
մը, լուսավորի՛ր մտքիս կուրությունը. ում որ
ինձ մոտ կանչեցի քո առաջին հրամանով
մաքրվելուց հետո, չարի կարգավորման և
պատրաստության համար, յոթանասունին, այ-
լև դևերի լեգեոնները, վերստին քո ձայնի սաս-
տումով հալածիր և իմ մտքի հրապուրանքը
զգաստության վերածիր: Հիմարացա՝ հետևե-
լով անզգամի դասերին, իմաստնացրու ինձ, ի-*

յածմամբք գազանակուր եղէ. հովիւդ մեծ և ամենաքաջ, հնարեսցիս ինձ փրկութիւն դարձեալ, և արասցես արօտակից ճարակաւորաց քոց զիս:

Եւ զիա՞րդ կարացից բանիւք մի ըստ միոջէ զանհուն յինէն գործեցելոց այլանդակաց չարեաց պատմել զբազմութիւնս: Միայն զքեզ զգիտակդ ամենայնի անկեալ յերկիր աղաչեմ, թողութիւն շնորհեա և քաւիչ լեր. և տուր ինձ զմնացորդս աւաղելի կենաց իմոց ի հաճոյս քեզ անցուցանել, և գնալ ըստ պատուիրանաց քոց ամենայն կարգաւորութեամբ վարուց քրիստոնէութեան՝ առանց յետս դառնալոյ յամենադժնեայ սովորութիւնն. և պարգեւեա ինձ աղբերս արտասուաց. որպէս զի ողորմութեամբ քով ի ձեռն այնր աւազանի երկրորդի լուացցին և ջնջեսցին սոսկալի աղտեղութիւնք մեղաց իմոց. և արժանի եղէց կալ համարձակութեամբ առաջի աթոռոյ շնորհաց քոց. և կանխել ի գթութեան քո հայցմունս առանց հեղգութեան և դանդաղանաց. և գտանել ի քէն զվայելչականն աստուածութեան քո առատաշնորհ բարերարութիւնս. և քեզ մատուցանել երկրպագութիւն և պատիւ ուղղակի փառատրութեամբ և խոստովանութեամբ ընդ Հօր և ընդ Հոգւոյդ սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

մաստության անչափելի՛ ծով: Իմ անզգուշությամբ և մոլոր հածումով գազանի կեր եղա. հովիվդ մեծ և ամենաքաջ, ինձ դարձյալ փրկության հնար արա և ինձ արոտակից դարձրու քո խոտաճարակներին:

Եվ ինչպե՞ս կարենամ խոսքով մեկ առ մեկ պատմել իմ գործած բազում այլանդակ չարիքները: Միայն քեզ՝ ամեն ինչի գիտակիդ, աղաչում եմ, գետին ընկած, թողություն շնորհիր և եղիր քավիչ, և ինձ տուր իմ ավաղելի կյանքի մնացորդը անցկացնել ի հաճույս քեզ և ընթանալ քո պատվիրանների համաձայն՝ քրիստոնեական վարքի ամեն կարգով, առանց ետ դառնալու դեպ ամենադժնի սովորությունը, և ինձ պարգևիր արտասուքի աղբյուրներ, որ քո ողորմությամբ այն երկրորդ ավազանով լվացվեն ու ջնջվեն իմ մեղքի սոսկալի աղտեղությունները, և արժանի լինեմ՝ համարձակորեն կանգնելու քո շնորհների աթոռի առջև և չտապելու քո գթության հայցումին՝ առանց ծուլության ու դանդաղելու, և քեզնից գտնելու քո վայելչական աստվածության առատաշնորհ բարերարությունը և մատուցելու քեզ երկրպագություն ու պատիվ ուղղակի փառատրությամբ և խոստովանությամբ Հոր և Սուրբ Հոգուդ հետ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԺԱ.
ԱՂՕԹՔ ԱՌ ՈՐԴԻՆ

ԻԼՈՒՍՈՑ ճշմարտէ համագոյակ լոյս, յԱստուծոյ Աստուած, ի կենաց կեանք, բան Հօր և Որդի միածին. անժամանակ, անեղանելի, արարիչ ամենայնի. որ հաճեցար լինել որդի մարդոյ, և արարիչդ՝ արարած՝ մարմնով. բանդ՝ մարմին. անեղդ՝ եղեալ. անմահդ՝ մահկանացու. փոքր՝ մեծդ, և ճոխդ՝ աղքատ. որ ի սկզբանէ ընդ Հօր և միշտ էակ՝ մանուկ ի կուսէն, իմոյս լեր կատարիչ մանկութեան: Քանզի դու և ամենայն ըստ ինքեանց անկատարից ես լրական զօրութեամբ քով. և արարիչ որոց ի զգայութեան , և իմանալեաց ամենեցունց: Իմաստութիւնդ Հօր, տուր ինձ անուանակիր լինել՝ ճշմարիտ իմաստութեամբ քով՝ և հրամայեա իմաստնանալ ինձ. և անճառելիդ կատարելութիւն կատարեա զիս հոգւով: Նորոգեսցի որպէս արծւոյ զօրութիւն մանկութեան իմոյ, վասն լինելոյ քո մարդ նոր: Մի՛ տար կոուել յիս հնութեան կերպարանին, և նմանութեան՝ զաոիթ հնոյն մարդոյ. և եթէ ընկալայ երբէք, զերծ ի բաց՝ որպէս զքուրձն սգոյ յամենայն ազգէ մարդ-

ԺԱ.
ԱՂՈԹՔ՝ ՈՐԴՈՒՆ

Ճշմարիտ լուսոյից՝ համագոյակ լուս, Աստծուց՝ Աստված, կյանքից՝ կյանք, Հոր Բան և Միածին Որդի. անժամանակ, անեղանելի, ամեն ինչի արարիչ, որ հաճեցիր մարդու որդի լինել և արարիչդ՝ մարմնավոր արարած. Բանդ՝ մարմին. անեղդ՝ եղած. անմահդ՝ մահկանացու, մեծդ՝ փոքր և ճոխդ՝ աղքատ, սկզբնապես Հոր հետ և միշտ էակ, մանուկ՝ կուսից, սրբագործիր իմ մանկությունը: Քանի որ դու քո զորությամբ բոլոր անկատար բաները լրացնող ես, և արարիչ՝ զգայունների և՝ բոլոր իմանալիների: Իմաստությունդ Հոր, [թույլ] տուր ինձ անվանակից լինել քո ճշմարիտ իմաստությամբ և հրամայիր ինձ իմաստնանալ և, անճառելի կատարելությունդ, հոգով ինձ կատարյալ [դարձրու]: Իմ մանկության զորությունը նորոգվի, ինչպես արծվինը, քո նոր մարդ լինելու միջոցով:

Հնության կերպարանքին մի՛ թող՝ կռվելու իմ մեջ, ինձ մի՛ տուր հին մարդուն նմանվելու առիթ. և եթե մի օր ընդունեցի՝ հանիր, հեռացրու սգո քուրձի պես մարդկային բոլոր

կան. դաստիարակեա զխամութիւն մտաց իմոց, ուստ ինձ գնալ ի հրամանս քո. և մի՛ տար թոյլ սխալոտ և դիւրայանց հասակիս այսորիկ՝ տղայօրէն բարուք՝ ստահակութեամբ գնալ. այլ ըստ աստուածային հեզութեան քո և ըստ մեծի և անհասանելի գթութեան՝ յարամերձ առ իս կացցեն շնորհաց քոց պահպանիչ զգուշութիւնք ի փրկութիւն կենդանութեան ծառայի քո: Եւ հաճոյութեամբ քաղցր սիրոյ կամաց քոց՝ եղէց հանդարտեալ ի բնաւորականաց ընդդիմութեանց հոգւոյ մարտից. այլ և հմուտ առ պատերազմել՝ քոյով նախամարտկութեամբ, և անհերքելի ամենայաղթ զօրութեամբ անվէր, առանց լքման ի ձեռանէ քումմէ՝ կալով մնալով:

Լեր ընդ իս տէր իմ ի ննջել և ի յառնել, ի նստել ի տան և գնալ ի ճանապարհի. և շնորհեա ինձ զամենայն զգործս իմ ի փառս քո և ի հաճութիւն քեզ կատարել: Խօսք իմ օրէնք քո եղիցին, և հոգի իմ ի պատուիրանս քո խոկասցէ. և փոխանակ ամենայն զբօսանաց մանկականաց միայն սէր քո բորբոքեսցի յոգի իմ: Պարգեւեա ինձ և արտօսր առատապէս. զի արժանի եղէց կալ առաջի քո որպէս մաղթող կատարեալ, և լուանալ զաղտեղու-

ցեղերից. դաստիարակիր իմ մտքի խակութիւնը, ինձ սովորեցրու ընթանալ քո հրամաններով. և սխալոտ ու դյուրավ մեղքի տրվող այս հասակիս մի՛ թող՝ մանկական բարքով ստահակորեն ընթանալ, այլ քո աստվածային հեզության համաձայն և ըստ մեծ ու անհասանելի գթության՝ քո պահպանիչ զգուշացումները ինձ մոտ մնան մշտապես՝ ի փրկություն կենդանության քո ծառայի: Եվ քո կամքի քաղցր սիրո հաճությամբ հանդարտված լինեմ հոգու մարտի սովորական ընդդիմությունից, այլև հմուտ պատերազմելիս՝ քո նախամարտիկությամբ և անհերքելի ամենահաղթ զորությամբ անվերք, առանց լքվելու քո ձեռքից, մնալով [այդպես]:

Տեր իմ, ինձ հետ եղիր ննջելիս և ելնելիս, տանը նստելիս և ճանապարհ գնալիս, և ինձ շնորհիր իմ բոլոր գործերը կատարել ի փառս քո և ի հաճություն քեզ: Իմ խոսքը օրենքդ լինի, և իմ հոգին խոկա քո պատվիրանների մասին. և բոլոր մանկական զբաղմունքների փոխարեն միայն քո սերը բորբոքվի իմ հոգում: Նաև առատ արտասուք պարգևիր ինձ, որ արժանի լինեմ քո առջև կանգնելու որպես կատարյալ մաղթող, և լվանալու հին մարդու մտքի աղտեղությունը. և ինչ որ արարքներով

թիւն մտաց իմոց. և զոր ինչ յանցեայ գործովք ի մոռացմանէ պատուիրանաց և երկեւղի քո ահաւորի և սրբոյ, և եղէց մաքուր և զտեալ յամենայն տղմոյ մեղաց աղտեղութեան, որպէս զմի ի ծառայից քոց. շնորհեա ինձ Աստուած իմ Յիսուս արժանի լինել մատուցման փառաբանութեան վայելչականի, և օրհնել արժանապէս զմեծութիւն տէրութեան քո ընդ Հօր և ընդ Հոգւոյդ սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

հանցանք գործեցի քո ահավոր և սուրբ պատվիրանների ու երկյուղի մոռացումից, և լինեմ մաքուր ու զտված ամեն մեղքի աղտեղության տիղմից: Որպես քո ծառաներից մեկին, Աստված իմ Հիսուս, շնորհիր ինձ արժանի լինել՝ վայելուչ փառաբանություն մատուցելու և օրհնելու արժանապես քո տերության մեծությանը Հոր և Սուրբ Հոգուդ հետ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԺԲ.
ԱՂՕԹՔ ԱՌ ՈՐԴԻՆ

ՃՇՄԱՐԻՏ լոյս, ծնունդ լուսոյ ճշմարտի, և ամենայնիւ հաւասար ըստ բնութեան պատճառին և ծնողին քում՝ Յիսուս Քրիստոս. որ եղեր մարդ վասն մեր ճշմարտապէս, և չարչարեցար անչարչարականդ լոյս՝ վասն ի չարչարանաց մեղաց ազատելոյ զմեզ: Լուսաւորեա զտգիտութեամբ և զմեղօք խաւարեալ միտս իմ, և կակղացո զխստութիւն սրտի իմոյ. լինել իմաստուն ինձ ի բարիս և անմեղ յամենայն չարութիւնս. և ընդունել զղջմամբ և արտասուօք զկեցուցիչ հրամանս քո. գործել յայսմ հետէ զգործ արդարութեան՝ յորմէ հեռացայ մեղօք, և լուանալ զտիղմ ժանտութեան չարեացն, զոր կամակար մտօք և ձախողակի ախորժակօք մածուցեալ յարեցի յիս և միացուցի: Քանզի քեզ ամենայն ինչ ի բարեաց հնարաւոր է, և դիւրին գալ ի ներգործութիւն յոգիս մեր: Որ եկիր կոչել ոչ զարդարս, այլ զմեղաւորս. և խոստացար զտաժանումն աշխատութեանցն ի ծանրաբեռնութենէ մեղաց՝ լուծանել. և հրամայեցեր առնուլ փոխանակ չարաբեռնութեանցն զբարիոք և զհանգստաւէտ բեռն և լուծ պատուիրա-

ԺԲ.
ԱՂՈԹՔ՝ ՈՐԴՈՒՆ

Ճշմարիտ լույս, ճշմարիտ լույսի ծնունդ, և ըստ բնության՝ ամեն ինչով հավասար քո պատճառին ու ծնողին, Հիսուս Քրիստոս, որ մեզ համար ճշմարտապես մարդ եղար և չարչարվեցիր, անչարչարական լույս, որ մեզ ազատես մեղքի չարչարանքներից: Լուսավորի՛ր տգիտությամբ ու մեղքով խավարած իմ հոգին և կակղացրո՛ւ իմ սրտի կարծրությունը, որ իմաստուն լինեմ բարու մեջ և անմեղ՝ ամեն չարության մեջ, ընդունելու զղջումով ու արտասուքով քո ապրեցնող հրամանները. այսուհետև գործելու արդար գործ, որից հեռացա մեղքով, և լվանալու չարիքի ժանտության տիղմը, որ ինքնակամ մտքով և ձախողակի ախորժակով փակցրի ինձ և միացրի: Քանի որ քեզ համար ամեն բարիք հնարավոր է և դյուրին՝ գալ ներգործելու մեր հոգիներին: [Դու], որ եկար կանչելու ոչ արդարներին, այլ մեղավորներին և խոստացար մեղքի ծանրությունից տաժանակիր չարչարանքները վերացնել և հրամայեցիր չար բեռների փոխարեն բարի և հանգստավետ

նաց քոց: Տուր զօրութիւն ծառայի քո՝ կրել ըստ կամաց քոց զսուրբ և զքաղցր բեռս զայս որ ի հեզութենէ քումմէ տուաւ մեզ:

Բժշկեա զլուծումն տկարութեան մեղացն որ յիս, փոփոխեա զչարասէր կամս մտաց իմոց. կարողացո ի գործս առաքինութեանց յոր սահմանեցեր՝ զանպիտան ծառայս քո, և դիր յոգւոջ իմում զբոց սիրոյ պատուիրանաց քոց: Որ ոչ կամիս զմահ մեղաւորի, այլ զդարձ նորա ի չար ճանապարհէն և զկեալ, նա և յարուցանես հզօրապէս զմեղօքն մեռեալս. կարկառ զկենագործակ ձեռն քո մարդասէր, և արա յառնել ինձ ի մահուանէ աստի, թէպէտ և ես ոչ կամիցիմ: Բռնադատիմ ի չար և յանօրէն սովորութեանց անտի հնացելոց, և բնաբար հաստատելոց յիս. այլ տկար է այն ամենայն առաջի կամաց քոց և հրամանաց:

Սաստեա ի խաբեբայն և ի պատրանս նորա. հեռացո մերժեա յինէն զնա, և որ նորա իցեն, եթէ գործք և եթէ բանք, եթէ զեռմունք խորհրդոց. թագաւորեսցէ յիս զօրութիւն և կամք քո. և իշխանութիւն չարին ինքնահալած լիցի. մի՛ տար գազանին տէր զքո գտեալ ի մոլորութենէ և ի կորստենէ զոչխարն. և մի՛ աւազակեսցէ միւսանգամ սպանիչն՝ զպարգեւեալ քո փարթամութիւնն յառաջագոյն կողոպտելոց. և մի դարձեալ վիրաւորեսցէ և

բեռ վերցնել և՝ քո պատվիրանների լուծը: Զորություն տուր քո ծառային՝ ըստ քո կամքի կրելու այս սուրբ և քաղցր բեռը, որ քո հեզությունից տրվեց մեզ:

Բժշկի՛ր մեղքի տկարությունը, որ իմ մեջ կա, փոփոխիր իմ մտքի չարասեր կամքը, կարող դարձրու առաքինի գործերի, որ սահմանեցիր [ինձ]՝ քո անպիտան ծառային, և իմ հոգու մեջ դիր քո պատվիրանների սիրո բոցը: [Դու], որ չես ուզում մեղավորի մահը, այլ՝ նրա դարձը չար ճանապարհից և մնալը, նաև հզորապես հարություն ես տալիս մեղքով մեռյալներին, կարկառիր, մարդասե՛ր, քո կենսաձիր ձեռքը և ինձ հառնել տուր այս մահվանից, թեկուզ ես չկամենամ: Բռնադատվում եմ հնացած չար ու անօրեն սովորություններից, որ բնականորեն հաստատվեցին իմ մեջ, այդ ամենը տկար է քո կամքի և հրամանի առաջ:

Սաստի՛ր խաբեբային նրա պատրանքներով, մերժի՛ր, հեռացրո՛ւ ինձանից նրան և յուրայիններին, թե՛ գործերը, թե՛ խոսքերը, թե՛ գաղտնիքների զեռմունքը. թող իմ մեջ թագավորեն կամքդ ու զորությունդ, իսկ չարի իշխանությունը ինքնահալած լինի: Տե՛ր, գազանին մի՛ տուր մոլորությունից ու կորս-

կամ սպանցէ, զոր բժշկեցեր դու և յարուցեր ի մեռելոց, կամ իշխեսցէ պահել ի նմին մահու զարեան քո պատուականի զգինս: Հայեաց և լուր տէր զաղաչանս յանցաւոր ծառայի քո, և մի՛ անտես առներ զիս վասն բազմութեան մեղաց իմոց. այլ ընկալ զիս, թէպէտ և փախուցեալ սրացայ ի բաց անմտաբար յուրախացուցիչ կամաց քոց, և զամենահեզ քաղցրութիւն քո դառնացուցի ի վերայ իմ, և մի՛ յիշեր զմեղս իմ զառաջինս. այլ վաղվաղեսցես ընդ առաջ մոլորեալ ծառայի քո, և ի գիւտ և ի փրկութիւն, քաւութիւն տալ ամենայն մեղաց իմոց, որպէս զի և ես արժանի եղէց ընդ ամենայն ծառայս քո փառաւորել զքեզ ընդ Հօր և սուրբ Հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

տից քո գտած ոչխարը, և սպանիչը նորից չկողոպտի ավելի վաղ կողոպտածներին քո պարգևած փարթամությունը. և դարձյալ չվիրավորի և կամ սպանի՝ ում բժշկեցիր և մեռելներից հարություն տվիր, կամ համարձակվի պահել մահվան մեջ քո պատվական արյան գինը: Նայի՛ր և լսի՛ր, Տե՛ր, քո հանցավոր ծառայի աղաչանքը և իմ մեղքի բազմության պատճառով մի՛ անտեսիր ինձ, այլ ընդունիր, թեպետ անմտաբար փախչելով՝ սլացա հեռու քո ուրախացուցիչ կամքից, և քո ամենահեզ քաղցրությունը դառնացրի ինձ վրա, և մի՛ հիշիր իմ առաջին մեղքը, այլ ընդառաջ շտապիր քո մոլորյալ ծառային, և գյուտի ու փրկության քավություն տուր իմ բոլոր մեղքերին, որպեսզի ես ևս արժանի լինեմ՝ քո բոլոր ծառաների հետ փառավորելու քեզ Հոր և Սուրբ Հոգուդ հետ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԺԳ.
ԱՂՕԹՔ Ի ԴԷՄՍ ՈՐԴԻՈՅ

ԶՕՐՈՒԹԻՒՆ և իմաստութիւն Հօր՝ Յիսուս Քրիստոս, որ առաքեցար յաթոռոյ փառաց աստուածութեան քո, և եղեր ի նմանութիւն մարմնոյ մեղաց և վասն մեղաց. զի դատապարտեսցի զօրութիւն մեղաց ի ձեռն մարմնոյ քո, և տկար բնութիւնս այս ընկալցի կարողութիւն ընդ դիմակացութեան ախտից և չարութեան. զի եղիցուք ժողովուրդ սեփական մեծի տէրութեան քում, զերծեալք ի ծառայութենէ չարին: Զօրացո և զիմոյ լուծութեանս մեղկութիւն ի ձեռն անյաղթ և քաջապինդ քոյոյդ զօրութեան. զի կարացից ապրել ի հինահարութենէ ստամբակ թշնամւոյն, և վանել զնոյն մարտակցութեամբ քով: Բժշկեա և զառաջին հարուածս անձին իմոյ, որ ի մուխ նետից չարին, դնելով սպեղանիս քաղցրութեան քո. ծածկեա զիս ընդ հովանեաւ թեւոց քոց, զի մի՛ դարձեալ խոցոտեսցէ զիս թշնամին անմարմին և դժուարամարտ: Վասն զի բազում անգամ արար զիս նետալից իբրեւ զնպատակ. և տեղացին յիս նետք հինից նորա, և յանխնայ խոցոտեցին զիս:

Արդ փոխանակ այնր ամաչեսցէ տեսանելով

ԺԳ.
ԱՂՈԹՔ՝ ՆԱՅԵԼՈՎ ՈՐԴՈՒՆ

Հ որ զորություն և իմաստություն Հիսուս Քրիստոս, որ քո աստվածության փառքի աթոռից առաքվեցիր և նման եղար մեղքի մարմնի և մեղքի համար, որպեսզի քո մարմնի միջոցով դատապարտվի մեղքի զորությունը, և այս տկար բնությունս կարողություն ստանա դիմակայելու ախտերի և չարության, որ լինենք քո մեծ տերության սեփական ժողովուրդ, ազատված չարի ծառայությունից: Քո անհաղթ ու քաջապինդ զորությամբ զորացրու և իմ մեղկ թուլությունը, որ կարողանամ փրկվել ապստամբ թշնամու հենական հարվածից և նրան վանել քո մարտակցությամբ:

Բուժիր և չարի նետի խոցումից իմ ստացած առաջին հարվածները՝ դնելով քո քաղցրության սպեղանիները, ծածկիր ինձ քո թևերի հովանու տակ, որ վերստին չխոցոտի ինձ անմարմին և դժվար հաղթահարելի թշնամին: Որովհետև բազում անգամ նետահարեց ինձ՝ որպես նպատակի, և ինձ վրա տեղացին նրա հենների նետերը և անխնա խոցոտեցին ինձ:

Արդ, դրա փոխարեն թող ամաչի՝ տեսնելով

զիս բժշկեալ առ ի քէն տէր, և ամրացեալ շուրջանակի իբրեւ պարսպաւ հրեղինաւ. որպէս արարն՝ եղիցի նմա, և ի գլուխ նորա հատուցցի հատուցումն նորա: Խաւարեսցին աչք նորա առ ի չհայել, և կորասցի նա ընդ հզօր ձեռամբ քով. իսկ ես լցայց ուժով պնդութեան քո. զէնք բռնութեան նորա կողոպտեսցին, և մեքենայք նորա տկարասցին. եղիցի նա մերկ և խայտառակեալ ի ձեռն խաչի քո, և իմացմունք նենգութեան նորա ընդունայնասցին. և ծառայ քո վայելեալ ի շնորհս քո առատապէս՝ ընդ արժանաւորս քո հատուցէ քեզ փառս և օրհնութիւն շրթամբք ցնծութեամբ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ինձ բուժված քո միջոցով, Տե՛ր, և շուրջանակի ամրացած որպես հրեղեն պարսպով. նրան թող լինի արածիդ նման, և նրա գլխին հատուցվի հատուցումը: Խավարեն նրա աչքերը, որ չնայի, և նա կորանա քո հզոր ձեռքի տակ: Իսկ ես լցվեմ քո պնդության ուժով, կողոպտվեն նրա բռնության զենքերը, և տկարանան գործիքները. նա մերկ լինի և խայտառակվի քո խաչի միջոցով, և նրա նենգության հնարները ընդունայն դառնան: Իսկ քո ծառան, վայելելով քո շնորհներն առատապես, քո արժանավորների հետ քեզ հատուցի փառք և օրհնություն՝ ցնծացող շրթունքներով, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԺԴ.
ԱՂՕԹՔ ԱՌ ՈՐԴԻՆ

ՈՐ աղբիւրդ ես անսպառ բարութեանց, և շտեմարան ամենայն գանձուց իմաստութեան՝ տէր բարերար, տուր ինձ ճաշակել ի գիտութենէ քումմէ, և արբո ինձ ծարաւոյս ի ջրոյ անտի խաղացելոյ ի կեանդ յաւիտենից: Վասն զի ի բարձրութենէ արդարութեան խոնարհեցայ և ափշեցայ, և վասն այնորիկ հաւասար եղէ անասնոց անբանից. և դու տէր յայտնեցար սիրով, զի ա-րասցես իմաստունս՝ զանմիտս, նա և փառաւորս՝ զանարգս, զտկարս՝ զօրաւորս, և մեծապատիւս՝ զանտոհմս. զորս մանաւանդ սիրեցեր և ճոխացուցեր աղքատութեամբ քով, զի երեւեսցին առատութիւնք շնորհաց քոց, և գութք ընտանութեան ազգակցութեան հաստչիդ առ արարածս: Ի պատճառս որոյ եղեր մարդ՝ Բանդ Աստուած, և հետեւեցար բնաւոր կրից մարդկայնոց՝ առանց մեղաց. քաղցեար և ծարաւեցար, զի լցուսցես բարութեամբ. աշխատեցար, զի զաշխատեալս մեղօք հանգուսցես. բանսարկեցար, զի զերծուսցես զմեզ ի մեղաց բանսարկութենէ. անշքեցար, ա-

ԺԴ.
ԱՂՈԹՔ՝ ՈՐԴՈՒՆ

Դու, որ աղբյուրն ես անսպառ բարութիւնների և շտեմարան իմաստության ամեն գանձի, բարերա՛ր Տեր, քո գիտությունից ճաշակել տուր ինձ, ինձ՝ ծարավածիս, խմեցրու հավիտենական կյանքում շարժվող ջրից: Որովհետև արդարության բարձրությունից իջա և ցնորվեցի, և այդ պատճառով հավասարվեցի անբան անասուններին: Եվ դու, Տե՛ր, հայտնվեցիր սիրով, որ անմիտներին իմաստուն դարձնես, նաև՝ անարգներին՝ փառավոր, տկարներին՝ զորավոր, և անտոհմներին՝ մեծապատիվ դարձնես. որոնց մանավանդ սիրեցիր և ճոխացրիր քո աղքատությամբ, որպեսզի երևա քո շնորհների առատությունը և ընտանության գութը՝ հաստչիդ ազգակից արարածներիս նկատմամբ: Այդ պատճառով մարդ եղար, Բանդ Աստված, և մարդկային բնական տառապանքներին հետևեցիր՝ առանց մեղքի. քաղցեցիր ու ծարավեցիր, որ բարությամբ լցնես. չարչարվեցիր, որ մեղքով չարչարվածներիս հանգստացնես, զրպարտվեցիր, որ մեզ փրկես զրպարտութ-

նարգեցար. եղեր պանդուխտ, օտար, անյարկ, և ընդ հարկաւ ծառայից. ոչ դանդաղեցար և զծանրագոյնսն քան զայսոսիկ առնուլ յանձն վասն մարդկան ի մարդկանէ. որպէս զի և ազատեսցին ի յինքեանց ինքեանք, ըստ որում և յօտարին չարութենէ. մատնեցար, գանալից եղեր, այպանեցար բազմադիմի ձաղանացն տեսակաւ. մինչեւ ի մահ խաչի գալ ընդ աւազակս, և դառնութեանն ճաշակօք քաղցրացուցանել զմերն, և մահուամբ լուծանել զթշնամին յետին. իսկ իջանելով ի ստորին տեղին, եղեր առաջին պտուղ ննջեցելոց, և զամենեսեան ազատեցեր ի նմանէ յուսով:

Արդ որ զայս ամենայն յօժարախորժ կամօք կրեցեր ի քեզ վասն մարդկան՝ Աստուած իմ Յիսուս, մի անտես առներ և զիս զանձկացեալս ի քեզ այլ տուր ինձ մասն բարի՝ կացելոյս առաջի աթոռոյ շնորհաց քոց. ի ժամանակի ընդունելութեան մատեայ առ քեզ, յաւուր փրկութեան օգնեա ինձ. խզեա յինէն այժմ զտոհունս մեղաց, զի մի՛ նոքումբք վարակեալ՝ ելից կապեալ ի խաւարն արտաքին. այժմ արա ինձ լուանալ ապաշխարութեամբ զաղտ հնութեան մեղացն. զի յայնժամ քաղցրութեամբ հայեսցիս յիս, և օրհնութեամբ կո-

յան մեղքից. անշուքացար, անարգվեցիր, եղար պանդուխտ, օտար, անտուն և ծառանեին հարկատու. չդանդաղեցիր և սրանցից ավելի ծանր բաներ հանձն առնել մարդկանցից՝ մարդկանց համար, որպեսզի իրենք իրենցից ևս ազատվեն, նաև՝ օտարի չարությունից. մատնվեցիր, գանահարվեցիր, այպանվեցիր բազմատեսակ ձաղանքներով, մինչև մահ՝ ավազակների հետ խաչ բարձրանալով, և դառնության համով քաղցրացնել մերը և մահվամբ հաղթել հետին թշնամուն, իսկ ստորին վայրերն իջնելով՝ առաջին պտուղ եղար ննջեցյալներին և բոլորին նրանից ազատեցիր հույսով:

Արդ, որ մարդկանց համար հոժարախորժ կամքով այս ամենը կրեցիր քեզ վրա, Աստված իմ Հիսուս, մի՛ անտեսիր ինձ՝ քեզ կարոտածիս, այլ տուր մասն բարի ինձ՝ քո շնորհների աթոռի առջև կանգնածիս: Ընդունելության ժամին մոտեցա քեզ, փրկության օրը օգնի՛ր ինձ. այժմ խզի՛ր իմ վրայից մեղքի ուռկանը, որ նրանով վարակված՝ կաշկանդված չընկնեմ արտաքին խավարի մեջ. այժմ [այնպես] արա, որ ապաշխարությամբ լվանամ մեղքի հնության աղտը, որ այն ժամանակ քաղցրությամբ նայես ինձ և օրհնությամբ կանչես քեզ մոտ. [դու], որ չես կամենում մեղավորի մահը, այլ

չեսցես առ քեզ. որ ոչդ կամիս զմահ մեղաւորի, այլ զդառնալ նորա ի չար ճանապարհէն և զկեալ, կեցո և զիս՝ դարձուցանելով ի չար և ի բազմաթիւր իմոց ընթացից: Եկ առ իս ընդաբոյս հեզութեամբ քով, և դարձո զիս ի մոլորութենէ որպէս զոչխարն զայն. հովուեա և ինձ ի ճանապարհս արդարութեան քո. ջամբելով յանուշահոտ շուշանացն քոց անպակասաբար, սնուցանողականօքն ջուրբք հանգո զաշխատեալ մեղօք զանձն իմ, և զետեղեա զմոլորական խորհուրդս իմ ի վայրի դալարուջ: Զգայլն յափշտակող՝ որ կեղեքեացն զիս բազում անգամ, հալածեա տէր անմերձ հեռաւորութեամբ. բժշկեա և զխածուածս գազանին որ յիս, ամենիմաստ բժիշկ. որ զբոլոր անդամոցն հաստատես զլուծումն զկենդանի մեռելոցն, և զբնաւ իսկ մեռեալս կանգնես. կուրաց շնորհես լոյս, և խլից լսումն ձայնի. համերց բանաս զբերանս, և զձեռս գօսս պարզես. վազեն կաղք իբրեւ զեղջերուս՝ ի քէն ընկալեալ զօրութիւն. և կորացեալքն թիկամբք՝ վերակնեն ի բարձունս: Որ զծածուկ վէրս հանդերձ յայտնեօք բժշկես՝ կաշառօք միայն հաւատոց, և ողջոցն չկամիս զխօթութիւն. և յիս՝ որ ի բոլորս յայսոսիկ ախտս կամ ծիւ-

նրա դարձը չար ճանապարհից և մնալը, ինձ ևս ապրեցրու՝ դարձնելով իմ չար ու բազմաթյուր ընթացքից: Արի ինձ մոտ քո բնածին հեզությամբ և դարձրու ինձ մոլորությունից, ինչպես այն ոչխարին, հովվիր ինձ ևս քո արդարության ճանապարհներին. կերակրելով անպակաս կերպով քո անուշահոտ շուշաններով, սնուցողական ջրերով՝ հանգստացրու մեղքերից հոգնած իմ անձը և իմ մոլոր խորհուրդները զետեղիր դալար վայրում:

Հափշտակիչ գայլին, որ ինձ կեղեքեց բազում անգամ, հալածիր, Տեր, անմերձենալի հեռավորությամբ. բուժիր և գազանի կծոտածները իմ մարմնի, ամենագետ բժիշկ, որ կենդանի մեռելների բոլոր թուլացած անդամները հաստատում ես, և ոտքի ես հանում ամբողջապես մեռածներին, կույրերին լույս ես շնորհում, իսկ խուլերին՝ լսողություն. բաց ես անում համրերի բերանը, գոսացած ձեռքերը պարզում ես, կաղերը եղջերուի նման վազում են՝ զորություն ստացած քեզանից, և թիկունքով կորացածները բարձունքներին են նայում: Որ ծածուկ վերքերը հայտնիների հետ բուժում ես՝ միայն հավատքի կաշառքով, իսկ ողջերին տկարություն չես կամենում. և ինձ, որ այս բոլոր ախտերով հյուծված եմ ու հոգնած, գթա՛ մեծապես, փրկիչ, և ձեռք մեկնիր՝

րեալ և աշխատեալ՝ մեծապէս գթա փրկիչ, և լեր ձեռնտու՝ յարուցանելով զդիակն թշուառական հոգւոյ իմոյ. վասն զի դիւրին է քեզ ամենայն՝ զոր կամիս: Եւ եթէ խեղութիւնք և վէրք մարմնոյ փոյթ են քեզ, ընդէ՞ր անտես առնես զախտացեալս հոգւով. զի ոչ եթէ զմարմինս եկիր բժշկել, այլ զհոգիս. և եթէ բժշկես՝ վասն որոյ չեկիրն, մի՛ լոեր վասն որոյ եկիրն. եթէ յապականացու բնութիւն գթաս, զբնութիւն անապական մի՛ անտես առներ՝ խնդրողաց զքեզ. եթէ զանընտանին քեզ սիրես, մի մերժեր և զոր կոչեցեր քո պատկեր՝ զյանգակից և զնմանագոյն քեզ էութիւն. յոր մանաւանդ բնակես՝ և առնես քեզ տաճար: Վասն զի մարմին զքեզ տանել ոչ զօրէ մարմնացեալդ Աստուած. իսկ յորժամ կամիս՝ բնակես յոգիս սիրելեաց քոց. մանաւանդ որք մաքրութեանն վարուք զինքեանս արժանացուցին քեզ: Մաքրեա և զիս յաղտոյ մեղաց, և արա արժանի ընդունել զքեզ. մի՛ համարիր ժանդ զանպիտան ծառայ քո. զի ոչ եկիր կոչել զարդարս, այլ զմեղաւորս յապաշխարութիւն, և ոչ է պիտոյ բժիշկ ողջոց, այլ հիւանդաց. զորս կոչելով առ քեզ՝ հանգուցանել խոստացար յաշխատութենէ մեղաց. եդիր առաջի զլոյս անչափ

հարութիւն տալով թշվառական հոգուս դիակին, որովհետև քեզ համար հեշտ է ամեն ինչ, որ ուզես: Եվ եթե մարմնի խեղութիւններն ու վերքերը հոգս են քեզ, ինչո՞ւ ես անտեսում հոգով ախտահարվածիս: Չէ՞ որ, ոչ թե եկել ես մարմինները բուժելու, այլ՝ հոգիները, և եթե բժշկում ես [այն], որի համար չեկար, մի՛ լռիր՝ որի համար եկել ես. եթե գթում ես ապականացու բնությանը, քեզ խնդրողների անապական բնությունը մի՛ անտեսիր. եթե քեզ ոչ ընտանին սիրում ես, մի՛ մերժիր՝ ում կոչեցիր քո պատկերը՝ քեզ ընտանի և ավելի նման էություն, որի մեջ մանավանդ բնակվում ես և դարձնում քեզ տաճար: Որովհետև մարմինը քեզ տանել չի զորում, մարմնացյալ Աստված, իսկ երբ կամենում ես, բնակվում ես քո սիրելիների հոգում, մանավանդ՝ մաքուր վարքով քեզ արժանի դարձածներին:

Ինձ ևս մաքրի՛ր մեղքի կեղտից և արժանի արա՝ ընդունելու քեզ: Քո անպիտան ծառային ժանտ մի՛ համարիր, որովհետև եկար ոչ թե արդարներին, այլ մեղավորներին ապաշխարության կոչելու, և առողջներին բժիշկ պետք չէ, այլ՝ հիվանդներին, որոնց կանչելով քեզ մոտ՝ խոստացար հանգստացնել մեղքի չարչարանքից, առաջը դրիր քո անչափ բարության լույսը: Որովհետև նաև քեզ գտնելը

բարութեան քոց: Զի և գտանելն միայն զքեզ՝ մարգարիտ մեծագին, բովանդակ բարութիւն է. և անկապուտ փարթամութիւն ստանալն զքեզ փոխանակ ամենայնի:

Արդ լուր տէր և անսա, և զվարատեալս անօրէնութեամբ ժողովեա առ քեզ. ձգեա զձեռն քո և փրկեա զիս ի ծփանաց մեղաց, և ի խորոց անդնդոց ուստի ոչ է ինձ հանգիստ. վասն զի յորձանք անհնարինք պաշարեցին զիս, և համարեցայ անկեալ յերեսաց քոց. այլ որ ապաւէնդ ես վշտացելոց, և ակնածու որոց ի տարակուսանս, փութա յօգնութիւն վտանգելոյս, և արա անդորրութիւն ձեղութեանց իմոց. զի և ես ընդ փրկեալսն գոհացայց զքէն տէր, և մատուցից քեզ փառս և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

միայն, թանկագին մարգարիտ, բովանդակ բարութիւն է, և անկողոպտելի փարթամութիւն՝ քեզ ստանալը ամեն ինչի փոխարեն:

Արդ, լսի՛ր, Տե՛ր, և անսա՛, և անօրինութիւնամբ ցրվածներիս հավաքիր քո շուրջը, մեկնիր ձեռքդ և ինձ փրկիր մեղքի ծփանքից ու խոր անդունդից, որտեղից ինձ հանգիստ չկա, որովհետև անհնարին հորձանքը պաշարեց ինձ, և քո աչքից ընկած համարվեցի: Բայց, որ ապավենդ ես վշտացածների և աչք ես ածում տարակուսածներին, վտանգվածիս շտապիր օգնության, և իմ նեղություններին անդորրություն տուր, որ և ես փրկվածների հետ գոհանամ քեզնից, Տե՛ր, և քեզ մատուցեմ փառք և պատիվ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԺԵ.
ԱՂՕԹՔ ԱՌ ՈՐԴԻՆ

ԾԱԳՈՒՄՆ փառաց Հօր, և կերպարան էութեան նորա, կազմիչ և յօրինիչ ամենայն յաւիտեանց, և նախախնամող բոլորեցունց Յիսուս Քրիստոս. որ ստեղծեր զմարդն ի կերպարանս անզուգական աստուածութեան քո, և անպատում փառօք պատուեալ՝ մեծարեցեր զնա իբրեւ զպատկերակից քո. զփափկութիւն առ ի քէն տնկեցելոյ դրախտին շնորհեցեր նմա. և անմահական կենացն ետուր նմա իշխանութիւն՝ եթէ կամեսցի. տիրական անուամբ և ձեւով միայն զնա ճոխացուցեր, և զամենայն ինչ հնազանդ արարեր ի ներքոյ ոտից նորա, կացուցանելով զնա ի վերայ ձեռակերտաց քոց: Ետուր նման օրէնս ի յայտնութիւն ազատութեան անձին նորա՝ իբրեւ մտաւորի և բանաւորի, կամեցեալ փորձել սակաւ ինչ ժամանակ զինքնիշխանութիւն վարուց նորա. որպէս զի յետ այնորիկ ընկալցի զառաւելութիւն պատուոյ՝ մի՛ իբրեւ շնորհ ըստ առաջնումն, այլ որպէս հատուցումն առաքինութեան. զի կամիս զգովեստ ծառայից քոց յամենեցունց և զվկայութիւն քաջութեան, ի ձեռն որոյ ըմբերանի հակառակասէր և ընդդիմացող բանսարկուն: Իսկ ի չանսալ

ԺԵ.
ԱՂՈԹՔ՝ ՈՐԴՈՒՆ

Հոր փառքի ծագումն ու նրա էության կերպարանք, ամբողջ հավիտենականության կազմիչ և հորինիչ, և բոլորի նախախնամող Հիսուս Քրիստոս, որ մարդուն ստեղծեցիր քո անզուգական աստվածության կերպարանքով և անպատում փառքով պատվելով՝ մեծարեցիր նրան իբրև պատկերակցիդ, նրան շնորհեցիր քո տնկած դրախտի փափկությունը և նրան անմահական կյանքի իշխանություն տվիր՝ եթե կամենար, միայն նրան ճոխացրիր տիրական անվամբ ու ձևով, և ամեն ինչ հնազանդեցրիր նրան՝ դնելով քո ձեռակերտների վրա: Նրան հայտնության օրենքը տվիր, նրա անձի ազատությամբ՝ իբրև մտավորի և բանականի, ուզելով փորձել որոշ ժամանակ նրա վարքի ազատությունը, որպեսզի դրանից հետո ընկալի պատվի առավելությունը՝ ոչ իբրև շնորհ առաջվան նման, այլ որպես հատուցումն առաքինության, զի կամենում ես քո բոլոր ծառաների գովեստն ու քաջության վկայությունը, որով կփակվի բերանը հակառակասեր և ընդդիմացող բանսարկուի: Իսկ նա չանսաց քո ապրեցնող հրա-

նորա կեցուցիչ հրամանաց քոց, և յանսաստել անցանել քան զչափ բնութեան իւրոյ, կորոյս զամենայն վայելչութիւնն. ուստի և ի բաց կացեալ յարդարութենէ և յանեղծութենէ՝ եղեւ ընդունակ ախտից և ապականութեան. և զրկեցաւ ոչ միայն ի վստահացելոցն բարութեանց, այլ և ի մերձակայիցն. զի կարծիք անչափութեան գիտեն վրիպեցուցանել և ի չափաւորէն. և ընթացք առ անբնականն զբնութեանն իրս եղծանեն: Արդ ի լինել մարդոյն մահկանացու վասն մեղաց, և չյանցուցեալքն եւս անկան ընդ նովին կրիւք. սակայն դու տէր և յետ այնորիկ ոչ իսպառ տանջեցեր զնոսա իբրեւ զթշնամիս, այլ բազմադիմի տեսակաւ ողորմութեան ի ձեռն խրատու կամեցար ձգել առ քեզ. խօսեցար ընդ նոսա օրինօք և մարգարէիւք. և ոչ այնպէս կամեցան ճանաչել զքեզ:

Իսկ ի վերայ այսր ամենայնի զառաւելութիւն շնորհաց քոց կամեցեալ ցուցանել, իբրեւ զմարդասէր խոնարհեցար ի պատուակցութենէ Հօր՝ լինել ի կերպարանս ծառայի. որպէս զի եղիցուք մեք ազատք ի մեղաց և ի մահուանէ. զմահ խաչի առեր յանձն կամաւ, և զվճիռ դատապարտութեան մերոյ բեւեռեցեր ընդ խաչափայտին. զբռնութիւն սատանայի լուծեր ի ձեռն չարչարանաց քոց. իսկ զմահ և զապականութիւն՝ ի ձեռն

մանները և չհնազանդվելով չափը անցկացրեց իր բնության, կորցրեց ամբողջ վայելչությունը: Ուստի հեռանալով արդարությունից և անեղծությունից՝ ախտերի ու ապականության ունակ դարձավ և զրկվեց ոչ միայն [իրեն] վստահած բարիքներից, այլև մերձականներից, որովհետև անչափության ակնկալությունը վրիպեցնել գիտե չափավորից և ընթացքը դեպի անբնականը եղծում է բնության իրերը:

Արդ, որ մարդը մեղքի համար մահկանացու եղավ, նաև հանցանք չգործածներն ընկան այդ տանջանքի մեջ: Բայց դու, Տե՛ր, այնուհետև ևս նրանց խսպառ չտանջեցիր՝ որպես թշնամիների, այլ ողորմության բազմադիմի տեսակներով ուզեցիր խրատի միջոցով քո կողմը գրավել: Նրանց հետ խոսեցիր օրենքով ու մարգարեներով, բայց և այդպես չկամեցան ճանաչել քեզ:

Իսկ այս ամենի հետ ուզելով ցույց տալ քո շնորհների առավելությունը՝ իբրև մարդասեր խոնարհվեցիր Հոր պատվակցությունից, լինելու ծառայի կերպարանքով, որպեսզի մենք մեղքից ու մահից ազատ լինենք. կամովին հանձն առար մահ խաչի վրա և մեր դատապարտության վճիռը գամեցիր խաչափայտին. քո չարչարանքների միջոցով վերացրիր սատանայի բռնությունը, և մահն ու ապակա-

մահու և թաղման քո. և յարութեամբ քով կորզեցեր յամենեսեան յորովայնէ դժոխոց. զպատիւ փառաց քոց պարգեւեցեր մեզ՝ մերովս բնութեամբ նստելով ընդ աջմէ Հօր: Ետուր մեզ գրաւական սիրոյ զզանազանութիւն շնորհաց Հոգւոյդ սրբոյ. և այսպէս հաւատարմացուցեալ զխոստումն անճառելի բարութեանց քոց՝ հաստատեցեր զմեզ յուսով՝ զի զառժամայն կենացս այսոցիկ լքցուք զցանկալիս, և սիրեսցուք միայն զքեզ զարժանաւորդ սիրոյ:

Սակայն և ոչ այս ամենայն բարերարութիւն կարացին ժողովել զմիտս մեր առ քեզ, կամ հաւանեցուցանել զխստութիւն բարուց մերոց. այլ ամենի խորհրդովք ելաք արտաքս ի սահմանեալ ճանապարհաց քոց, ոչ յիշելով ամենեւին զառատութիւն սիրոյ քո, և զպատուէրս հրամանաց քոց. և ոչ այսչափ միայն, այլ և փոխանակ բարւոյ եղաք չարք, և հատուցաք ատելութիւն փոխանակ սիրոյ, և ապաշնորհութիւն փոխանակ շնորհաց: Բայց ոչ ոք յամենեցունց, որպէս միայն ես. վասն որոյ ոչ բաւէ ժամանակս այս խոստովան լինել զբազմութիւն մեղաց իմոց. զի որչափ յաճախեցին յիս գթութիւնք քո, այնքան առաւելայ ի մեղանչել. և որչափ մեծացան շնորհք քո, յորդեցին յանցանք իմ: Զի մերձեցար դու առ իս, և ես հեռա-

նությունը՝ քո մահվան ու թաղման միջոցով, իսկ քո հարությամբ բոլորին կորզեցիր դժոխքի որովայնից, քո փառքի պատիվը պարգևեցիր մեզ՝ մեր բնությամբ նստելով Հոր աջ կողմը: Մեզ սիրո գրավական տվիր Սուրբ Հոգուդ շնորհների զանազանությունը: Եվ այսպես հավաստելով քո անճառելի բարությունների խոստումը՝ հաստատեցիր մեզ հույսով, որ լքենք այսժամյա կյանքի՝ հաճույքները և սիրենք միայն քեզ՝ սիրո արժանիիդ:

Բայց այս բոլոր բարերարությունները նույնպես չկարողացան մեր մտքերը հավաքել քո շուրջը կամ հնազանդեցնել մեր բարքի խստությունը, այլ ամեհի խորհրդով դուրս ելանք քո սահմանած ճանապարհներից՝ բնավ չհիշելով քո սիրո առատությունը և քո հրամանների պատվերները: Եվ միայն այսքանը չէ, այլ բարու փոխարեն չար եղանք, և սիրո փոխարեն ատելություն հատուցեցինք, և ապաշնորհություն՝ շնորհների դիմաց: Բայց՝ բոլորից ոչ ոք, միայն ես, որի համար այս ժամանակը չի բավի խոստովանելու իմ մեղքերի բազմությունը, քանի որ ինչքան ինձ վրա շատացան քո գթությունները, այնքան խորացա մեղքի մեջ. և որքան մեծացան քո շնորհները՝ հանցանքները իմ հորդացան:

Դու մոտեցար ինձ, իսկ ես հեռացա քեզ-

ցայ ի քէն. դու կոչեցեր զիս, և ես ոչ անսացի. ցուցեր ինձ ճանապարհ լուսոյ, և ես չոգայ ընդ խաւար. եդեր առաջի իմ կեանս, իսկ ես ընտրեցի զմահ. ի քէն հրաւիրեցայ ի բարձունս, և կամակար մտօք իջի ի դժոխս. զոր քակեցեր դու՝ շինեցի ես անձին իմոյ. զոր սիրեցեր դու՝ ատեցի ես. զոր կամեցար դու՝ ես ոչ ախորժեցի. և ընդ որ ոչ հաճեցար՝ ընտրեցի զայն: Վասն որոյ ամօթ երեսաց իմոց ծածկեաց զիս, զի ամենեւին ընդ հակառական չոգայ. այլ ոչ եղէց անյոյս ի մարդասիրութենէ քումմէ, որ ընկալար զաղաչանս մաքսաւորին, և զոր հայցեացն ետուր նմա. և զկնոջն պոռնկի ոչ մերժեցեր զարտասուս, հայեցեալ ի հաւատս նորա, միով բանիւ խոստովանութեան և խնդրուածոց և զաւազակն արարեր արժանի ընդ քեզ մտանել ի դրախտն. վասն զի ոչ իսկ զօրեն սաստկութիւնք մեղաց կալ առաջի ողորմութեան քո:

Մի՛ և զիս անտես առներ տէր, այլ գթութեամբ քով ջնջեա զանօրէնութիւնս իմ. զի ի յայտնութեան քում եղէց առանց ամօթոյ, և մի դատապարտեալ ի խաւարն արտաքին. ուր լալն աչաց է և կրճելն ատամանց: Զի թէ այժմ տանջիմ ի խղճէ մտաց իմոց՝ միայն յիշելով զօրն ահագին և զարհուրելի, զի՞նչ կրեցից՝ յորժամ պատահեսցէ ինձ

նից, դու կանչեցիր ինձ, իսկ ես չլսեցի, ինձ լույսի ճանապարհ ցույց տվիր, իսկ ես խավարին գնացի, իմ առջև կյանք դրեցիր, իսկ ես մահն ընտրեցի, ինձ հրավիրեցիր բարձունքներ, ես կամովին դժոխք իջա, ինչ դու քանդեցիր՝ ես շինեցի իմ անձին, ինչ դու սիրեցիր՝ ես ատեցի, ինչ դու կամեցար՝ ես չախորժեցի, և ինչ որ չհաճեցար՝ այն ընտրեցի: Որի համար իմ երեսի ամոթը ծածկեց ինձ, որովհետև ճիշտ հակառակ ընթացա, բայց անհույս չլինեմ մարդասիրությունից քո, որ ընդունեցիր մաքսավորի աղաչանքը և խնդրածը տվիր նրան, նաև պոռնիկ կնոջ արտասուքներին չմերժեցիր, նրա հավատին նայելով՝ խոստովանության ու խնդրանքի մի խոսքով նաև ավազակին արժանի արեցիր՝ քեզ հետ դրախտը մտնելու, որովհետև մեղքերի սաստկությունը անզոր է քո ողորմության հանդեպ:

Ինձ ևս մի՛ անտեսիր, Տեր, այլ քո գթությամբ ջնջիր անօրինություններս, որ քո հայտնությանը ամոթով չլինեմ, և մի՛ դատապարտիր արտաքին խավարի, ուր աչքերի լալն է և ատամների կրճտելը: Ու թե հիմա տանջվում եմ իմ խղճմտանքից, հիշելով միայն ահագին ու զարհուրելի օրը, ի՞նչ եմ կրելու, երբ քեզ տեսնեմ, Տե՛ր, անճառ փառքով ու հրեշտակների անհամար դասով եկած. եթե քո ողոր-

տեսանել անճառ փառօք և անհամար դասուք հրեշտակաց եկեալ զքեզ տէր. եթէ ոչ ողորմութիւնք քո ժամանեսցեն ինձ, կորնչելոց եմ վաղվաղակի: Դարձ տէր, և մի՛ բարկութեամբ տանջեր. յիշեա զողորմութիւնս քո և զգթութիւնս քո որ յաւիտենական. այլ մեղաց իմոց և անօրէնութեանց արա մոռացումն և քաւութիւն վասն անուան քո. որ ընդունիս զամենեսին՝ ոյք դառնան առ քեզ, և ներես ամենեցուն՝ որոց խնդրեն ի քէն , ներեա և իմոց անօրէնութեանց՝ որպէս գթած և մարդասէր Աստուած բարերար: Յիշեա զբնութեան մերոյ զտկարութիւնս, և մի՛ պահանջեր զպարտս յանցանաց իմոց. թէպէտ և անթուելի են չարութիւնք վարուց իմոց, այլ ոչ որպէս գթութիւնք ողորմութեան քո. մեծ են յանցանք իմ, այլ ոչ յաղթեն շնորհաց քոց. սաստիկ են վէրք իմ, այլ ամենիմաստ ես բժիշկդ և դիւրահնար. ծանունք են բեռինք մեղաց իմոց, այլ կարող ես տէր թեթեւացուցանել, նա և բնաւ իսկ կորուսանել: Զերծո զիս ի տոհանց աստի մեղաց որ պատեցան զինեւ. զի մի՛ կապանք տանջանաց գեհենին պատեսցին զանձամբ իմով, և այրեցայց կայծակամբք մշտնջենաւորօք՝ եղեալ կերակուր որդանցն, որոց ոչ է վախճան:

Ամենագութ և ողորմած փրկիչ, յորժամ գաս

մութիւնն ինձ չհասնի՝ իսկոյն կկորչեմ:

Դարձիր, Տե՛ր, և բարութեամբ մի՛ պատժիր, հիշիր քո ողորմութիւններն ու գթութիւնը հավիտենական, այլ իմ մեղքերն ու անօրինութիւնները մոռացիր և քավութիւն տուր քո անվան համար, որ ընդունում ես բոլորին, որ դառնում են քեզ, ներում ես բոլորին, որ խնդրում են քեզնից, ներիր և իմ անօրինութիւնները՝ իբրև գթած և մարդասեր բարերար Աստված:

Հիշիր մեր բնության տկարությունը և իմ հանցանքներից պարտք մի՛ պահանջիր, թեպետ անթվելի են իմ գործած չարությունները, բայց ոչ քո գթության ողորմությունների չափ. մեծ են իմ հանցանքները, բայց չեն գերակշռում քո շնորհներին. սաստիկ են իմ վերքերը, բայց ամենիմաստ ես բժիշկդ և դյուրահնար. ծանր են իմ մեղքերի բեռները, բայց կարող ես, Տե՛ր, թեթևացնել, նույնիսկ ամբողջապես վերացնել: Ազատի՛ր ինձ իմ մեղքի այս ուռկանից, որ պատել է ինձ, որպեսզի գեհենի տանջանքների կապանքները չշրջապատեն ինձ և մշտնջենական կայծակներով այրվեմ՝ կերակուր լինելու որդերին, որոնց վախճան չկա:

Ամենագութ և ողորմած Փրկիչ, երբ հայրենի փառքով գաս հավաքելու կենդանիներին

հայրենի փառօք՝ ժողովել զկենդանիս և զմեռեալս, և հատուցանել իւրաքանչիւր արժանապէս, ի հոսել յորդախաղաց գետոցն հրեղինաց, որովք ընտրին շինուածք գործոց՝ այրելեաց և մնացականաց. յորժամ նստիս յաթոռ դատողութեան, և գումարին առ քեզ ամենայն ազգ երկնաւորաց և երկրաւորաց. յորժամ առնես ընտրութիւն գաւազանաւ հրամանաց՝ օդեաց և այծեաց, դասելով յիւրաքանչիւր արժանընկալ կայանս. յորժամ կոչես առ քեզ օրհնութեամբ զսիրելիս քո, մուծանել յուրախութիւն կենաց անվախճանից, ուտել ընդ քեզ և ըմպել առ սեղանն արքայութեան. իսկ զառ ի քէն օտարացեալսն յուղարկես անիծիւք ի պատրաստեալն սատանայի և պաշտօնէից նորա՝ ի հուրն յաւիտենից: Ցայնժամ և զիս զարժանաւորս բիւրապատիկ տանջանաց՝ մի՛ մերժեր յողորմութենէ քումմէ, այլ վասն անուան քո մեծի տուր ինձ տեղի հանգստեան, թէպէտ և ոչ ընդ սուրբս քո. վասն զի բազում են ի տան Հօր քո օթեւանք պատրաստեալք. զի և ես ողորմութեամբ քով արժանի եղէց օրհնել զքեզ ընդ Հօր և ընդ Հոգւոյդ սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ու մեռյալներին և յուրաքանչյուրին հատուցելու արժանապես՝ հորդառատ հրեղեն գետերի հոսումով, որով կընտրվեն արած գործերը՝ այրվողների ու մնացականների. երբ նստես դատելու աթոռին, և մոտդ գումարվեն երկնավոր ու երկրավոր բոլոր տեսակները. երբ հրամանի գավազանով ընտրես ոչխարներն ու այծերը՝ յուրաքանչյուրին դասելով արժանընկալ կայաններում. երբ օրհնությամբ քեզ մոտ կանչես քո սիրելիներին, մուծելու անվախճան կյանքի ուրախության մեջ, քեզ հետ ուտելու և ըմպելու արքայական սեղանից, իսկ քեզնից օտարացածներին անեծքով ուղարկես սատանայի ու նրա պաշտոնյաների [համար] պատրաստած հավիտենական հրի մեջ: Այն ժամանակ և ինձ՝ բյուրապատիկ տանջանքների արժանիս, մի՛ զրկիր քո ողորմությունից, այլ հանուն քո մեծ անվան ինձ տուր հանգստյան տեղ, թեկուզ ոչ քո սրբերի հետ, որովհետև քո Հոր տանը բազում են պատրաստած օթեւանները, որպեսզի ես ևս քո ողորմությամբ արժանի լինեմ օրհնելու քեզ Հոր և Սուրբ Հոգուդ հետ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԺԶ.
ԱՂՕԹՔ ՊԱՆԴԽՏԻ

ԱՐԱՐԻՉ ամենայնի յանեղծութիւն և յանապական կազմութիւն, ոչ մնացելոց միայն ի վիճակեցելումն հաստատութեան, և կացելոց յորում ընկալանն առ ի քէն ի սկզբանէ՝ յանլուծանելի գոյացութեանն, այլ և ծորելոց անխորհրդաբար ի բնաւորական գեղեցկութենէն. որոց ընտրեալ կամօք զմահ և զանզարդութիւն, զչարութեանն լինել տեղի, փոխանակ զքեզ ընդունելութեան և գեղեցկազարդութեան և տեսութեան և կենաց անմահականաց: Յորոց միոն ըստ բնութեան հաճութեամբ և կամօք տիրապէս եղեւ չար և խաւար, պատճառ ինչ կորստեան ի բնութենէ ոչ ունելով յաղագս անմարմնականի և անհարկաւոր էութեանն ըստ առ ի քէն ստեղծագործելոյն. որոյ կորստեանն չիք հնար գիւտի և բժշկութեան: Իսկ մարդն թէպէտ և օտարացաւ յիւրմէ կայանէն, յաղագս նախամեծար առնելոյ զբանասարկուին հրապոյրս խաբէութեան քան զխորհրդական և զսուրբ հրամանաց քոց պատուիրանս. սակայն անչափ և յետ այնորիկ ցուցեր ի նա զանճառելի քո քաղցրութիւն ի պանդխտութեան իւ-

ԺԶ.
ՊԱՆԴՈՒԽՏԻ ԱՂՈԹՔ

Արարիչ ամեն ինչի՝ անեղծ ու անապական կազմությամբ, ոչ միայն վիճակված հաստատությանը մնացողներին, և մնացողներին այնտեղ, ուր ընկալվեցին քեզնից ի սկզբանե՝ անխախտ գոյացության, նաև անխոհեմաբար բնատուր գեղեցկությունից հեռացածներին, որոնք կամովին մահ ու անզարդություն ընտրեցին, լինելով չարության տեղի, փոխանակ ընդունելու քեզ և՝ անմահ կյանք գեղազարդության և հայտնության: Որոնցից մեկը, ըստ բնության, տիրապես չար ու խավար եղավ հաճությամբ ու կամքով, բնությունից կորստյան պատճառ չունենալով, անմարմնական ու ոչ հարկավոր էության համար ստեղծված քեզանից, որի կորուստը հնար չունի գյուտի ու բժշկության: Իսկ մարդը թեպետ օտարացավ իր կայանից, նախընտրելով բանսարկուի խաբեության հրապույրները, քան քո իմաստուն և սուրբ հրամանների պատվիրանները, սակայն նաև դրանից հետո ցույց տվիր նրան քո անճառելի քաղցրությունը իր պանդխտության վայրում: Եվ տա-

րում տեղւոջ: Եւ ետուր ազգի ազգի տեսչութեամբ ի դարս դարս մխիթարութիւն տրտմութեան նորա, և առ յոյս ապագայիցն թողութիւն մեղաց, և մահու խափանման առհաւատչեայ. որով ցնծայր ըստ զօրութեան՝ յառաջ քան զընդունելն զայնոսիկ արդեամբք ի ձեռն մարդեղութեան Միածնի քո. և նախատեսութեամբ նշանակութեանցն յոգնօրինակաց՝ իրօք և բանիւք, զանյուսութեանն խաւարաւ ի բաց վազէր. և առաւելապէս՝ զպատճառն դառնալոյն միւսանգամ ի սեփական իւր բնակութիւն և գաւառ օտարութենէ անտի՝ ցանկայր տեսանել. այսինքն զէակցի քո Բանի մարմնով եկաւորութիւն յաշխարհ. և բերանօք սրբոցն աղաչէր զքեզ, Աստուած զօրութեանց դարձո զմեզ, երեւեցո զերեսս քո մեզ, և կեցցուք: Եւ ոչ ոք ի նոցանէ համարէր զինքն բնակ և որդի աշխարհիս այսորիկ. վասն որոյ խոստովան լինէին՝ թէ օտարք և պանդուխտք են. քանզի ազնուականի և հիմամբք հաստատելոյ քաղաքի ցանկացեալ էին, որոյ ճարտարապետ և արարիչ դու ես:

Եւ արդ տէր իմ և Աստուած, ծանեայ և ես՝ թէ ոչ կարէ անձն ընտանենալ քեզ, որ սիրէ զանկայուն բնակութիւն աշխարհիս այսորիկ. և չէ հնար թռչել վաղվաղակի մահկանացու այսորիկ մարմնով՝ և հասանել ի յերանելի քաղաքիդ բնակու-

բատեսակ տեսչությամբ նրա տրտմությանը տվիր պես-պես մխիթարություններ և ապագային՝ մեղքի թողության հույս և մահի խափանման առհավատչյա, որով ցնծում էր, ըստ զորության, քո՝ Միածնիդ մարդեղության միջոցով դրանք իրապես ընդունելուց առաջ. և բազմօրինակ նշանակությունների նախատեսությամբ՝ գործով և խոսքով, անհուսության խավարով հեռու էր վազում, և առավելապես՝ օտարությունից վերստին իր սեփական բնակության գավառը դառնալու պատճառը՝ ցանկանում էր տեսնել, այսինքն՝ քո էակից Բանի մարմնով աշխարհ գալը. և սրբերի բերանով աղաչում էր քեզ՝ Աստված զորության, վերադարձրու մեզ, ցույց տուր քո դեմքը մեզ, և կապրենք: Եվ նրանցից ոչ ոք իրեն չէր համարում այս աշխարհի ընիկ և որդի, որի համար խոստովանում էին, թե օտար և պանդուխտ են, քանի որ ազնիվ և հիմնովին հաստատված քաղաք էին ցանկացել, որի ճարտարապետն ու արարիչը դու ես:

Արդ, Տեր իմ և Աստված, ես ևս իմացա, որ չի կարող քեզ ընտանի լինել նա, որ սիրում է աշխարհիս անկայուն բնակությունը, և հնարավոր չէ այս մահկանացու մարմնով շտապ թռչել և հասնել քո երանելի քաղաքի բնակության. ինձ տիպ ու օրինակ եղավ՝ տրվելու

թիւն. առի ինձ օրինակ իմն տպաւորական՝ տալ զիս պանդխտութեան և օտարութեան. ի պանդխտութենէ և յօտարութենէ ընկալ զիս տէր. զի հայր իմ և մայր իմ թողին զիս. ծանիր զիս քաղցրութեամբ իբրեւ զքո. զի վասն խնդրելոյ զքեզ հեռացայ յազգակցութենէ արեան և մարմնոյ. պահեա յիս անբիծ և անարատ. զի վասն չլինելոյ իսկ բծական և արատաւոր՝ փախեայ ի սննդակցաց և ի գաւառէ: Եւ դու տէր իմ և Աստուած Յիսուս Քրիստոս, որ եղեր վասն իմ պանդուխտ յաշխարհի, օտար և անտուն, աղքատ և տնանկ, ճոխդ և մեծատուն և արարիչ ամենայնի, ոչ փափկութեան մարմնոյ նիւթ ինչ՝ կամ յաւելումն ստացուածոց, յորոց և փախեայն իսկ՝ խնդրեմ. նա և ոչ զհարկաւորացն որպէս մարմնասէր, այլ զի արժանի եղէց սիրել զքեզ, և լինել սիրեցեալ առ ի քէն:

Դու տէր ի փախստեանն Յակոբայ երեւեցար ի տեսիլ սքանչելի, և յուրախութիւն փոխեցեր զտրտմութիւն նորա, և ի քաջալերութիւն զերկեւղն. և ետուր նմա ոչ միայն հաց ուտելոյ և հանդերձ զգենլոյ, այլ և բազում մեծութիւն՝ զոր ոչն աղօթեաց, և որում ակն իսկ ոչ ունէր. տուր ինձ կալ անշարժ ի վերայ խարսխի պատուիրանաց քոց: Եւ դարձեալ մեծարեցեր զնա ի դարձ նորա անդրէն՝ միւսանգամ գալստեամբ քով, և անուանն

պանդխտության և օտարության: Պանդխտությունից ու օտարությունից ընդունիր ինձ, Տեր, քանի որ իմ հայրն ու մայրը ինձ թողին, ինձ քաղցրությամբ քոնը ճանաչիր, որովհետև քեզ փնտրելու համար հեռացա արյան և մարմնի ազգակցությունից. ինձ պահիր անբիծ ու անարատ, չէ՞ որ սննդակիցներից ու գավառից փախա բծավոր և արատավոր չլինելու համար: Իսկ դու, իմ Տեր և Աստված Հիսուս Քրիստոս, որ ինձ համար աշխարհում եղար պանդուխտ, օտար և անտուն, աղքատ և տնանկ, ճոխդ ու մեծատունդ և ամեն ինչի ստեղծող, չեմ խնդրում մարմնի փափկության առարկա կամ ունեցվածքի ավելացում, որոնցից փախա, և ոչ մարմնասերին հարկավոր բաներ, այլ՝ որ արժանի լինեմ սիրելու քեզ և սիրված լինեմ քեզնից:

Դու, Տե՛ր, Հակոբի փախուստի ժամանակ սքանչելի տեսիլով երևացիր և նրա տխրությունը փոխեցիր ուրախության, իսկ երկյուղը՝ քաջության, և նրան տվիր ոչ միայն ուտելու հաց, այլև հագնելու հանդերձ, նաև բազում մեծություն, որ չէր աղոթել և չէր իսկ ակնկալում. ինձ տուր [կարողություն] անշարժ մնալու քո պատվիրանների խարսխի վրա: Եվ կրկին մեծացրիր նրան, երբ դարձավ այնտեղից քո երկրորդ գալստյամբ և անվան կար-

դրութեամբ. և փրկեցեր զնա ի ձեռաց Ղաբանու և Եսաւայ, այլ և յորդւոցն Քանանու ի կոտորել որդւոց նորա զսիկիմացիսն: Լեր և ինձ փրկիչ ի հակառակ և յապստամբ չար զօրութեանց, որք խնդրեն զանձն իմ հանապազ կորուսանել զնա: Խաղաղացո և զբնութեանս մարտ՝ ստեղծիչ բնութեան, հայելով գթածաբար յանզօր և ի տկար մտաց իմոց լուծութիւն, և ի մեղսասէր գարշախնդիր կամս իմ: Որ զմանուկն Յովսէփ ի չարանախանձ եղբարցն և ի լկտի կնոջէն եգիպտացւոյ մեծաւ նախախնամութեամբ ապրեցուցեր՝ յոգի և ի մարմին խնայելով, և կացուցեր թագաւոր ի վերայ եգիպտացւոցն. և անթիւ բիւրս մարդկան կերակրելով ի ձեռս նորա՝ կորզեցեր ի լիզաջինջ առնողէն մահուանէ: Փառաւորեա և յիս զամենազօր անուն քո, տալով աջ փրկութեան գերեալ անձին իմոյ՝ յօրինաց մեղաց՝ զինելոց հակառակ օրինաց մտաց իմոց, և զխայթոց մահուն զնոյն իսպառ սատակեա, տէր ոգեսէր:

Ես ինձէն վաճառեցի զանձն իմ ի գինս կորստեան, և արկի ի գուբ խաւարին. աւետարանիչդ փրկութեան բանտարգելոցն ոգւոց՝ հան զիս ի գբոյ տառապանաց և հեղձման: Ոչ անջրպետիս բացականութեամբ վայրաց, և տեղեաց հեռաւորութիւն ի քէն ոչ մեկուսեալ զատանին, Աստուած

գով, և փրկեցիր նրան Ղաբանի և Եսավի ձեռքից, այլև Քանանի որդիներից, երբ նրա որդիները կոտորում էին սիկիմացիներին: Ինձ ևս փրկող եղիր հակառակ և ապստամբ չար ուժերից, որոնք հանապազ փնտրում են անձս՝ կորցնելու համար: Խաղաղեցրու և բնությանս մարտը, ստեղծիչ բնության, գթությամբ նայելով իմ անզոր ու տկար մտքի թուլությանը և իմ մեղսասեր ու գարշախնդիր կամքին: [Դու], որ մանուկ Հովսեփին չարանախանձ եղբայրներից ու լկտի եգիպտացի կնոջից մեծ նախախնամությամբ փրկեցիր՝ խնայելով հոգով և մարմնով, և թագավոր կարգեցիր եգիպտացիների վրա, և նրա միջոցով կերակրելով՝ բյուրաբյուր մարդկանց կորզեցիր բնաջնջող մահից: Փառավորիր և իմ մեջ քո ամենազոր անունը, փրկության աջ մեկնելով իմ գերված անձին՝ մեղքերի օրենքից, որին տրվեցի հակառակ իմ մտքի օրենքի, և մահի նույն խայթոցը ոչնչացրու իսպառ, Տեր ոգեսեր:

Ես ինքս վաճառեցի անձս կորստյան գնով և խավարի վիհը նետեցի. բանտարկված հոգիների փրկության ավետողդ, հանիր ինձ տառապանքի ու խեղդուկի գուբից: Ձես անջրպետվում հեռու վայրերից, և քեզնից հեռու տեղերը մեկուսանալով չեն զատվում քեզնից, Աստված մերձավոր, ուստի և քո սքանչելիք-

մերձաւոր. ուստի և ոչ յանծանօթից քոց միջի նուաղեն սքանչելեաց քոց մեծութիւնք, այլ զօրացեալ բարձրանան առաւել՝ զամենակալ իշխանութիւն քո յայտնապէս քարոզելով. որպէս և ի Բաբելոնի զտղայոցն սրբոց զառ քեզ սէրն և զճշմարտութիւն հաւատոցն կամեցեալ աշխարհալուր առնել, զանազան սքանչելեօք յոլովագունիւք արարեր զնոսա անուանիս. և զանմեղութիւնն Շուշանայ, զքեզ միայն յայտնի ի ձեռն մանկանն Դանիէլի յայտնեցեր ամենեցուն. և զստութիւն չարաբարոյ և անզեղջ ծերունեացն դարձուցեր ի գլուխս նոցա. և մեծացուցեր, ամենազօր, զահարկու անուն քո առաջի հեթանոսացն, որպէս ամենայն ուրեք յամենայն ժամանակի: Իսկ ես անհամարձակ գոլով յաղտեղութենէ անձին իմոյ, զիա՞րդ իշխեցից խնդրել ըստ սրբոցն և յիս կամ ինեւ ցուցանել զզօրութիւնս նշանաց: Բայց յաղագս թողութիւն գտանելոյ այժմ՝ վստահանալով յանբաւ մարդասիրութիւն քո, այլ և տալով համբերութիւն ժուժկալութեան ի տարաշխարհիկ պանդխտութեանս, և ամրութիւն յամենամուխ նետից սատանայի. յորմէ խոցոտիլ բնաւորեալ են անապատացեալքն ի քումմէ օգնականութենէ: Եւ արդ տէր իմ Յիսուս Քրիստոս, լեր ինձ պարիսպ ամրութեան շուրջանակի, և ի բաց վարեա զամե-

ների մեծությունները չեն նվազում անծանոթների մեջ, այլ զորանալով առավել բարձրանում են՝ հայտնապես քարոզելով քո ամենակալ իշխանությունը, ինչպես և Բաբելոնում սուրբ մանուկների սերը քո նկատմամբ և հավատի ճշմարտությունը կամենալով աշխարհաճանաչ դարձնել՝ բազում զանազան սքանչելիքներով նրանց անվանի դարձրիր. և Շուշանի անմեղությունը՝ միայն քեզ հայտնի, Դանիել մանկան միջոցով հայտնեցիր բոլորին և չարաբարո ու անզեղջ ծերունիների սուտը իրենց գլխին դարձրիր, և մեծացրիր, ամենազոր, քո ահարկու անունը հեթանոսների առջև, ինչպես ամեն տեղ ամեն ժամանակ: Իսկ իմ աղտեղության պատճառով լինելով անհամարձակ՝ ինչպես հանդգնեմ սրբերի նման խնդրել նաև ինձ կամ ինձնով ցույց տալ նշանների զորությունները: Բայց թողություն գտնելու համար այժմ, վստահանալով քո անբավ մարդասիրությամբ, [աղերսում եմ՝] համբերություն տուր տարաշխարհիկ պանդխտությանս դիմանալու, և ամրություն՝ ամենախոց նետերի դեմ սատանայի, որից խոցոտվելու են քո օգնությունից զրկվածները:

Եվ արդ, Տեր իմ Հիսուս Քրիստոս, ինձ ամրության շրջապարիսպ եղիր և հեռացրու չարի խորամանկության բոլոր հնարները: Ամե-

նայն խորամանկութեան չարին մեքենայս: Զգուշացիր ի պահպանութիւն ծառայի քո ամենայն ուրեք. որպէս զի անկասկած մնալով ի մեղաց խաբէութենէ, և մաքուր հոգւով և մարմնով՝ արժանի եղէց գոհանալ զքէն հանապազ, և փառս մատուցանել քեզ ընդ Հօր և սուրբ Հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

նուրեք ուշադիր եղիր քո ծառայի պահպանութեանը, որպեսզի մեղքից խաբվելուց անբերեր մնալով և մաքուր հոգով ու մարմնով արժանի լինեմ՝ հանապազ գոհանալու քեզնից և փառք մատուցեմ քեզ Հոր և Սուրբ Հոգու հետ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԺԷ.
ԱՂՕԹՔ ԱՌ ՀԱՅՐ

ՏԷՐ, Հայր և Աստուած կենաց իմոց, զբոսանս աչաց մի տար ինձ, և զցանկութիւն դարձո յինէն:

Ցանկութիւն յորովայնի և գիջութիւն մի՛ հասցէ ինձ. և անձին լրբենւոյ մի՛ մատներ զիս:

Զի քոյ օգնականութեամբ և քեւ պահպանեալ ապրեցայց յահաւոր հրոյ գեհենոյն. և քեզ փառս մատուցից յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԺԷ.
ԱՂՈԹՔ՝ ՀՈՐԸ

Տեր, Հայր և Աստված իմ կյանքի, ինձ մի՛ տուր աչքի զբոսանք և ցանկությունը հեռացրու ինձանից:

Որովայնի ցանկություն և գիջություն չհասնի ինձ, և լրբենի անձի մի՛ մատնիր ինձ:

Որ քո օգնությամբ և քեզնով պահպանված փրկվեմ ահավոր գեհենի հրից և քեզ փառք մատուցեմ հավիտյանս հավիտենից. ամեն:

ԺԸ.
ՈՂԲՔ

ԱՆՁՆ իմ տառապեալ, և գերեալ ի սատանայէ, ընդէ՞ր ոչ զգաս զկորուստ քո. որո՞վ յուսով քաջալերեալ՝ կաս դատարկացեալ ի բարեաց գործոց. զի՞նչ գործեսցես ի պահանջման պարտեացն համարոյ: Առաջի կայ քեզ կորուստ անգիւտ. վասն զի բարկացուցեր զարարիչն իսպառ, և ոչ ծանեար զբարեգործն. այլ որ սիրեացն զքեզ, ընդդէմ դարձար. և հեստեցեր նմա՝ որ կամեցաւ քեզ կեալ: Արդ ո՞ ցածուսցէ զեռանդն բարկութեան նորա. կամ ո՞վ աղաչեսցէ զերեսս նորա ի հաշտութիւն քեզ. հէգդ և թշուառական՝ ընդէ՞ր ոչ ակնածեցեր ի պատուոյ փառաց նորա. վասն է՞ր ոչ մեծարեցեր զփրկական նորա զհրամանն. է՞ր աղագաւ կամեցար զկորուստ քո: Ո՞ հաւանեցոյց զքեզ ապստամբել ի տեառնէ. ո՞ կողոպտեաց զփառս քո. ո՞վ աղքատացոյց զքեզ ի ճոխութենէ. ո՞ւմ հաւանեալ ոստեար ի բաց ի գրկացն հայրենեաց, և տրտմեցուցեր զգութս նորա. զի սիրէր զքեզ, և կամէր լինել միշտ առ ինքեան. և դու արհամարհեալ զնա՝ յետ չոգար թշնամեաց քոց. զորդէգրութեանն պատիւ կորու-

ԺԸ.
ՈՂԲ

Ան՛ձ իմ տառապյալ և գերված սատանայից, ինչո՞ւ չես զգում քո կորուստը, ի՞նչ հույսով քաջալերված դատարկվել ես բարի գործերից. պարտքերի հաշիվը պահանջելիս ի՞նչ ես անելու: Քեզ անվերադարձ կորուստ է սպասում, որովհետև արարչին բարկացրիր իսպառ և չճանաչեցիր բարեգործին, այլ՝ որ քեզ սիրեց, ընդդիմացար և ընդվզեցիր նրա դեմ, որ մնալդ ուզեց: Արդ, ո՞վ կիջեցնի նրա բարկության եռանդը, կամ ո՞վ կաղաչի նրան հաշտվելու քեզ հետ: Հեգ և թշվառական, ինչո՞ւ չակնածեցիր նրա փառքի պատվից, ինչո՞ւ չմեծարեցիր նրա փրկարար հրամանները, ինչո՞ւ քո կորուստը ցանկացար: Ո՞վ համոզեց քեզ ապստամբել Տիրոջ դեմ, ո՞վ կողոպտեց քո փառքը, ո՞վ աղքատացրեց քեզ ճոխությունից, ո՞ւմ հավատալով հայրենի գրկից դուրս ոստնեցիր և շարժեցիր գթությունը նրա, ով քեզ սիրում էր, ուզում էր, որ լինեիր միշտ իր մոտ, իսկ դու, արհամարհելով նրան, գնացիր քո թշնամիների ետևից, կորցրիր որդեգրության պատիվը և

սեր,և դասեցար ընդ ատելիս նորա: Զար՝ փոխարէն ընդ որոց առերն հատուցեր. վասն այնորիկ շարժեալ է ողորմութիւն նորա ի ցասումն, և փոփոխեալ յատելութիւն՝ սիրոյ նորա ջերմութիւն. վերացեալ է ձեռն նորա հարկանել զքեզ, և սուր նորա սրեալ որպէս փայլակն՝ խնդրել զվրէժ ատելութեան քո: Եւ երանի՛ թէ աստ միայն. քանզի գիտեմ՝ եթէ փոքր է այժմու ժամանակիս հարուածք. և ոչ այսու վճարին անհնարին բազմութիւնք մեղաց իմոց: Աւա՜ղ մեծի տուգանիս. զո՞ ընդ որո՞ց փոխանակեցի. արտասուսք բնութեան ոչ են ինձ բաւական յողբումն իմոյս կորստեան. զրկեցայ ի հարսանեացն՝ վասն աղտեղի պատմուճանիս. մերժեցայ յերանելի ցնծութենէն և ի սուրբ առագաստէն, վասն իւղոյն պակասութեան. դրունքն փակեցան, և զիա՞րդ իշխեցից բախել. գուցէ անախորժելիս բարբառեսցի ի ներքուստ փեսայն, թէպէտ և է ողորմած. գուցէ ի բաց առաքեսցէ զիս յինքենէ իբրեւ զգործօղ անօրէնութեան, կամ հրամայեսցէ կապել և հանել ի խաւարն արտաքին: Ո՜վ հիգութեանն, ո՜վ դժուարալուր պատմութեանն. հասանէ անկանել ի մշտնջենաւոր կենացն, և ժառանգել զանվճար պատուհասն. երանի՛ թէ բնաւ իսկ չէի ծնեալ, և ոչ տեսեալ զլոյս արեգականս այսորիկ. երանելի

դասվեցիր նրա ատելիների շարքը: Զարով հատուցեցիր ստացածիդ փոխարեն, դրա համար նրա ողորմությունը ցասման է վերածվել, և նրա սիրո ջերմությունը փոխվել է ատելության, նրա ձեռքը բարձրացել է քեզ հարվածելու, և նրա սուրը սրվել է փայլակի պես՝ քո ատելության վրեժը լուծելու: Եվ երանի միայն այստեղ [լինեին], քանի որ գիտեմ՝ փոքր են այս ժամանակի հարվածները, և սրանով չի վերջանա իմ մեղքերի անհնարին բազմությունը:

Ավա՜ղ մեծ տուգանքին, ո՛ւմ՝ ումով փոխանակեցի. բնության արցունքները ինձ բավարար չեն կորուստս ողբալու. աղտեղի պատմուճանիս համար հարսանիքից զրկվեցի, մերժվեցի երանելի ցնծությունից և սուրբ առագաստից՝ յուղի պակասության պատճառով դռները փակվեցին, ինչպե՞ս համարձակվեմ բախել. գուցե Փեսան ոչ ախորժելի բաներ բարբառի ներսից, թեպետև ողորմած է. գուցե վտարի ինձ իրենից իբրև անօրինություն գործողի կամ հրամայի կապել և հանել արտաքին խավարի մեջ: Ո՜վ թշվառություն, ո՜վ դժվար լսելի պատմություն, հարկ է զրկվել մշտնջենական կյանքից և ժառանգել անվախճան պատուհասը. երանի՜ բնավ չծնվեի և չտեսնեի այս արեգակի լույսը. արդյոք երա-

արդեօք էի, եթէ ծորեալ անկեալ արտաքսէի որպէս զվիժածսն, քան ընդունել զձայն սաստկութեան հրաժեշտի ի քաղցրախօս բերանոյ Փրկչին:

Ո՛վ աշխարեսցէ ընդ իս զկորուստ իմ. ո՞տրտմեսցի ի վերայ թշուառութեան իմոյ. արարածք սգակից եղերուք ինձ, և տարերք անշունչք ողբացէք զիս. սուրբ զուարթունք Աստուծոյ տրտմեցարուք ի վերայ կորստեան իմոյ. զի թէ վասն դարձի միոյ մեղաւորի ուրախութիւն է ձեզ յերկինս, ապա և վասն իմոյս կորստեան տխրեցարուք. այլ և աղաչեցէք զբարերարն, թերեւս խնայեսցէ յանձն իմ դատապարտ, կամ եթէ ներելով տանջեսցէ. վասն զի ես ոչ իշխեմ ժտել՝ զամօթ պատկառանաց ունելով յաղագս մեծապէս ընդդիմադարձութեան իմոյ Քրիստոսի: Թէպէտ և գիտեմ զանչափ քաղցրութիւն նորա, այլ կասկածեմ ի բազմութենէ մեղաց իմոց. վստահ եմ յողորմութիւն գթութեան նորա, այլ խոչընդակն են ինձ անօրէնութիւնք իմ. կամիմ զի մերձեցայց և աղաչեցից, այլ ամաչեմ գալ ի դէմս տեառն, զոր զայրացուցի բազում անգամ. խէթ և խիղճ խորհրդոց իմոց ոսոխ եղեալ յամօթ առնեն զիս, և ոչ իշխեմ պաղատել ակնկորեալ և ամաչեցեալ. կամ պապանձեալ, և երկնչիմ բանալ զբերան. զարհու-

նելի՞ էի, եթե շարժվելով, ընկնելով արտաքսվի վիժածի պես, քան Փրկչի քաղցրախոս բերանից հրաժեշտի սաստկության ձայնն ընդունեի:

Ո՛վ կսգա ինձ հետ իմ կորուստը, ո՞վ կտրտմի իմ թշվառությամբ. ինձ սգակից եղեք, արարածներ և անշունչ տարրեր, ողբացեք ինձ, Աստծու սուրբ հրեշտակներ, տրտմեցեք իմ կորստյամբ. քանի որ՝ եթե մի մեղավորի դարձը ուրախություն է ձեզ երկնքում, ապա և իմ կորստի համար տխրեցեք, այլև աղաչեցեք Բարերարին, թերևս խնայի դատապարտված անձս, կամ թե ներելով տանջի, որովհետև ես չեմ համարձակվում խնդրել՝ ունենալով պատկառանք ու ամոթ՝ Քրիստոսին մեծ ընդդիմությանս պատճառով: Թեև գիտեմ նրա անչափ քաղցրությունը, բայց կասկածում եմ իմ մեղքերի բազմության պատճառով, վստահ եմ նրա գթոտ ողորմությանը, բայց ինձ խանգարում են անօրինություններս, ուզում եմ, որ մոտենամ և աղաչեմ, բայց ամաչում եմ Տիրոջ դեմ ելնել. նրան բազմիցս զայրացրի: Իմ մտքի կասկածն ու խղճի խայթը ոսոխ դարձած ամաչեցնում են ինձ, և չեմ համարձակվում պաղատել գլխահակ ու ամոթահար, պապանձվում եմ, վախենում եմ, որ բերանս բանամ, Աստծուն տեսնե-

րումն սրտի իմոյ յերեսաց տեառն ափ ի բերան առնէ զիս: Եթէ գոյր ոք միջնորդ և բարեխօս, որ տայր ինձ առ ի նմանէ մուրհակ համարձակութեան, թերեւս կարէի մատչել յաղօթս. բայց կարծեմ թէ զազրացան յինէն ամենեքեան ոյք սիրեն զԱստուած, և վասն աղտեղութեան իմոյ զզուեն զիս և գարշին յինէն. և այժմ ոչ գիտեմ զինչ արարից, կամ զո՞ աղաչեցից լինել վշտակից և բարեխօս: Մի եւեթ կարծեմ լուծումն տարակուսանաց իմոց՝ և հնար փրկութեան՝ ապաւինել առ նոյն ինքն, որ կարեկցաբար գթայ ի գործս ձեռաց իւրոց. որ միայն քան զամենեսին է գթած և անոխակալ. և վասն անչափ երկայնմտութեան իւրոյ ոչ բարկանայ իսպառ, և ոչ յաւիտեան պահէ ոխս, այլ ընդառաջ եւս ելանէ դարձելոցն ի չարութենէ վարուց սիրով մեծաւ և խոնարհութեամբ. և ոչ փոքր ինչ բերկրանօք զուարճանայ ընդ կանգնումն գլորելոցն, և առ ոտս նորա դիմելոցն. զնդալով ի նոսա թէ պարտ իցէ ասել՝ մանաւանդ, քան յորս երբէք ոչ անցին ըստ սահման պատուիրանաց նորա, աղաչէ և զայլս ուրախակից ինքեան լինել. վասն որոյ յիշելով զայս ամենայն, վստահացայց ասել. Հայր մեղայ յերկինս և առաջի քո, և ոչ եւս եմ արժանի կոչիլ որդի քո. արա զիս իբր զմի ի վարձկանաց քոց. զի մի եղէց սո-

լու սրտիս զարհուրանքից ափիբերան եմ լինում ես:

Եթե մեկը լիներ միջնորդ ու բարեխոս, որ ինձ համարձակության մուրհակ տար նրանից, գուցե կարենայի մոտենալ աղոթելու, բայց կարծում եմ, թե զզվեցին ինձնից բոլորը, որ սիրում են Աստծուն, և իմ աղտեղության համար անարգում են ինձ ու գարշում ինձնից, և այժմ չգիտեմ՝ ինչ անեմ կամ ո՞ւմ աղաչեմ՝ լինելով վշտակից և բարեխոս: Միայն կարծում եմ իմ տարակուսանքը ցրելու և փրկության հնարը նույն իրեն ապավինելն է, որ կարեկցաբար խղճում է իր ձեռքի գործերին, որ միակն է՝ բոլորից ավելի գթած ու անոխակալ, և իր անչափ ներողամտության բերումով չի բարկանում իսպառ, և ոխ չի պահում հավերժ, այլ մեծ սիրով ու խոնարհությամբ չար վարքից դարձածներին ընդառաջ է ելնում և ոչ փոքր բերկրանքով զվարճանում է գլորվածների կանգնումով, իր ոտքը եկողներին խնայելով, մանավանդ նրանց, որ երբեք չանցան նրա պատվիրանների սահմանը, խնդրում է և ուրիշներին ուրախակից լինել իրեն, որի համար հիշելով այս ամենը՝ վստահանամ ասել. «Հայր, մեղա երկնքի և քո առաջ և արժանի չեմ որդիդ կոչվելու. ինձ դարձրու քո վարձկաններից մեկը, որ չքավո-

վամահ ի չքաւորութենէ, այլ կեցից վասն ողորմութեան քո, որ կամիսդ իսկ զկեալ մեղաւորաց, և ոչ զմահ: Տուր ինձ համարձակութիւն կալ առաջի քո. քանզի պոռնիկք և մաքսաւորք մերձենան առ քեզ, և ժտին զփրկութիւն գտանել անձանց, և դու ոչ մերժելով՝ շնորհեա առատաբար: Ընկալ տէր և զիմս պաղատանս. և արա արժանի ի քէն պարգեւաց զանձն իմ թշուառական. անտես արա զբազմութիւն անօրէնութեանց իմոց, և մի յիշեր զմեծութիւն մեղաց իմոց. կարկառ զաջ քո ամենազօր, և ձգեա ի բաց զընկղմեալս ի խորութենէ տղմի չարեաց. շնորհեա ինձ լուանալ արտասուօք զչար զայսպիսի շաղախումն, և ըստ ձեան օրինակի արասցես մաքրութիւն. մաշեսցին փուշք մեղաց իմոց ի կիզմանէ աստուածային գթութեան քո. և մարդասիրութեան քո ջերմութիւն հալեսցէ զսառնամանիս մտաց իմոց. և բուսցին փոխանակ փշոյն՝ բոյսք բարութեան և առաքինութեան յանդաստանի քում, ոռոգեալք և աճեցեալք ի շնորհաց քոց, և պահպանեալք ի գազանացն ապականչաց: Զի այսպիսեօք պատուեալ ես՝ հանգուցից զքեզ պտղովք իմովք, և տաց քեզ օրհնութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ըութիւնից սովամահ չլինեմ, այլ ապրեմ քո ողորմութեամբ, չէ՛ որ կամենում ես մեղավորների ապրելը և ոչ մահը: Ինձ համարձակութիւն տուր քո առջև կանգնելու, քանի որ պոռնիկներն ու մաքսավորները մոտենում են քեզ և խնդրում փրկութիւն գտնել, իսկ դու չմերժելով շնորհում ես առատաբար»:

Տեր, ընդունիր և իմ պաղատանքը և իմ թշվառ անձը արժանի արա քո պարգևներին, անտեսիր իմ անօրինութիւնների առատութիւնը և մի՛ հիշիր իմ մեղքերի մեծութիւնը, մեկնիր ամենազոր աջդ և դուրս հանիր չարիքի տիղմի մեջ ընկղմվածիս, շնորհ արա ինձ՝ արտասուքով լվանամ այսպիսի չար շաղախումը և ձյան նման մաքուր դարձրու, թող մաշվեն իմ մեղքերի փշերը՝ քո աստվածային գթությամբ այրվելով, և քո մարդասիրության ջերմությունը հալեցնի իմ մտքի սառնամանիքը, և փշի փոխարեն աճեն բարության և առաքինական բույսեր քո անդաստանում՝ ոռոգվելով ու աճելով քո շնորհներով և պահպանվելով ապականիչ գազաններից: Որ պատվել ես այսպես՝ քեզ հանգստացնեմ իմ պտուղներով և օրհնություն տամ քեզ հավիտյանս հավիտենից. ամեն:

ԺԹ.
ԱՂՕԹՔ ԱՌ ՈՐԴԻՆ

ԱՆՍՏՈՒԵՐ լոյս, և գոյացուցիչ բնութեան լուսոյ, միածին որդի Աստուծոյ՝ Յիսուս Քրիստոս, Հօր քում արարչակցի ի լինելութիւն ամենայնի, զորոյ անվրէպ ըստ բնութեան բերես մշտնջենաւորապէս զնմանութիւն. կատարելոյ Հօր կատարելութիւն, և մեծին մեծութիւն. հզօրին զօրութիւն, իմաստնոյն իմաստութիւն. լուսոյն ճառագայթ, և սկզբնատպին պատկեր. ծնողին բան. յորմէ ի լրման ժամանակաց առաքեալ՝ եղեր մարմին, զի զեղեալսն մարմին և զտարագրեալսն ի քումմէ հոգւոյ՝ հոգեկիրս արարեալ աստուածացուցես. և զչարչարելի բնութիւն զԱդամայ առաջնոյ՝ չարչարանաց յաղթեցուցես՝ քո ի չարչարանս մատնելով, Ադամ երկրորդ, և տէր յերկնից. յոր ոչ ոք ել, բայց իջեալդ միայն, որ ելեր ի վերոյ ամենայն երկնից: Մարդկօրէն մահու և թաղմամբ՝ հաճեցեր ընդ քեզ յարուցանել, զորս պատուեցեր մերձաւորութեամբ, կցորդութեամբ՝ մարմնոյ և արեան, խափանելով զայն՝ որ զիշխանութիւն մահուն ունէր. և նստուցեր ընդ երկնաւորս ազատաբար զվտարանդեալս ի ծառայութենէ երկիւղիւ մահուն, և ետուր առհաւատչեայ խոս-

ԺԹ.
ԱՂՈԹՔ՝ ՈՐԴՈՒՆ

Անստվեր լույս և գոյացնող լույսի բնության, Աստծու Միածին Որդի Հիսուս Քրիստոս, ամեն ինչի լինելությանը քո Հոր արարչակից, որին մշտնջենապես անվրեպ նմանություն ունես, կատարյալ Հոր կատարելություն և մեծի մեծություն, հզորի զորություն, իմաստունի իմաստություն, լույսի ճառագայթ, սկզբնատիպի պատկեր, ծնողի Բան, որից ժամանակների լրմանը ուղարկված՝ մարմին եղար, որպեսզի մարմին եղածներին և քո հոգուց տարագրվածներին, հոգեկիր դարձնելով, աստվածացնես և առաջին Ադամի չարչարելի բնությանը չարչարանքներին հաղթել տաս՝ չարչարանքի մատնվելովդ, Ադամ երկրորդ և Տեր երկնքի, ուր ոչ ոք չբարձրացավ, բայց միայն իջածդ, որ ելար ամբողջ երկնքի վերևը: Մարդկորեն մահանալով և թաղվելով հաճեցիր քեզ հետ հարություն տալ, որոնց պատվիրեցիր մերձավորությամբ, կցորդությամբ մարմնի և արյան, խափանելով նրան, որ մահու իշխանություն ուներ և նստեցրիր երկնայինների մեջ մահվան երկյուղով ծառա-

տացելոցն առ ի քէն բարութեանց հաւատացելոց քոց՝ զՀոգին ճշմարտութեան որ ի Հօրէ ելանէ. որպէս զի զհաւասարն քեզ ըստ աստուածութեանն էութեան, և զուգապատիւ նոյնութեամբ բնութեանն, ըստ որում և Հօր, ունելով անշուշտ և անճառելի գրաւական, մի իւիք երկմտեալք թերայոյսք լինիցին, այլ խարսխեալք ի պարգեւսն՝ հաւատովք զյուսացեալն իբրեւ զնկալեալ յայտնապէս ողջունեսցեն:

Եւ արդ տէր, որ այսքան և այսպիսի սիրոյ ապացոյց վասն մեր ետուր, գթա և յիս, որ առաւել քան զամենեսեան ունիմ պէտս մարդասիրութեան. զանճառելի քաղցրութիւն սիրոյ քո ունիմ առ քեզ բարեխօս, զքո ինքեան պարգեւասիրութիւնդ և զանոխակալութիւն. մի՛ մտաներ ի դատաստան ընդ ծառայի քում. մի՛ պահանջեր զհամարս բիւր քանքարին զոր պարտիմն. մի զիս ըստ իմումն դատիր, այլ դիր նպատակ դատաստանի զանչափ քաղցրութիւն սիրոյ քո, որ և մանաւանդ սիրելին է քեզ: Որովք ի քեզդ են՝ վարեսցիս յիս տէր, և մի ըստ որում ի դէպն և պատշաճն է ինձ. մի՛ արդար դատաստանաւ՝ այլ ողորմութեամբ դատեա, և ի կշիռ զողորմութիւն դիցես. զի մի ի սպառ զրկեցայց յանբաւութենէ քաղցրութեան քո. վասն զի ոչ իբրեւ զմարդ ես ի դատելն. դարձցի սիրտ քո ի նոյն. յիշեա զյաւիտենից ողորմու-

յութիւնից վտարվածներին և առհավատչյա տվիր նրանց, որ խոստացել էիր քո բարութիւնը հավատացողներին՝ Հոգին ճշմարիտ, որ ելնում է Հորից, որպես քեզ հավասարի՝ ըստ աստվածային էության, նույնությամբ զուգապատիվ բնությանը և Հորը, ունենալով անկասկած ու անճառելի գրավական, ոչ մի թերահույս երկմտող չլինի, այլ խարսխված պարգևներին՝ հավատով հուսացածին իբրև իրապես ստացածի կողջունեն:

Եվ արդ, Տե՛ր, որ այսքան և այսպիսի սիրո ապացույց տվիր մեզ, գթա և ինձ, որ բոլորից ավելի ունեմ մարդասիրության կարիք. քեզ մոտ բարեխոս ունեմ քո սիրո անճառելի քաղցրությունը, քո բուն պարգևասիրությունն ու անոխակալությունը. մի՛ մտնիր դատաստան քո ծառայի հետ, մի՛ պահանջիր հաշիվը բյուր քանքարի, որ պարտք եմ, մի՛ դատիր ինձ իմ [արածի] համաձայն, այլ դատաստանի նպատակ դիր քո սիրո անչափ քաղցրությունը, որ մանավանդ քեզ սիրելի է: Քո մեջ եղածով վարվիր ինձ հետ, Տեր, և ոչ՝ որ հարմար ու պատշաճ է ինձ, ոչ թե արդար դատաստանով, այլ ողորմությամբ դատիր և ողորմություն դիր կշեռքին, որ իսպառ չզրկվեմ քո անբավ քաղցրությունից, որովհետև իբրև մարդ չես դատում, քո սիրտը նույնը թող լինի. հիշիր

թիւն քո. անտես արա զբազմութիւն յանցանաց ի-
մոց, ներեա անոխակալութեամբ քով: Տուր և զեղջ
սրտի իմոյ, և աչաց իմոց արտասուս, որպէս զի
ըստ կամաց քոց ապաշխարեցից. որ կամիս զա-
մենեցուն զկեալն և ի գիտութիւն ճշմարտութեան
հասանել, արա փոփոխումն խստութեան սրտի ի-
մոյ: Քանզի քո շնորհելով զգիտութիւն՝ ծանեաւ
զքեզ աւազակն, և արդարացեալ ընդ քեզ եմուտ ի
դրախտն. և պոռնիկն ընկալաւ զթողութիւն մե-
ղաց. մի և յինէն գարշելով դարձուցաներ զերեսս
քո. զի թէպէտ և ես ծանրաբեռն եմ մեղօք, և աղ-
տեղի եմ քան զամենեսեան, այլ ողորմութիւն քո
անսպառ է, և բաւական առ ի մաքրութիւն. արա և
զիս մասնաւորել՝ որոց գտին ի մեծութենէ քումմէ
ողորմութիւն. և ընդ Հօր և ընդ սուրբ Հոգւոյդ,
այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

*քո հավերժ ողորմությունը, անտեսիր իմ հան-
ցանքի բազմությունը, ներիր քո անոխակա-
լությամբ: Տո՛ւր իմ սրտին զղջանք և իմ աչ-
քերին արտասուք, որպեսզի ըստ քո կամքի
ապաշխարեմ: [Դու], որ ցանկանում ես բոլո-
րի մնալը և ճշմարտության ճանաչման հաս-
նելը, փոխիր իմ սրտի խստությունը: Քանի
որ գիտություն շնորհելովդ ճանաչեց քեզ ա-
վազակը և արդարացած քեզ հետ՝ մտավ
դրախտ: Պոռնիկը նույնպես ստացավ մեղքե-
րի թողություն. ինձնից ևս մի՛ դարձրու ե-
րեսդ գարշելով, որովհետև թեպետ ես մեղքով
ծանրաբեռնված եմ և աղտեղի եմ քան բոլորը,
բայց քո ողորմությունն անսպառ է և բավա-
կան է մաքրվելու համար, ինձ ևս մաս հասց-
րու, [ինչպես ուրիշների], որ ողորմություն
գտան քո մեծությունից, և [քեզ փառք] Հոր և
Սուրբ Հոգուդ հետ այժմ և միշտ և հավիտ-
յանս հավիտենից. ամեն:*

Ի.
ԱՂՕԹՔ ԱՌ ՈՐԴԻՆ

ՈՐ ի չափ խոնարհութեան մերոյ՝ յաղագս մարդասիրութեան քո իջեր միածին Որդի Աստուծոյ, էակից և կերպարան Հօր, ոչ համարեալ ինչ յափշտակութիւն զգոլն հաւասար Աստուծոյ և Հօր. զանձն թափեցեր զկերպարանս ծառայի առեալ, և զմահ խաչի յանձն առեր, զի զմեզ ազատեսցես յանիծից, և ի մեղաց, և ի ձեռն արեան քո մաքրեսցես յամենայն աղտոյ անօրէնութեան, և լուացեալ ընծայեսցես որպէս զսուրբ՝ չարչարանաց քոց պտուղ Հօր քում. և դառնալով ի հայրենական քո պատիւդ և յաթոռ յետ յարութեան Ի մեռելոց, առաքեցեր զՀոգիդ քո սուրբ զգոյակից քո և զհանգիպատիւ ի մխիթարութիւն և ի լուսաւորութիւն մեզ. և աստուածազգեաց զհողեղէնս արարեալ բնութիւն՝ թագաւորեցուցեր ընդ քեզ տէր անոխակալ և աննախանձ. և մասնաւորեալ իմ այսպիսոյ պատուոյ՝ գերազանցագունի մտաց և բանի, դարձեալ յերկիր անմտաբար կործանեցայ, և զմաքրութիւնն պարգեւեալ առ ի քէն ձրի, աղտով մեղաց շաղախեալ կորուսի. և լցեալ ամօթով կորանաց, ոչ իշխեմ բանալ զբե-

Ի.
ԱՂՈԹՔ՝ ՈՐԴՈՒՆ

Որ մեր խորնարհության համեմատ, քո մարդասիրության համար իջար, Միածին Որդի Աստծու, Հոր էակից և կերպարանք, Աստծուն և Հորը հավասար լինելը հափշտակություն չհամարելով՝ նվաստացար ծառայի կերպարանք առած, և խաչի մահ հանձն առար, որ մեզ ազատես անեծքից ու մեղքերից, և քո արյան շնորհիվ մաքրես անօրինության բոլոր կեղտերից, և լվանալով՝ իբրև քո սուրբ չարչարանքի պտուղ ընծայես քո Հորը, վերադառնալով քո հայրենական պատվին ու աթոռին՝ մեռելներից հարություն առնելուց հետո, քո գոյակից և համապատիվ Սուրբ Հոգին ուղարկեցիր մխիթարելու և լուսավորելու մեզ: Հողեղեն բնությունը մեր աստվածազգյաց դարձրիր՝ թագավորեցնելով քեզ հետ, անոխակալ և աննախանձ Տեր: Եվ ես, ավելի գերազանց մտքի ու խոսքի այսպիսի պատվի մասնակից լինելով, դարձյալ անմտաբար գետին տապալվեցի և քեզնից ձրիաբար պարգևված մաքրությունը կորցրի՝ մեղքի աղտով շաղախելով. և լցված կորության ամոթով՝ չեմ

րան իմ առաջի քո. զի գիտեմ ոչ արժանի զիս գոլ միւսանգամ գտանել զողորմութիւն ի բարերարութենէ քումմէ, քանզի մեծամեծ և զանազան չարեօք գործոց իմոց ի բաց պարսպեալ փակեցի զիս ի քաղցրութենէ կամաց քոց: Սակայն դու ամենագութ՝ որ ոչ ի սպառ բարկանաս, և ոչ յաւիտեան պահես ոխս, ոչ ըստ մեղս իմ արարեր ինձ, և ոչ ըստ անօրէնութեան իմոյ հատուցեր ինձ, այլ երկայնմտութեամբ քով գթացեալ խնայեցեր յիս կոչելով յապաշխարութիւն ի ձեռն քաղցրութեան քո. իսկ ես ըստ խստութեան իմում և անզեղջ սրտի՝ գանձեցի ինձէն ինձ բարկութիւն յաւուր բարկութեան և յայտնութեան արդար դատաւորութեան քո. յաղագս որոյ ի մէջ բազում և հարկաւոր տարակուսանաց մեծամեծաց պաշարմամբ ըմբռնեալ, ոչ գիտեմ զինչ արարից. զի ամօթ երեսաց իմոց ծածկեաց զիս, խնդրել յառատ մարդասիրութենէ քումմէ քաւութիւն և ողորմութիւն. խէթ խղճի ստգտանաց սրտի իմոյ աներկբայ կարծեօք ընդոստուցանէ զիս ի զանգիտութիւն, և հեղձնուն միտք իմ ի դժուարին ի ծանրագոյն անսուտ վկայութեանց աստի: Եւ արդ առ ո՞ ապաւինեալ դիմեցից, կամ ո՞ միջնորդեսցէ ինձ վստահութեամբ հաշտեցուցանել զանցասումնն և զառանց բարկութեան քաղցր կամս քո. այլ

հանդգնում բանալ բերանս քո առջև, որովհետև գիտեմ՝ արժանի չեմ երկրորդ անգամ ողորմություն գտնելու քո բարերարությունից, քանի որ իմ զանազան և մեծամեծ չար գործերով պարսպափակ մեկուսացա քո կամքի քաղցրությունից: Բայց դու, ամենագութ, որ չես բարկանում խսպառ և հավերժ ոխ չես պահում, ինձ իմ մեղքով չհատուցեցիր և ոչ իմ անօրինության համաձայն, այլ քո ներողամտությամբ գթալով խնայեցիր ինձ՝ քո քաղցրությամբ կոչելով ապաշխարության: Իսկ ես իմ խստության և անզեղջ սրտի համեմատ՝ ինքս ինձ բարկություն գանձեցի բարկության և արդար դատավարության համար հայտնությանդ օրը, այդ պատճառով բազում և ստիպողական մեծամեծ տարակուսանքներով պաշարված՝ չգիտեմ ինչ անել. զի իմ երեսի ամոթը զրկեց ինձ՝ քո մարդասիրությունից քավություն և ողորմություն խնդրելու. իմ խղճի խայթը, սրտիս ամոթը առանց երկմտելու մղում է ինձ երկյուղի, և խեղդվում է միտքս այս ծանրագույն անսուտ վկայություններից:

Եվ այժմ ո՞ւմ ապավինելով դիմեմ, կամ ո՞վ կմիջնորդի ինձ համար՝ վստահաբար հաշտեցնելու քո քաղցր կամքը՝ անցասում և առանց բարկության, եթե ոչ քո նույն այդ անբավելի

զգոյն ինքն զբնութեան քո անբաւելի մեծութիւն, և անիմանալի հեզութիւն զմտաւ ածեալ, ծանեայ ճշմարտապէս միջնորդ հաշտութեան և քաւութեան մեղաւորաց, բարեխօս և տուիչ բարեաց, դատաւոր և աղերսող, այլ և պարտաւորիչ և ազատարար. արդարութեամբ և իրաւամբ քո ողորմած, բարերար բարեաց, և կոչօղ մեղաւորաց. առողջութեան ողջոց պարգեւիչ և պահապան, և հիւանդութեան ախտացելոց բժիշկ անկաշառ. երկեղածաց քոց անմարտնչելի զօրութիւն, և տկարացելոցն ի ստամբակութեան անառակութենէ՝ ոյժ և նեցուկ հաստատութեան. անկելոց յարութիւն, կապելոց ամրութիւն անվթար. անճառից բարեաց համբարակ, և պարգեւաբաշխ յորդ և անհուն առատութեամբ. կուրաց և խաւարելոց լոյս մեծ, աչէից և տեսանողաց արարիչ և նախախնամող. առ քեզ անկանելով դիմեցից, զքեզ կոչեցից, քեւ ապրեցայց, որբոց հայր և դատաւոր այրեաց: Փրկեա զիս յոսոխէն իմմէ, զգերութիւն իմ դարձո հզօրդ. զպարաւանդս կապանաց նորա քակեա յինէն, որ զՂազար կոչեցեր և հաներ ի դժոխոց, և զապականութիւն մարմնոյ նորա լուծեր իշխանութեամբ. հան և զիս ի գբոյ տառապանաց անօրէնութեան իմոյ. զնեխութիւն վիրաց հոգւոյ իմոյ բժշկեա. զծանրութիւն մեղաց իմոց՝ ո-

մեծությունը և անիմանալի հեզությունը մտքով անցկացնելով՝ ճանաչեցի ճշմարտապես միջնորդ հաշտության և մեղավորների քավության՝ բարեխոս և բարիքի տվիչ, դատավոր և աղերսող, այլև պարտադրող և ազատարար. քո արդարությամբ և ողորմած իրավությամբ, բարիների բարերար, մեղավորներին կանչող, ողջերին առողջություն պարգևող և պահապան, և ախտավորների հիվանդության անկաշառ բժիշկ, քո երկյուղածների անմրցակից զորություն և ստամբակության անառակությունից տկարացածների՝ ուժ և հաստատության նեցուկ. ընկածներին հարություն, կապվածներին՝ անվթար ամրություն. անճառ բարիքների շտեմարան, հորդաբուխ և անհուն առատությամբ պարգևաբաշխ. կույրերին ու խավարյալներին՝ մեծ լույս, աչյաների և տեսնողների արարիչ ու նախախնամող, ընկնելով քո առջև՝ դիմեմ, քեզ կոչեմ, քեզնով փրկվեմ, որբերի հայր և դատավոր այրիների:

Փրկիր ինձ իմ ոսոխից, ինձ դարձրու գերությունից, հզո՛րդ, նրա կապանքների շղթաները քանդիր իմ վրայից, [դու] , որ Ղազարին կանչեցիր և հանեցիր դժոխքից, և կարողաբար վերացրիր նրա մարմնի ապականությունը: Ինձ ևս հանիր իմ անօրինության վիհի

որով հեղձան կեանք իմ և փախեան յինէն, ի բաց շարժեալ ընկեա. այսրէն վերստին զկեանսն շնորհեա կենդանութիւնդ և կենարար. հերձ զվիշապին կլանողի որովայն, որ զբոամբ ածէր զնոյն ինքն. և զիս կորզեալ արտաքս ձգեա ի խորոց անդնդոց, յոր ընկեցայ կամօք իմովք. դարձո՛ զիս Փրկիչ, և ի միջոյ ժանեաց գազանին զերծուսցես զիս ի բաց. ապրեցո յոյս լքելոց, ապաւէն տարակուսելոց, Քրիստոս Աստուած իմ. մի՛ վերջանար յայցելութենէ կորուսեալ ծառայի քո. յիշեա զմարդեղութիւն քո որ յաղագս իմ. յիշեա զսուրբ չարչարանս քո, զհեղումն պատուական և աստուածային արեան քո, միանգամայն և զորս յանձն առեր գործել և կրել վասն թշուառացելոցս ի բանսարկուին մախանաց, և դատապարտելոց մահու՝ ի քէն տարագիր եղելոց. և մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն, զի նեղեալ եմ ես՝ վաղվաղակի լուր ինձ տէր. շահեսցին և բազումք՝ որոց փրկութեան ոչ իցէ յոյս, տեսանելով յիս զողորմութիւն քո քաջալերեսցին յուսով ի քեզ. քանզի և վասն միոյ որ ապաշխարիցէ, գիտեմ և հաւատամ ուրախանալ քեզ. մի՛ յիմում կորստեան յանդարձութենէ՝ յարեսցի տրտմութիւն ի բնութիւնդ խնդութեան անճառելոյ. յինէն ինչ ոչ ի բարեաց վճարի. վասն զի դժնեայ և չար սովորութեամբ օտարա-

տառապանքներից, բուժիր իմ հոգու վերքերի նեխությունը, հեռացրու իմ մեղքերի ծանրությունը, որով խեղդվեց կյանքս և փախավ ինձնից, դուրս բեր այստեղից, նորեն կյանք չնորհիր, կենդանությունդ և կենդանարար, պատռիր կլանող վիշապի որովայնը, որ նույն ինքը բռնած բերում էր, և ինձ կորզելով դուրս հանիր խոր անդունդից, ուր ընկա իմ կամքով: Դարձրո՛ւ ինձ, Փրկի՛չ, և գազանի ժանիքների միջից ազատի՛ր ինձ, ապրեցրո՛ւ, լքվածների հույսդ, ապավենդ տարակուսյալների, Քրիստոս Աստված իմ. մի՛ վերջացնի այցելությունդ քո կորուսյալ ծառային, հիշիր մարդեղությունդ, որ ինձ համար էր, հիշիր քո սուրբ չարչարանքները, քո պատվական և աստվածային արյան հեղումը, նաև ում որ հանձն առար՝ գործել և տանջվել բանսարկուի չարակնությունից թշվառացածներիս համար և մահվան դատապարտվածներին, որ դու ես տարագրել. և մի՛ շրջիր քո դեմքը ինձնից, որովհետև ես նեղված եմ, շտապ լսի՛ր ինձ, Տեր, թող շահեն և շատերը, որոնց փրկության հույս չկա, տեսնելով ինձ վրա քո ողորմությունը՝ կքաջալերվեն քո հույսով, քանի որ նաև մեկ ապաշխարողի համար ես ուրախանում, և ես գիտեմ ու հավատում եմ, իմ կորստի անդարձությունից տրտմություն չիջնի

ցուցի զիշխանականն ի բարիոք խորհրդոց, որում և զգայութիւնք հանդերձ մարմնով հետեւեալ՝ եղեն գահավէժ: Դու կատարեա յիս զհաճելին քեզ տալով մտաց իմոց իմաստս և խորհուրդս լուսաւորս և բարիս, և զգայութեանց իմոց սանձս համեստութեան և ամփոփման. լուծութեան մարմնոյ իմոյ՝ զօրութիւն առաքինի և քաջ. և յամենայն որ յիս ունակութիւն, փոխադրութիւն ամենակատար. զի քեզ կարելի և դիւրադէպ յոյժ են ամենայն բարեաց տուչութիւնք. և ես խոստովան եղէ և լինիմ զանձին տկարութիւն: Ի կամակարութենէ մի՛ յաղթեսցէ եկամուտն՝ այլ բնաւորականն. մի՛ չարին սերմանեալ տրամադրութիւնն, այլ եղեալն ի քէն հաճելի և բարիոք զօրութիւնն. զպատկերին շնորհ՝ վերստին ծաղկեցուսցես յիս, և զիշխանական դարձեալ ճոխութիւն՝ ի վերայ գազանական և անասնային ախտից պարգեւեսցես ինձ յամենայնի բաւականդ և հզօր. դարձո ինձ զկապուտն՝ քոյին պարգեւքն. մի՛ թշնամին տկար՝ քոյոցն պարծեսցի յափշտակութեամբք. ծանիցէ զզօրութիւն քո, որպէս ծանեաւն. զարհուրեսցի ի բարձրացեալ բազկէ քումմէ, ըստ որում և տեղեակն իսկ է. անամօթն պատկառեսցէ, որպէս և ամաչեացն. զի զընդհանրական փրկութիւնն տեսցէ և յիս յատկապէս. մի՛ յաղագս հասարակին և եթ,

անճառելի խնդության բնությանդ. ինձնից բարիք սպասելի չէ, որովհետև դժնի և չար սովորությամբ օտարացրի տիրականը բարի խորհուրդներից, որով և զգայությունները մարմնի հետ գահավեժ եղան: Դու ինձ վրա կատարիր քեզ համար հաճելին՝ իմ մտքին տալով լուսավոր ու բարի իմաստներ և խորհուրդներ, և իմ զգայությունների համեստության և ամփոփման սանձերը. իմ մարմնի թուլությունը [դարձրու] առաքինի և քաջ զորություն. և իմ մեջ ամեն ունակություն հասցրու կատարելության, որովհետև քեզ կարելի և խիստ դյուրին է ամեն բարիքի տվչություն, և ես խոստովանեցի և խոստովանում եմ տկարությունս:

Ինքնիշխանության պատճառով չհաղթի ձեռքբերովին, այլ՝ բնածինը, ո՛չ չարի սերմանած տրամադրությունը, այլ՝ քո դրած հաճելի և բարի զորությունը: Պատկերի շնորհը վերստին ծաղկեցնես իմ մեջ և վերստին իշխանական ճոխություն պարգևես ինձ գազանական և անասնային ախտերի վրա, ամեն ինչով բավականդ և հզորդ, վերադարձրու ինձ քո խլած պարգևները. տկար թշնամին չպարծենա քո [տվածի] հափշտակությամբ, ճանաչի քո ուժը, ինչպես ճանաչեց, զարհուրի քո բարձրացած բազկից, որին և տեղյակ է, անա-

այլ և վասն մասնաւորիս հասցեն նմա կորանք, որպէս զի մի՛ համարեսցի չարն փոյթ քեզ զբոլորէն լինելն, իսկ զմասանցն ոչ բնաւ. այլ զի գիտասցէ ամենայն ուրեք և յամենայն ժամանակի որոց խնդրեանն զքեզ՝ լինել փրկիչ քեզ անճառելի հոգաբարձութեամբ. վիրաւորեսցի զանողջանալին, և ի միում միայն զմեծութիւն քաղցրութեան գթոց քոց հայելով՝ սպառեսցի որպէս ի հուր մոմ: Արդ յամենայնի երկայնամիտդ և անոխակալդ, և ընդունող հայցուածոց մեղաւորաց դարձելոց առ քեզ, մի՛ անտես առներ զիս, և զբանս աղաչանաց իմոց. այլ տուր ինձ զխնդրուածս մաղթանացս այսոցիկ, զի և ես ողորմութեամբ քով արժանի եղէց ընդ կատարեալ ծառայս քո փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ Հոգւոյդ սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

մոթը պատկառի, ինչպեսև ամաչեց՝ տեսնելով ընդհանրական փրկութիւնը և հատկապես իմը. ոչ միայն ընդհանուրինը, այլև մասնաւորիս համար նրան ամոթ հասնի, որպեսզի չարը չկարծի, թե դու հոգում ես բոլորի համար, իսկ մասնաւորին՝ ոչ բնավ, այլ որ գիտենա ամենուրեք և ամեն ժամանակ, ովքեր խնդրում են քեզնից, փրկիչ կլինես անճառելի հոգաբարձությամբ. կվիրավորվի անողջանալին, և միայն քո գութի մեծ մի քաղցրությանը նայելով՝ կսպառվի, ինչպես մոմը՝ կրակով:

Արդ, ամեն ինչի մեջ ներողամիտդ ու անոխակալդ, և քեզ դարձող մեղավորների խնդրանքն ընդունողդ, մի՛ անտեսիր ինձ և իմ աղաչանքի խոսքերը, այլ տուր ինձ այս խնդրանքներիս մաղթանքը, որ ես էս քո ողորմությամբ արժանի լինեմ քո կատարյալ ծառաների հետ փառավորելու քեզ Հոր և Սուրբ Հոգուդ հետ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԻԱ.
ՄԱԶԹԱՆՔ ԱՌ ՀԱՅՐՆ ԵՐԿՆԱՒՈՐ

ՀԱՅՐ ուսուցեալ ասել, զիւրն ըստ ճշմարտութեան ծնօղ զերկնաւորն, և էապէս մարդասիրի փրկչին և տեառն. ամաչեմ ակնկորեալ, զանգիտեմ անուանել և կարդալ, մտօք և սրտիւ տագնապիմ զարհուրեալ, պապանձեալ կարկին շրթունքս և չիշխեմ արձակել զմեծապատուութեան ինձ բարբառ զամենատարփիկն գերաշխարհեաց, զցուցակ անճառելոյ մարդասիրութեան. զոր լուեալ գերամաքուր և փաղփուն անձին է և անապական մարմնոյ շրթանց: Նկուն հակառակորդն լինի զըմպրեալ ի ձայնէն և յանուանն զօրութենէ. և դասք ապստամբութեան նորա սպասաւորք՝ մոլին փախստեալք ի հեռաստան անբաւ. և զիա՞րդ ոչ. քանզի մոմ անկեալ ի հնոց ճողոպրել կամ զբնութիւն պահել զգոյութեանն իւրոյ անսահ և անծորելի՝ ոչ կալցի զօրութիւն: Բայց ես վասն զի կորուսի զզարդուն այնմիկ տեսիլ փառաց և ահարկութեան, իշխել զձայնին պայմանաց շրշունչ դանդաղիմ ճշմարտապէս. բաղձամ մտօք, այլ կասկածեմ յանմաքրութենէ ոգւոյս. լինիմ բնաւորապէս ջեռեալ երանելի անձ-

ԻԱ.
ՄԱՂԹԱՆՔ՝ ԵՐԿՆԱՎՈՐ ՀՈՐԸ

Սովոր ենք Հայր ասել, ըստ ճշմարտության, իր ծնող երկնավորին, էապես մարդասեր Փրկչին և Տիրոջը. ակնկոր ամաչում եմ, երկնչում եմ անվանել և դիմել, մտքով ու սրտով տագնապում եմ զարհուրած, շրթունքներս լռում, պապանձվում են, և չեմ հանդգնում արձակել ինձ մեծարող բարբառն ամենացանկալի գերաշխարհների, անճառելի մարդասիրության նշանը, որ լսեցի գերամաքուր և չենչող անձից և անապական մարմնի շուրթերից: Նկուն հակառակորդը պապանձվում է ձայնի և անվան զորությունից. և նրա սպասավոր ապստամբ դասերը մոլեգնում են՝ փախչելով անբավ հեռաստան: Եվ ինչո՞ւ ոչ, չէ՞ որ հնոցն ընկած մոմը փախչելու կամ իր գոյության բնույթը անսահելի և չծորող պահելու ուժ չի ունենա: Բայց ես, քանի որ կորցրի այն զարդի փառքի և ահարկության տեսիլը, իսկապես դժվարանում եմ զսպել պարծանքի ձայնի շշունջը, դանդաղում եմ ճշմարտապես, մտքով ըղձում եմ, բայց կասկածում եմ ոգուս անմաքրությունից. իսկապես ջերմա-

կովն, այլ պատկառանացն անջրպետութեանն խորոցն մղեալ՝ նահանջէ ի վերջին տեղի զանմաքրապէս նուիրողաց բարեձայնութիւն: Եւ սքանչելի արդարեւ բարբառ. մատչել յօժարեմ սրտի գեղձմամբ, և խղճի մտացս պարաւանդեալ, և համարեալ ոչ չափաւորապէս՝ անդրէն ձգեալ յետս լինելով:

Ո՞վ չարեացս, զինչ կրեցի. կամ զարդարն ասել, որպիսի՛ խորխորատ յօժարեալ կազմեցի անձին, յորո՛ց բարութեանց զիս ինքն կողոպտեալ զրկեցի: Ո՞վ թշուառութեանս. ո՛ զանասելի կորուստ ինձ ողբասցէ. զիա՛րդ կարացից բանիւք շրթանց յանդիման զինէն ամբաստանութեանս կացուցանել ծանրութիւն. ո՛ր արդեւք բաւեսցէ մատեան քարտի ընդունել զբողոք այսպիսոյ ոսոխութեան և դատախազանաց. և երանի թէ գրել զամենայն ոչ ինչ թերեաւ որքան ինչ զինէն լինէր ունել այժմ առաջի, և տալ ի ձեռս դատաւորին արտասուաթոր աչօք և բեկեալ անձամբ. գիտեմ զնա մարդասէր, ճանաչեմ քաջ զգթութեան նորա զանդունդս, զառ դարձեալսն ի մեղաց՝ սրտիւ անոխակալութիւն և քաղցրութիւն վաստակութեան մեղանացն գրոյն: Խոնարհէր թերեւս յաղագս բանականին և ընտանւոյ ինքեան հաշտականին քաղցրութեան՝ որ զգործով ուսեալ իմ զանքէն և

ցած եմ լինում երանելի կարոտով, բայց պատկառանքի անջրպետի խորքերը մղված՝ վերջին տեղն է նահանջում այն մաքրությամբ նվիրողների բարեձայնությունը: Եվ արդարև սքանչելի բարբառ. հոժարում եմ մոտենալ, կաշկանդված սրտի բաղձանքով և խղճմտանքով, և համարելով ոչ չափավոր՝ դառնում եմ ետ:

Ո՞վ չարիք, որ կրեցի, կամ արդարն ասենք, հոժարակամ ինչպիսի խորխորատ հորինեցի ինձ, ո՛ր բարություններից, ինքս ինձ կողոպտելով, զրկեցի: Ո՞վ իմ թշվառություն, ո՛վ պիտի ողբա անասելի կորուստս. ինչպես կարենամ շրթունքի բարբառով հակակշռել ինձ ուղղված հանդիմանանքի ամբաստանության ծանրությունը, ո՛ր մատյանն արդյոք ի վիճակի է ընդունել այսպիսի ոսոխությունների և դատախազության բողոքը. երանի թե գրեի ամեն ինչ առանց պակասեցնելու, որքան իմ մասին այժմ դնելու [եմ աչքի] առաջ և արտասվաթոր աչքով ու բեկված սրտով տալ դատավորի ձեռքը: Գիտեմ՝ նա մարդասեր է, լավ ճանաչում եմ նրա գթության [խոր] անդունդները՝ մեղքից դարձածների հանդեպ անոխակալ սրտով և քաղցրությամբ, երես չդարձնել հանցանքների գրի սաստկության պատճառով: Թերևս խոնարհվում էր հանուն բանա-

զանոխակալութեան նորա բարերարութիւն: Փառաւորութեան նմա՝ պատկանաւորացն տեղոյ արժանի երբէք՝ թէպէտ հազիւ կամ անագան լինէր: Բայց ինձ ո՞ առ այսոքիկ միջնորդ, ո՛ աղաչող վասն իմ. քանզի բարեկամացուցի և ոչ զոք ի սրբոցն և յանարատիցն զնոցայն խոկալով. և է գթութիւն սիրոյ՝ առ համախոհս ի մարդկանէ բնաբար իմն ունակացեալ:

Եւ արդ զի՛նչ ապաւինութեան օրինակ, կամ գործել հնարաւոր զի՞նչ ինձ, ոչ գիտեմ. ըմբռնեալ եմ խաւարաւ տարակուսանաց, շուրջ հայելով ի բոլոր կողմանս ի բնութենէ ծնելոյ՝ խնդրող զոք ոչ անձին իմոյ գտանեմ. զի եթէ ոչ ես ինքն ողորմեցայց իմում չարաբաղդի գլխոյ, ո՞ յայլոց գթալ խոնարհեսցի յիս: Չկարեմ պատճառանս հնարից դիւրաւ գտանել ի համար պատասխանւոյ թագաւորին, յորում պահանջիցիմ աւուր զերկայնամտութիւն նորա. ոչ ապաշխարութեան ինձ, այլ բարկութեան կամեցայ լինել առիթ. քանզի խստացեալ սրտիւ ոչ ի քաղցրութեանն վայելեցի գանձելով զփրկութիւն ի ձեռն զղջման արտասուաց. ոչ փախեայ ի գործոց տղմաձայնաց, ոչ զանհնարինն զմտաւ ածեալ սովոյ ողողականս: Դիմեցի առ հայր, և զանբաւ նորա քաղցրութիւն կալայ ջատագով անձին. զրկեալս յողորմութենէ

կանի և ընտանիի ինքնահաշտության քաղցրության, որ գործով սովոր եմ նրա անքեն և անոխակալ բարերարությանը: Նրա փառավորության՝ պատկան տեղի արժանի [չեղա] երբեք՝ թեկուզ հազիվ կամ ուշացած: Բայց այս [հարցերում] ինձ ո՞վ է միջնորդ, ո՞վ է աղաչող ինձ համար, քանի որ սրբերից ոչ մեկին չբարեկամացրի և նրանց՝ խոկալով անարատներից. և սիրո գթություն կա համախոհների նկատմամբ՝ մարդկանցից բնականաբար ունակացած:

Եվ արդ, ապավինության ի՛նչ օրինակ կամ ի՛նչ է հնարավոր որ անեմ՝ չգիտեմ, կաշկանդված եմ տարակուսանքի խավարով. բոլոր կողմերը նայելով՝ ինձ համար խնդրող չեմ գտնում, որովհետև եթե ես ինքս չողորմեցի իմ չարաբախտ գլխին, ուրիշներից ո՞վ խղճալով կխոնարհվի ինձ վրա: Չեմ կարող հեշտությամբ գտնել պատճառաբանություն Թագավորին հաշվետու լինելու համար, որ ակնկալեմ [դատաստանի] օրը նրա ներողամտությունը: Ինձ ոչ թե ապաշխարության, այլ բարկության առիթ լինել կամեցա, քանի որ խստասրտությամբ և ոչ քաղցրությամբ, զղջումով, արտասուքով փորձեցի փրկություն գանձել: Չփախա տղմական գործերից, մտքով չանցկացրի անհնարին սովի լլկանքը: Դիմեցի

ՆՇխարէ, թէպէտ և զանմեղութիւն ոչ պահեցի և զսրտահաճութիւն բարեսիրի հօրն: Եւ որում կեալն սիրելի է ամենեցուն և ի գիտութիւն գալ ճշմարտութեանն, պարտ էր գոնէ ստահակին ինձ նմանել որդւոյ: Մի արդեաք յիշեա՞ց ինչ ամենառատն զառաջնոյ անզգամութեանն զսխալանացն սաստկութիւն ի դարձին վերստին առ ինքն. միթէ գարշեցա՞ւ ի տգեղութենէ հոգւոյն մաքուրն յամենայնի և գերազանցեալն սրբութեամբ ծայրագունի. միթէ անսա՞ց ի կատարումն գալ գործել զոր ինչ խորհեցաւ թշուառացեալ որդին. ո՞չ ի սրտին հայելով ախորժակս միայն՝ արար մոռացումն ապիրատութեան. ո՞չ իւրով բազում գթութեամբն ընթացաւ ընդ առաջ որպէս բարեգործի ումեք որդւոյ ի սկզբանէ, նա եւս առաւել քան այնպիսումն, որ փափաքող կենդանութեան մեռելոյ և գիւտի կորուսելոյ: Վասն որոյ առաքումն Միածնին ի մարդեղութիւն, զուգագունին որդւոց սիրելոյ և հնազանդութիւն խոնարհութեան, ամենայնիւ հաւասարութիւն մեզ առանց մեղաց, անչարչարականին էութեանն չարչարանք մարմնով, և անմահին մեռելութիւն յաղագս մերոյ կենդանութեան: Սա եկն կոչել ոչ յարդարս այլ զմեղաւորս յապաշխարութիւն. բժշկել ոչ զառողջս, այլ զախտաժէտս հիւանդութեամբ չարութեանն. ի բաց

Հորը և նրա անբավ գթության քաղցրությունը ջատագով դարձրի ինձ. ողորմության նշխարից զրկվածս թեև անմեղությունը չպահեցի և սրտահաճություն՝ բարեսեր Հորը: Որին [հավատարիմ] մնալը և ճշմարտության գիտության հասնելը սիրելի է բոլորին. ինձ պետք էր գոնե ստահակ որդուն նմանվել:

Մի՞թե դեպի իրեն վերստին դարձի ժամանակ խնամառատը հիշեց առաջին անզգամության սխալների սաստկությունը, ամեն ինչում մաքուրն ու ծայրագույն սրբությամբ գերազանցը մի՞թե գարշեց հոգու տգեղությունից, մի՞թե անսաց գալ կատարելու՝ ինչ որ խորհեց թշվառացած որդին. սրտի համար ախորժելին տեսնելով միայն՝ մոռացման չտվե՞ց ապիրատությունը. սկզբից իր բազում գթությամբ ընդառաջ չգնա՞ց որպես ի սկզբանե բարեգործ մի որդու, ևս առավել քան այնպիսիին, որ փափագող է մեռյալի կենդանության և կորածի գյուտի: Որի համար Միածինը՝ զուգակցի սիրելի որդին, առաքվեց մարդեղության և խոնարհ հնազանդության. մեզ հավասար ամեն ինչով առանց մեղքի, անչարչարական էությանը՝ չարչարանք մարմնով, անմահին՝ մահ՝ հանուն մեր կենդանության: Նա եկավ ապաշխարության կոչելու ոչ թե արդարներին, այլ՝ մեղավորներին, բժշկելու

ընկենուլ զծանրութիւն բեռանց անօրէնութեան քան զգլուխ բարձրացելոյ, զայնորիկ կրողաց զլքեալս աշխատութեամբ հանգուցանել:

Արդ յիրաւի որ զայսոսիկ ի ձեռն Որդւոյն ճշմարտի և միայնոյ մատակարարեաց, անկշռելի գթութեամբ գիրկս արկանէր զերբեմն ապստամբեցելոյ որդւոյն պարանոցաւն, համբուրէր վասն կարօտութեանն զտարաժամ անդրէն դարձեալ որդին. զի թէպէտ և անագան, սակայն ոչ անարժան գովութեամբ. վասն որոյ և մերկութիւն նշաւակութեանն ոչ տերեւով թզենւոյ, այլ գեղեցիկ պատմուճանաւ լինէր զգեցեալ. զոր և ունէր իսկ նախ քան զօտարանալն ի հայրենի ժառանգութենէն. և զբոկութիւն գարշապարացն տուեալ ի վիշապին կամակորի խածումն, ամրացուցանէր վերստին խորհրդական կօշկօք. զուարճակից առնէր զիմանալի հոգիսն իւրոյ մարդասիրական ուրախութեանն. երիցուն աղերսէր որդւոյ արտաքս լինել նախանձու և կարծեաց անպատուութեան անձին. զանճառելին առաջի արկանէր պատճառ ցնծութեան. և եթէ ընդէ՞ր պարարակն զենաւ զուարակ. վասն զի եղբայր է, ասէ, կենդանացեալ և գտեալ ի մահուանէ. մի զանպարտ զբնութեանդ խորհելով տխրազգած լինիս: Իսկ ես կուրացեալ անբաւ յանցաւորութեամբ մեղանչա-

ո՛չ առողջներին, այլ՝ չարության հիվանդությամբ ախտահարներին. մերժելու անօրինության ծանր բեռները, քան թե գլուխ բարձրացնելու, մեղքի չարչարանքով դրա կրողներին հանգստացնելու:

Արդ, իսկապես ճշմարիտ և միակ Որդու միջոցով սրանք կատարեց, անկշռելի գթությամբ գրկում էր երբեմն ապստամբած որդու պարանոցը, համբուրում էր՝ կարոտած տարաժամ վերադարձած որդուն, որ թեպետ ուշացած, բայց ոչ գովքի անարժան, որի համար նշավակելի մերկությունը ոչ թե թզենու տերևով, այլ գեղեցիկ պատմուճանով էր ծածկել, որ և ուներ նախքան հայրենի ժառանգությունից օտարանալը, և գարշապարների մերկությունը տալով կամակոր վիշապներին խածոտելու՝ վերստին ամրացնում էր նվիրական վարձատրությամբ. իմանալի հոգիներին զվարճակից էր դարձնում իր մարդասիրական ուրախությանը. ավագ որդուն աղերսում էր ազատ լինել նախանձից ու կասկածանքից. ցնծության պատճառ էր համարում անճառելին, և թե ինչո՞ւ պարարտ արջառը մորթեց, որովհետև, ասում է, եղբայրը կենդանացել, դարձել է մահից. քո բնության անմեղ լինելը խորհելով՝ մի՛ տրտմիր:

Իսկ ես, կուրացած մեղանչականության

կանութեանն, յայն ամենայն ոչ հայեցայ դառնալ՝ ուստի մերժեցայն անձամբ առ խաղաղական հեշտասիրութիւնն. այլ փոխանակ վերստին ուղղութեան և ապաշաւանաց ոչ դադարեմ յոտնառութենէ գայթման և ի գլորութենէ չարեաց մեծամեծաց, և անդրէն դառնալով ի փսխած չարութեանն, լինիմ ատելի մանաւանդ քան թէ ողորմելի: Ի ձեռն խոստովանութեան զմեղսն և ոչ թաքուցանելոյ թուիմ փախչել ի նոցանէ և ի բաց դառնալ. իսկ զնովիմբ զառածանելով յաճախապէս հատանեմ ի վերայ անձին զվճիռ յաւիտենական պատուհասին. գրեմ ինձէն զինքենէ ամբաստանութիւն. զմին որպէս զատեցող մեղաց ի ձեռն խոստովանութեանն. իսկ զմիւսն որպէս սիրողի զնոյն և կարի քաջ յաղագս ոչ երբէք առնելոյ զվախճան ի խորխորատն սողոսկելոյ կորստեան և խաւարի. զմին յաչս և յականջս մարդկան, զմիւսն առաջի ահարկու և արդար դատաւորին. և լինի որքան յիրաց անտի գոյ, և դէպ է ուսանել. մինն կեղծաւորական ձեւով պաճուճեալ. ապա եթէ ոչ, հի՞մ որպէս զբարւոք սիրելեաւ գիրկս արկանեմ. ընդէ՞ր թշնամանեմ իբրեւ զդաւող չարաչար և ենեգիչ, և խանդաղատիմ որպէս զպատճառաւ բարութեան. զմէ՞ լինիմ ոսոխ որպէս զրկեալ յանիրաւէ. բայց միւսն ճշմարտութեամբ լինի ան-

անհուն հանցավորությամբ, չուզեցի դառնալ այն ամենին, որոնցից հեռացա խաղաղ հեշտասիրությամբ, այլ փոխանակ վերստին ուղղվելու և ապաշավելու, չեմ դադարում գնալ գայթման և գլորվել մեծամեծ չարիքների մեջ, և վերադառնալով դարձ չարությանը՝ առավել ատելի եմ լինում, քան ողորմելի: Մեղքերը խոստովանելով և չթաքցնելով՝ կարծում եմ փախչել նրանցից և ետ դառնալ, իսկ հաճախակի նրանցով մոլորված՝ հաճախ ինձ վրա հավիտենական պատուհասի վճիռ եմ կայացնում. իմ դեմ [կրկին] ամբաստանություն եմ գրում. մեկը՝ որպես խոստովանությամբ մեղքերի ատող, մյուսը՝ որպես նույնը սիրողի և շատ քաջ՝ երբեք վախճան չառնելու՝ կորստի ու խավարի խորխորատ սողոսկելու. մեկը մարդկանց աչքին ու ականջին, մյուսը՝ ահարկու և արդար դատավորի առջև, և լինում է՝ որքան այն իրերից պատշաճ է սովորելու. մեկը՝ կեղծ ձևով պաճուճված, եթե ոչ՝ ինչո՞ւ, որպես բարու, սիրով գրկում եմ. ինչո՞ւ եմ թշնամանում իբրև չարաչար դավող ու նենգիչ, և խանդաղատում եմ իբր բարության պատճառով. ինչո՞ւ եմ լինում ոսոխ՝ զրկված անիրավից, բայց մյուսը լինում է ճշմարտությամբ արձանագրված:

Եվ ի՞նչ անեմ այժմ, և ո՞րն է փրկության

ձանս գրեալ:

Եւ արդ զի՞նչ գործեցից, և ո՞ր հնար իցէ փրկութեան. քանզի տեսանեմ զիս ինքն ճանապարհաւ կենաց ի մահու իջեալ յատակս. որով կարծեմն ապրել ըստ յոլովից անձանց՝ շահել և ոչ ինչ: Այլ հակառակ նմին առաւել եւս մեծացուցանել ի վերայ իմ սպառնացելոցն տանջանացն արհաւիրս. վասն զի խոստացայ բազում անգամ զղջանալ, զի զայս լինել՝ խոստովանելն զեկուցանէր, և ոչ բնաւ պտուղ արժանի ապաշխարութեան ախորժեցուցանել Աստուծոյ: Սակայն լինէր և այն ոչ կարի ճշմարտութեամբ, որպէս վայել էր բժշկելն կամողաց, յայտնել բժշկաց զախտիցն դաժանութիւնս և յոլովութիւն. այլ պատրուակեալ իմն բարրանօք ամօթոյ, կամ զարդարն ասել կեղծաւորութեամբ՝ ամբարտաւանութեանն վարագուրաւ. այլ և սնապարծական փառախնդրութեամբ առ ի մարդկանէ չերեւել գարշելի զթարախ այտուցեալ վիրացն յայտնապէս առ մարդիկ առանց ամօթոյ ցուցանելով:

Ոչ սուգ զգեցայ զի մխիթարեցայց. ոչ աղքատութիւն՝ մխիթարութիւն հոգւոյ, ոչ սրբութիւն սրտի, ոչ հեզութիւն առ եղբարս իմ կամ թշնամանիչս, ոչ հալածանս յանձն առի յաղագս արդարութեան՝ որոց է արքայութիւնն երկնից. ոչ նա-

հնարը, քանի որ ինձ տեսնում եմ՝ կյանքի ճանապարհով մահվան հատակն իջած, որով կարծում եմ ապրել շատերի նման, և չչահել ոչինչ: Այլ հակառակը, առավել ևս մեծացնում եմ ինձ սպառնացող տանջանքների արհավիրքը, որովհետև բազմիցս խոստացա զղջալ, քանի որ այս խոստովանելն ու պատմելը բնավ ապաշխարության արժանի պտուղ ցույց տալ չէ՝ ախորժելի Աստծուն: Բայց դա ևս լինում էր ոչ խոր ճշմարտությամբ, ինչպես վայել էր բուժելը ցանկացողներին, հայտնելով բժիշկներին ցավերի դաժանությունն ու շատությունը, այլ իբր ամոթի պատճառով պատրվակելով կամ արդարն ասելով կեղծավորությամբ, ամբարտավանության վարագույրով, նաև սնապարծ փառք որոնելով առանց ամոթի ցույց տալ մարդկանց ուռած վերքերի գարշելի թարախը:

Ո՛չ սուգ հագա, որ մխիթարվեմ, ո՛չ աղքատություն՝ հոգու մխիթարություն, ո՛չ սրտի սրբություն, ո՛չ հեզություն եղբայրներիս կամ թշնամիներիս նկատմամբ, ո՛չ հալածանք հանձն առա արդարության համար, որոնք երկնքի արքայությանն են, ո՛չ նախատումն ու չարախոսություն Տիրոջ սիրո համար, ո՛չ ատելություն նրա համար, որ իմ պատճառով ատվեց բարին ատողներից, չքաղցեցի ու չծա-

խատանս և չարաբանութիւն վասն սիրոյն տեառն. ոչ ատելութիւն յաղագս այնորիկ որ ատեցաւն վասն իմ յատելեացն բարոյ. ոչ քաղցեայ և ոչ ծարաւեցայ արդարութեամբ՝ գտանել յագուրդ՝ ի տեառնէ. ոչ ետու փոխ աղքատին. ոչ ողորմեցայ զի գտայց փոխարէն. ոչ զթշնամին քաղցեալ և ծարաւի՝ կերակրեցի: Ոչ բրդեցի կարօտելոյն զհացն իմ, կամ զմերկն զգեցուցի, զանտունն ոչ մուծի ընդ յարկաւ գերանաց իմոց. ի վերայ նեղչաց և լլկողաց աղօթս ոչ մատուցի, և ոչ ապտակողին մատուցի զապրեալ ծնօտն: Յանցականին և պարտականին ոչ թողի ի սրտէ, զի գտայց թողութիւն. ոչ խոնարհեցայ զի բարձրացայց. ոչ զփառս արհամարհեցի մարդկայինս, վասն ի միոյն խնդրելոյ փառաց: Ընդ վարողին ոչ գնացի և ոչ զմոռոնն. ոչ դաստիարակեցի զգայարանս և ոչ զմի, և ոչ զմիտս ինքն կամ զշունչս. նովաւ ոչ եղէ վշտակից որոց ի վիշտս, կամ ընդ խնդացեալսն խնդացի. ոչ հատուցի վարձս վարձականի, ոչ ժուժկալեցի լուտալոյ և այպանութեան ուրուք. ոչ անվեհեր երբէք եղէ ի գործ արժանաւոր փութոյ. և միանգամայն ասել ի հրամանաց Աստուծոյ՝ ոչ գիտեմ եթէ վճարեցի ըստ արժանի. և ի հրաժարելեացն ոչ ի բաց դարձայ ախորժակօք մտաց. վասն զի ի չարեաց ոչ կամե-

րավեցի արդարութեամբ Տիրոջից հագուրդ ստանալու. ո՛չ աղքատին փոխ տվի, ո՛չ ողորմեցի, որ փոխարենը գտնեմ, ո՛չ սոված ու ծարավ թշնամուն կերակրեցի: Կարոտյալին չբրդեցի իմ հացը, մերկին չհագցրի, անտունին չմտցրի իմ գերանների հարկի տակ. նեղիչների ու լլկողների համար չաղոթեցի և ապականողին չմատուցեցի փրկված ծնոտը: Հանցավորին ու պարտապանին ի սրտե չթողի թողություն գտնել, չխոնարհվեցի, որ բարձրանամ, չարհամարհեցի մարդկային փառքը՝ մի փառք փնտրելու համար: Վարողի հետ չգնացի և ոչ մի մղոն. չդաստիարակեցի ոչ մի զգայարանս, և ոչ շունչ ու միտք, նրանով վշտակից չեղա վիշտ ունեցողներին, կամ ուրախացողների հետ չուրախացա. չհատուցեցի վարձկանի վարձը, չզսպեցի նախատելն ու այպանելը մեկին, երբեք չեղա արժանավոր գործի անվեհեր հետապնդող. նաև բան ասելու Աստծու հրամաններից, չգիտեմ, թե կատարեցի՞ արժանի կերպով. մտքի ախորժանքով չհեռացա հրաժարելիներից, որովհետև չարիքներից չուզեցի մանկանալ և բարությամբ կատարյալ լինել:

Եվ այժմ ինձ կլինի՞ թողության հույս, կամ կգթա՞ ինձ ամեն ինչ տեսնողի աչքը, կամ թե մոռացման կտա՞ այսքան կամավոր անօրեն

ցայ տղայանալ և բարութեամբ լինել կատարեալ:

Եւ արդ գուցէ՞ արդեւք ինձ յոյս թողութեան, կամ գթասցի՞ յիս ակն տեսողին ամենայնի, կամ թէ արասցէ՞ մոռացումն այնքանոյ կամաւորի անօրէնութեան գործոյ. կամ լինիցի՞ տեղի աղաղակի իմոյ առաջի մարդասիրին յորժամ շնորհիցի ինձ առ նա դառնալ. եթէ ո՞չ զայրասցի ի վերայ այնր՝ զի յետ բազում անգամ գտանել առ ի նմանէ ողորմութիւն և քաւութիւն, ոչ խորշեցայ ի չարեաց: Զարհուրեալ եմ և երկնչիմ զմտաւ ածելով զմեղացն բազմութիւն և զծանրութիւն. գիտեմ զի մեծ է ողորմութեամբ, այլ անհնազանդութեան իմոյ յանդգնութիւն զանգիտեցուցանէ զհոգւոյս գիտակցութիւն: Հաւատամ զի չիք սահման և չափ գթութեան նորա անճառելոյ. բայց վասն զի ոչ դոյզն մի ապաշխարեցի, մղձկիմ յերկեւղէ անաչառութեանն: Աւաղ կարդամ անձին իմոյ հանապազ, սակայն ոչ դադարիմ խորհել և գործել զաւաղականսն, զեղկութեան արժանաւորսն. զղջանամ մտօք խուն մի որքան և ոչ վարկանելի, այլ զերկայնութիւն աւուրցն ժամանակաց ծախեցի և ծախեմ յունայնութեան և չարութեան վաստակս, նախատեմ զանձն յաղագս աղտեղութեան և տգեղութեան, և դառնամ շաղախեմ զնա տղմով մեղաց. առաւել քան որչափն էր՝ զմտաւ ածեմ թէ

գործերը. կամ կլինի՞ աղաղակիս տեղ մարդասերի առջև, երբ ինձ շնորհվի նրա մոտ դառնալ. կամ թե չզայրանա այն բանի համար, որ բազում անգամ նրանից ողորմություն և քավություն գտնելուց հետո չխորշեցի չարիքից: Զարհուրած եմ և վախենում եմ՝ հիշելով մեղքերիս բազմությունն ու ծանրությունը. գիտեմ, որ մեծ է ողորմությամբ, բայց իմ անհնազանդության հանդգնությունը վախեցնում է հոգուս գիտակցությունը: Հավատում եմ, որ չափ ու սահման չկա նրա անճառելի գթությանը, բայց քանի որ բնավ չապաշխարեցի, փղձկում եմ անաչառության երկյուղից: Մշտապես ավաղ եմ ասում իմ անձին, բայց չեմ դադարում մտածել և գործել եղկության արժանի ավաղելի բաներ. մտքով զղջում եմ փոքր-ինչ, որքան ընդունելի չէ, այլ օրերի երկար ժամանակը ծախսեցի և գործադրում եմ ունայնության և չարության ջանքեր, ինձ նախատում եմ աղտեղության և տգիտության համար և դառնում շաղախում եմ այն մեղքի տիղմով, ավելի քան չափն էր՝ մտածում եմ, որ անհուն է Աստծու բարերարության խորությունը, և չարտասվեցի նրա առջև մասնակից դարձնելու և ինձ, կասկածում եմ այն օրը երեսս թեքել. գոչում եմ հայտնապես, թե այսպես սիրեց Աստված աշխարհս, մինչև իր

անհուն են խորք բարերարութեանն Աստուծոյ. և զի ոչ արտասուեցի առաջի նորա մասնաւորիլ և ինձ, կասկածեմ յայնմ աւուր դարձուցանել յերեսս. գոչեմ յայտնապէս եթէ այսպէս սիրեաց Աստուած զաշխարհս մինչեւ տալ զՈրդին իւր միածին: Բայց վասն զի անարժան երախտեացն վարեցայ կենօք, յիշեմ զչարչարանս բանին Աստուծոյ մարմնացելոյ յաղագս մարդկան օգտի. բայց զի վերջացեալ ամենեւին գտայ ի խաչակիրն լինելոյ հրամանաց՝ որք ընդ շաւիղս նորա ախորժեն գնալ, անյոյս ի փրկութենէ լինիմ գեհենոյն: Սակայն ապաստան եղեալ յանպատմելի նորա գթութիւնն, թէպէտ և մեղանչել հանապազ ոչ դադարեմ, և ոչ զողորմութիւնն խնդրել լռեցից. խոստովան լինել նմա զյանցանացն բազմութիւն, որ տայ ամենայնի առատապէս և ոչ նախատէ. որում պատիւ և փառք յաւիտեանս. ամէն:

Միածին Որդուն տվեց: Բայց քանի որ երախտիքին անարժան կյանք վարեցի, հիշում եմ մարդկանց օգուտի համար մարմնացած Աստծու Բանի չարչարանքը: Բայց որովհետև բոլորովին վերջացած եղա խաչակիր լինելու հրամաններից, որոնք ախորժում են նրա շավիղներով ընթանալը, անհույս եմ լինում՝ գեհենից փրկվելու: Սակայն ապաստանելով նրա անպատմելի գթությանը՝ թեպետ և չեմ դադարում հանապազ մեղանչել, [բայց] և չեմ դադարում ողորմություն խնդրել, խոստովանել հանցանքներիս բազմությունը նրան, որ տալիս է բոլորին առատորեն և չի նախատում, նրան պատիվ և փառք հավիտյանս. ամեն:

ԻԲ.
ԲԱՆՔ ՄԱՂԹԱՆԱՑ ԱՌ ՍՈՒՐԲ ԿՈՅՍՆ ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

ԾՆՈՒՆԴ երկրածնին, և ծնօղ զամենասեան ծնօղի. կուսութեամբ մայր, և մայր գոլով՝ կոյս ըստ ճշմարտութեան. երկոքումբք մի այսոքիւք և եղեալ անուանեալ. գործոյ հրաշափառագունի սկիզբն և կամ կատարած, ըստ որում է իրին անշուշտ վկայութիւն: Բնութեանս պտուղ սքանչելի, և արմատ նորընծայ, և յոքնազան առաքինութեամբ՝ մի և միայնակ ի բազմութեան. յոլով բնութեամբ առանձնացեալ, և ի բազմութեան մի՛ տեսեալ, և իմացեալ հասարակ և որիշ. զատուցեալ և ոչ մեկուսեալ. մին աստուածային նորագործութեամբ, և միւսն հաղորդութեամբ ընտանեգունի բնութեան. շաղկապ՝ որոց անբաւ է մեկուսութիւն. անխառնելի բնութեանց խառնումն. անբաւելոյն բովանդակութիւն, և պարագրութիւն անպարագրականի էութեան. սկիզբն անսկսմանն, և անժամանակէին սահման ժամանակական. բերողին զամենայն բերող ի քեզ՝ նորին բաւականագործութեամբ: Հայեաց քա՛ղցր ի բնութիւնս՝ յորմէ ընտրեցար միայն լինել գերագոյն քան զբովանդակ զարմատս, և զշառաւե-

ԻԲ.
ՄԱՂԹԱՆՔԻ ԽՈՍՔ ՍՈՒՐԲ ԿՈՒՅՍ ՄԱՐԻԱՄ ԱՍՏՎԱԾԱԾՆԻՆ

Երկրածին ծնունդ և ծնող բոլորին ծնողի, մայր կուսությամբ, և լինելով մայր՝ կույս ճշմարտապես: Այս երկուսով մեկ եղած համարվեց. ամենահրաշափառ գործի սկիզբ և կամ վերջ, որին անկասկած վկայություն կա: Բնությանս սքանչելի պտուղ և նորընծա արմատ և բազմազան առաքինությամբ՝ շատերի մեջ մեկ և միայնակ, առավել բնությամբ առանձնացած և բազմության մեջ չտեսնված, իմացված միասին և մեկուսի, զատված, բայց չմեկուսացած, մեկն՝ աստվածային նորագործությամբ, իսկ մյուսը՝ շատ ընտանի բնության հաղորդությամբ շաղկապ: Նրանց մեկուսացումը անսահման է, անխառնելի բնությունների խառնումն. անբավելիի բովանդակում, անպարագրելի էության պարագրություն. անսկսման սկիզբ և անժամանակյայի ժամանակի սահման. ամեն ինչ բերողին քեզ բերող՝ նույն առատությամբ:

Քա՛ղցր, նայիր բնությանս՝ որից ընտրվեցիր միակը լինելու՝ գերագույն, քան բոլոր

ղեալս անդուստ. ոչ ումեք ի միջնոց զուգադասակաև ունելով պատիւ և փառս մեծութեանն. և քան զորս զկնի՝ թէ և դէպ լինիցի երեւել սքանչելի, որ չափաւորապէս եւս անդր բնաւից նմին հաղորդեցելոց բնութեան: Գթա որպէս մայր մեծին ողորմութեամբ, որ զՀօրն ունի խնամասիրութիւն և բարեգթութիւն. նմանեա խոնարհութեան նորա յաղագս տարագրելոց ի բարութենէ ազգի մարդկան ժողովրդոց. մի՛ անտես առներ զաղաչողս սրբոյ և մշնջենաւորի կուսութեան քո, որպէս մօր Աստուծոյ ի ձեռն բարեխօսութեան, և ընդունելի քոց պաղատանաց առ նոյն ինքն Երրորդութիւնն սուրբ: Կանգնեսցես զգլորումն մեր, ուղիղ արասցես զշաւեղս ոտից մերոց ի ճանապարհ արքունի. զմոլորութիւն մեր դարձուսցես գեղեցիկ և քաղցր գաւազանաւ հովուութեան Որդւոյ քո միածնի. գազանք ապականիչք հեռասցին ի հօտէ նորա. մի՛ կոուեսցին վէրք և որոտմունք չարութեան ի խաշինս արօտի նորա. իսկ ըմբռնմունք որսորդին և պարաւանդք որսացելոցն ի նմանէ քակտեսցին արագ արագ. միջնորդութեամբ աղօթից քոց գազանաբեկն բժշկեսցի. փութանակի յաղագս քո գտցի կորուսեալն. ախտաժետն բազմատեսակ հիւանդութեամբ և վիրօք՝ ապաքինեսցի. խաւար ոգւոց մերոց փախիցէ. աչք մեր տեսցեն համարձակապէս զամենալոյս ճառագայթս զառ ի քէն

արմատները և այնտեղից շառավիղվածները. միջիններից ոչ ոք չունի զուգահավասար մեծության փառք. և ոչ հետնորդները՝ թեպետ դիպվածով սքանչելի երևան, որ չափապես ևս ավելի է բոլորի՝ նրան հաղորդվածների բնությունից: Ողորմությամբ գթա որպես մեծի մայրը, որ ունի Հոր խնամքն ու գթասրտությունը. նմանվիր նրա խոնարհությանը ազգ ու ցեղերի բարությունից օտարացած մարդկանց. մի՛ անտեսիր քո սուրբ ու մշտնջենական կուսության աղաչողիս, որպես Աստծու մոր, բարեխոսությամբ, և ընդունելի լինեն քո պաղատանքները նույն ինքը սուրբ Երրորդությանը:

Դադարեցնես մեր գլորումը, ուղիղ անես մեր ոտքերի շավիղները արքունի ճանապարհին. մեր մոլորությունը դարձնես գեղեցիկ և քաղցր՝ քո Միածին Որդու հովվական գավազանով. ապականիչ գազանները հեռանան նրա հոտից. չարության վերք ու որոտմունք չլինեն նրա արոտի ոչխարներին, իսկ որսացողի բռնումները և որսացվածների սանձերը նրանից քանդվեն արագորեն. քո աղոթքների միջնորդությամբ գազանից խփվածը բժշկվի. շտապ քո շնորհիվ գտնվի կորածը. բազմատեսակ հիվանդությամբ ու վերքերով ախտահարվածը ապաքինվի. մեր ոգիների խավարը փախչի. մեր աչքերը տեսնեն համարձակապես

մարմնացելոյ Բանին: Խրատ ողորմութեան նորա զխլութիւն ականջաց մերոց իմանալեաց բժշկեսցէ. և յայտնի զգայարանաց մերոց անպահպանութիւն՝ ընդ որ մտանէ մահ հանապազ յոգիս մեր, և յերկիր մարմնոյ մերոյ՝ փակեալ կնքեսցի: Աղաչեսցես նահանջել արուեստիւ զօրութեան իւրոյ զանկարգ ընթացից մերոց յանդգնութիւն. զի մի՛ արտաքոյ բարեբախտիկ ասպարիսին խայտալով՝ ըստ օրինի ամեհեաց և խստերախաց վզանուտ այնոցիկ կենդանեաց լինիցիմք պախավէժք. յորս առաւել քան զամենեսեան զանձին իմոյ անկրթութիւն ըստ կամակորութեան տեսանեմ բերեալ անպատեհապէս. սակայն ի քո յուսալով մարդասիրական և անդառնալի աղօթդ առ Միածինն քո, եթէ միայն կամեսցիս, փրկութեան հանդիպել ոչ երկբայանամ: Գթասցիս ի վշտագին անձին իմոյ տարակուսանս. մի՛ դարձուցաներ զերեսս քո յերկրպագութենէ իմմէ առաջի քո. և մի՛ վասն գարշագործութեան իմոյ զայրացեալ արձակեսցես ունայնաձեռն զիս: Ի լալ մատուցեալ եմ առաջի քո սրբուհիդ. ողբոց իմոց և հառաչանաց բան՝ լսելի եղիցին յամենամաքուր ականջս քո. ընծայեսցես քեւ յանձնէ քումմէ որդւոյ քում, և առցես ինձ պարգեւս թողութեան. քանզի և նա իսկ բնաւին ոչ կամի զմահ մեղաւորին, որպէս զդառնալն և զկեալ. և քեզ տուեալ է իշխանութիւն

քեզնից մարմնացած Բանի լուսաշող ճառագայթները: Նրա ողորմության խրատը բժշկի մեր ականջների խլությունը, և հայտնվի անպաշտպանությունը մեր զգայարանների, որոնցով մշտապես մտնում է մահը մեր հոգիները և մեր մարմնի երկրի վրա փակվի ու կնքվի: Աղաչիր՝ նրա զորության հնարքով նահանջի մեր անկարգ ընթացքի հանդգնությունը, որ բարեբաստիկ ասպարեզից դուրս չխայտա՝ ըստ ամեհի, խստերախ և գոռոզ այն կենդանիների օրենքի՝ կործանվենք, ուր բոլորից ավելի իմ անձի անկրթությունը տեսնում եմ, ըստ կամակորության, անպատեհ կերպով բերված, սակայն հուսալով քո մարդասիրական և անդառնալի աղոթքին առ Միածինդ, եթե միայն կամենաս, չեմ երկբայում, կհասնեմ փրկության: Գթա իմ վշտագին անձի տարակուսանքին, մի՛ դարձնի երեսդ՝ քո առջև իմ երկրպագությունից. և իմ գարշահոտության համար զայրացած ինձ դատարկաձեռն մի՛ արձակիր:

Մոտեցել եմ քեզ լալու, սրբուհի՛, իմ ողբերի ու հառաչանքների խոսքը լսելի լինի քո ամենամաքուր ականջներին. քո կողմից հանձնարարիր քո Որդուն և ինձ թողության պարգևներ արա. քանզի հենց նա՛ մեղավորի մահը բնավ չի ուզում, ինչպես դարձն ու մնալը. և

կեցուցանել միջնորդութեամբ աղօթից զդարձեալս՝ որպէս ծնողի զԱստուած: Յիշեա զպատճառ խոնարհութեան նորա, յիշեա վասն որոյ եղեր և կոչեցար մայր անեղանելի բնութեանն. զոր լուարն իսկ յաւետարանչէ անտի քումմէ ի սպասաւորէ Աստուծոյ սրբոյ Գաբրիէլէ. Նա փրկեսցէ զժողովուրդ իւր ի մեղաց իւրոց. եթէ նա՝ զի փրկեալք լիցուք մարդիկ ընդ մեղօք գրաւեալք և դատապարտեալք՝ հաճեցաւ լինել մարդ առ ի քէն, հաղորդ փրկութեան այնպիսւոյ ամենասուրբդ՝ մի թէ ո՞չ եղիցես լինել, եթէ ոչ վասն մեր, սակայն վասն նորա: Եւ եթէ այս մաղթանք դուզնաքեայք և տարաժամանք ոչ հաւանեցուսցեն զքեզ գթածդ, խոնարհումն նորա հաւանեցուսցէ. աղքատութիւն մեծատանն որ վասն մեր, ամենամեծին փոքրկութիւն. նուաստութիւնն գերագոյին. լիոյն և ամենակատարին ըստ բնութեանն թափումն. և գլուխ ամենայնի՝ անչարչարելոյն չարչարանք, և մահ անմահին ըստ էութեան: Ոչ փոքր ինչ է այս պատճառ իրաց առ ի հաւանեցուցանել զհեզութիւն քաղցրութեան քո. պատկառելի է քան զամենայն դիմաց պատուականութիւն, և իմանալի եւս բնութեանն վերնոյ հրեշտակականի յոյժ ակնածելի: Ոչ զանձանօթէ քեզ խորհրդոյ կամ զիրաւորութենէ ինչ անգիտելոյ յանդգնաբար կամիմք լինել տեղեկացուցիչք . այլ զորոց

քեզ՝ որպես Աստծու ծնողի, կարողություն է տրված աղոթքի միջնորդությամբ ապրեցնելու դարձածներին: Հիշիր նրա խոնարհության պատճառը, որի համար, հիշիր, եղար և կոչվեցիր անեղանելի բնության մայր, որ լսեցիր իսկ քեզ ավետող Աստծու սպասավոր սուրբ Գաբրիելից: Իր ժողովրդին Նա կփրկի մեղքերից. եթե նա հաճեց լինել մարդ քեզանից, որպեսզի փրկվենք մեղքի տակ ընկած և դատապարտված մարդիկս: Ամենասուրբդ, մի՞թե այնպիսի փրկության հաղորդ չես լինելու, եթե ոչ մեզ, գոնե նրա համար: Եվ եթե այս աննշան և տարաժաման մաղթանքը չի հաճեցնի քեզ, գթածիդ, կհաճեցնի նրա խոնարհումը. մեծատան աղքատանալը, որ մեզ համար էր, ամենամեծի փոքրությունը. գերագույնի նվաստությունը. լիի և ամենակատարի, ըստ բնության, թափվելը. և ամեն ինչից վեր՝ անչարչարելիի չարչարանքը, և անմահի մահն ըստ էության: Սա փոքր պատճառ չէ հաճեցնելու քո քաղցրության հեզությունը. պատկառելի է, քան բոլոր դեմքերի պատվականությունը, նաև իմանալի է հույժ ակնածելի վերին հրեշտակների բնությունը: Հանդգնաբար կամենում ենք տեղեկացնող լինել քեզ ոչ անծանոթ խորհրդից կամ անիմանալի իրողությունից, այլ որոնց սիրում ես ավելի, քան

սիրեսն ի վեր քան զբան, և որ քեզն է նախածանօթագոյն քան զամենայն ումեք ի նա հաւատացելոց, ժտելով երկրորդիչք լինել համարձակիմք. որպէս զի հարկաւորեալ ի մեծութենէ անտի՝ որ սկսաւն ի քէն՝ սքանչելոյ և անհասականի, խոնարհեսցիս առ նովաւ առնուլ յանձն զաղաչանաց մերոց խնդրուածս:

Նեղութիւնք և վիշտք և տառապանք գտին զիս, ոչ տան պատահել ինձ հանգստեան երբէք. պատեցան զինեւ երկունք մահու, քանզի որսալ զիս մարդասպանն ի սկզբանէ ոչ դադարէ. կազմեաց ոտից իմոց որոգայթս մահաբերս, և ըմբռնեաց զիս թակարդօք անօրէնութեանն. հեղձոյց ի գբի մեղաց զկեանս իմ. ած խաւար ի վերայ երեսաց իմոց. զխորամանկութեան իւրոյ ետս մուխս տեղեաց յիս զօր ամենայն. զերիկամունս անձին իմոյ և սիրտ պատճառ բարւոք կելոյ՝ խոցոտեաց յանխնայ. կոխեաց զիս որպէս զկաւ գոեհաց. զարիւն կենդանութեան իմոյ քամեաց գործակցութեամբ իմով. ի տղմի անօրէնութեան թաթաւել զիս հանապազ և կոխել առ ոտս ոչ յագեցաւ. թաղեցայ ընկղմեցայ՝ և ոչ եւս երեւիմ. եղեւ բաժին իմ խաւար, և ժառանգութիւն իմ կարուստ յաւիտենական. օտարացայ ստուգապէս ի յուսոյ փրկութեան. էանց ժամանակ փրկութեան և ոչ գիտացի. հնարից կելուրք վախճանեցաւ. ոչ է զօրութիւն

բանը, և որ քեզ նախապես ավելի ծանոթ է, քան նրան հավատացող բոլորին, համարձակվում ենք թախանձանքով երկրորդող լինել, որպեսզի հարկադրված սքանչելի և անհաս մեծությունից, որ սկսվեց քեզնից, խոնարհվես՝ հանձն առնելու նրան ուղղված մեր աղաչանքները:

Նեղությունները, վշտերը և տառապանքները գտան ինձ, երբեք ինձ հանգիստ չեն տալիս, ինձ մահվան երկունքը պաշարեց, քանի որ մարդասպանը սկզբից ևեթ չի դադարում ինձ որսալ, իմ ոտքերին մահաբեր որոգայթներ դրեց և ինձ բռնեց անօրինության թակարդով. մեղքի գուբի մեջ խեղդեց իմ կյանքը. խավար իջեցրեց իմ երեսին. ամեն օր ինձ վրա տեղացին նրա խորամանկության նետերը. անխնա խոցոտեց իմ երիկամները և բարվոք մնալու պատճառ սիրտս. կոխկռտեց անխնա. ճմռեց ինձ որպես փողոցի կավ. իմ կենդանության արյունը քամեց իմ գործակցությամբ. չհագեցավ մշտապես ինձ անօրինության տիղմի մեջ ընկղմվելով և ոտնակոխ անելով. թաղվեցի, ընկղմվեցի և չեմ երևում. խավարն եղավ իմ բաժինը, և իմ ժառանգությունը հավիտենական կորուստն է. ստուգապես օտարացա փրկության հույսից. փրկության ժամանակն անցավ, և չիմացա. անցան

յիս, և ոչ իմաստութիւն խորհել և գործել՝ որով տուեալ լինի կեանք. ամենայն ուստեք առաւելան ինձ տարակուսանք. սպառեցաւ ակնկալութիւն լուսոյ փրկութեան իմոյ. այլ և ամօթ երեսաց իմոց ծածկեաց զիս յաղագս գործոց՝ արժանեաց ամօթոյ և պատկառանաց. վարկանիմ փակեալ ինձ զդրունս մարդասիրութեանն Աստուծոյ. եթէ մտից բախելով, կարծեմ աղխեալ և պնդեալ ի վերայ իմ միայն զայնպիսոյ ընդարձակութեան մուտ. յանձն իմ տարակուսիմ վարանեալ, և ելս ինչ անհնարին այսր վտանգաւորութեան ոչ կարեմ իմանալ կամ գտանել. քանզի թէ ես ինձէն եղէ մատնիչ անձին, ո՞ ինձ ողորմեսցի. և եթէ մատնեցի ախորժելով զիս ինքն ի կորուստ, ո՞ գթասցի խնդրել և գտանել զիս. այլ գիտեմ զի դիւրին և հնարաւոր քեզ այսպիսի անլուծանելոյ կապանաց լուծումն:

Մայր Աստուծոյ Մարիամ կոյս սուրբ, փրկութիւնասէր ամենեցուն, ազատարար, հաշտեցուցիչ Աստուծոյ, քաղցր առ ամենայն մեղաւորս, գտիչ անձանց կորուսելոց, քաջայօժար ի մաղթանս վասն կենաց՝ մեռելոց Աստուծոյ, կարկառ զամենասուրբ ձեռն քո. ձգեա զիս ի փրկութիւն աստուածընկալ խնդրուացովք սրբութեան քո. ի խոշտանկեալ վտանգէ աստի և ի տարակուսանաց զերծո զիս. քաղցրացո զաղաչանս յականջս

հնարավորության օրերը, և ուժ չունեմ և ոչ իմաստություն՝ խորհելու և գործելու, որով կյանք է տրվում. ամեն տեղից ավելացավ ինձ տարակուսանք. սպառվեց իմ փրկության լույսի ակնկալությունը. այլև երեսիս ամոթը ծածկեց ինձ նախատինքի և պատկառանքի արժանի գործերի համար. իմ առջև փակված եմ համարում Աստծու մարդասիրության դռները. եթե բախելով մտնեմ, կարծում եմ միայն ինձ համար է կողպած ու պնդած այնպիսի ընդարձակ մուտքը. վարանելով տարակուսում եմ իմ մեջ. այս անհնարին վտանգավորությունից ելք իմանալ կամ գտնել չեմ կարող, քանի որ ես ինքս մատնիչ եղա ինձ, ո՞վ կողորմի ինձ, և եթե ես ինձ կորստյան մատնեցի ախորժելով, ո՞վ կգթա՝ փնտրելու և գտնելու ինձ: Բայց գիտեմ, որ այսպիսի անլուծանելի կապանք քանդելը դյուրին և հնարավոր է քեզ:

Աստծու մայր սուրբ կույս Մարիամ, փրկութենասեր, բոլորի ազատարար, Աստծու հետ հաշտեցնող, քաղցր բոլոր մեղավորների հանդեպ, կորածներին գտնող, քաջահոժար՝ Աստծու մեռյալների կյանքի համար մաղթելու, մեկնիր քո ամենասուրբ ձեռքը, քո սրբության աստվածընկալ խնդրանքներով ինձ փրկության տար. այս խոշտանգիչ վտանգից ու տարակուսանքից ազատիր ինձ. իմ թշվա-

միածնի Որդւոյ քո վասն թշուառական անձին իմոյ. հաշտեցո զբարերար և զմարդասէր Հայր նորա ընդ բարկացուցանողի զնա՝ կորստականի անձին իմոյ. զողորմած և քաղցր զամենասուրբ Հոգի նորա ցածո ի ցասմանէ դառնացուցանողի զնա վարուց իմոց դժնդակութեամբ և դառնութեամբ. զտոռուն մեղաց իմոց խզեա խնդրուածովք առաջի աստուածութեան սրբոյ Երրորդութեանն, անցուցանել յինէն զդատաստան մահու յաւիտենականի, զոր ետու ես ինքնին ձեռնագրել ի վերայ իմ: Աղաչեա սրբուհիդ, լեր ինձ պատճառ փրկութեան և ազատութեան. տուր ինձ կեանս յԱստուծոյ, զի մի՛ մեռայց, և ննջեցից զմշտնջենաւորն մահ և ննջումն. այլ ընդ կենդանիսն յաւիտենից՝ Աստուծոյ կենդանւոյ և ճշմարտի ողորմութեամբ անոխակալութեան նորա և գթութեան արժանի եղէց տալ նմա օրհնութիւն և պատիւ զոր ունին այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ական անձի համար քաղցրացրու աղաչանքը քո Միածին Որդու ականջին, նրա բարերար ու մարդասեր Հորը հաշտեցրու նրան բարկացնողի՝ իմ կորստական անձի հետ, նրա ողորմած և քաղցր ամենասուրբ Հոգին իջեցրու ցասումից Նրան դառնությամբ ու դաժանությամբ զայրացնող իմ վարքի [նկատմամբ], իմ մեղքի ուռկանը խզիր՝ աստվածային սուրբ Երրորդությանը խնդրելով հեռացնելու ինձնից հավիտենական մահու դատաստանը, որ ես [պատճառ] տվի ինձ վրա գրելու: Աղաչիր, սրբուհի, ինձ փրկության ու ազատության պատճառ եղիր, ինձ կյանք տուր Աստծուց, որ չմեռնեմ ու ննջեմ մշտնջենական մահով ու նինջով, այլ հավերժ ողջերի հետ՝ կենդանի և ճշմարիտ Աստծու ողորմությամբ, նրա անոխակալությանն ու գթասրտությանն արժանի լինեմ՝ նրան տալու օրհնություն և պատիվ, որ ունի այժմ և միշտ, հավիտյանս հավիտենից. ամեն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խոսք Աստծո երանելի այր Հովհաննես
Սարկավագի մասին 5

Սարկաւագայ վարդապետի Աղօթք

Ա. Առ Աստուած Հայր 14
Բ. Աղօթք զղջման առ Հայր 28
Գ. Աղօթք ի դէմս մանկանց
առ Հայր Աստուած 38
Դ. Աղօթք առ Քրիստս Յիսուս 46
Ե. Աղօթք առ Քրիստս Յիսուս.....60
Զ. Աղօթք ընդդէմ Հոգւոյն հայհոյութեան.....70
Է. Աղօթք առ Հոգին Սուրբ.....78
Ը. Աղօթք առ Սուրբ Երրորդութիւն.....86
Թ. Աղօթք առ Սուրբ Երրորդութիւն.....90
Ժ. Աղօթք առ Որդին 98
ԺԱ. Աղօթք առ Որդին 104
ԺԲ. Աղօթք առ Որդին.....110
ԺԳ. Աղօթք առ Որդին 116
ԺԴ. Աղօթք առ Որդին 120
ԺԵ. Աղօթք առ Որդին.....130

ԺԶ. Աղօթք պանդխտի 142
ԺԷ. Առ Աստուած Հայր 154
ԺԸ. Ողբք.....156
ԺԹ. Աղօթք առ Որդին.....166
Ի. Աղօթք առ Որդին 172
ԻԱ. Առ Աստուած Հայր 184
ԻԲ. Բանք մաղթանաց
առ սուրբ կոյսն Մարիամ.....204

Բովանդակություն.....218

Թարգմանությունը՝
Ա. Մաղոյանի

Հրատ. խմբագիր՝ Ասողիկ եպիսկոպոս
Գեղ. խմբագիր՝ Ղևոնդ քահանա
Սրբագրիչ՝ Ս. Բուլաթյան